

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա Գ Ի Բ

№ 6 1890

ՅՈՒՆԻՍ

1890 № 6

ԵՐԿՐՈՒԹ ՏԱՐԻ

ԿՐԵԱ

		ԿՐԵԱ
1	ԱՐԱՍԻՐԱՆԵԱՆՑ ԱՐԵՏԻՔ . . .	783
2	ԼՐԵԳՁԵԱԼՈՒՐ՝ ԱՐԺԻՒԵԱՆ . . .	796
3	ՄԵՐՄԵՍԵԱՆ, Մ.	797
4	ՊՈՒՇՎԻՆ-ԻՐ՝ ԱՐՑՈՒԵԱՆԻ. Ի. .	825
5	ԿՐԱԽԵՎԱՆԻՎԵԱՆ, Կ.	827
6	"	828
7	ՊԻՇԵԱՆՑ ՓԵՐԱ	829
8	ՄԵՐՄԵՍԵԱՆՑ ԱՐԵԱԼՈՅՈ. . . .	858
9	"	860
10	Ա. Ա.	861
11	ՏԵՐ-ՄԵՐՔԵԼԱՆ ԱՐԵԱԿ. . . .	873
12	Ա. ՔՀ., Լ. Ա.	882
13	ԼՈՒԽԵՎ.	890
14	ՏԱՐԱՏԻՐԵՎ. Վ.	903
15	ՄԱԳԱՎԵԱՆ ԵՎ.ԵԾ.	910
16	ԻՄԻ.	915

ՅԱՅԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԹԻՖԼԻՍ

Ա. Գ. Ա-ՕՏԻԵՎԱՆՑ ՏԱՐԱԿ

Տպոգրաֆիա Մ. Դ. Ռուսակա, և Գոլ. պրոս. սե. ձ. № 41.

1890

ଶୁଣି ମୁଁ

କାହାରେ ପାରିବାରି

ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 6 1890

ՅՈՒՆԻՍ

1890 № 6

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ԱՅԾԽՆԵԱՆՑԻ
1890

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Июня 1890 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.

ՊԱՆԴԻՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

II

Պանդիտութեան խնդրին նւիրած մեր առաջին յօդւածում¹⁾ մենք աշխատեցինք խնդրի բնաւորութիւնը պարզել, հաստատելով հետևեալ կէտերը.

1. Պանդիտութիւնը պէտք է բաժանել գաղթականութեան խնդրից, մինչդեռ այդ երկու գաղափարները իրար հետ շփոթում էին մեր գրականութեան և հրապարակախօսութեան մէջ:

2. Պանդիտութիւնը հետևեանք է սոցիալական ազատութեան, որ ամեն դասակարգ և ամեն երկրում մարդիկ չեն վայելել:

3. Երաւունքի ազատութեան հետ կապւած լինելով, պանդիտութիւնը սոցիալական և Հանտեսական հանգամանքների ծնունդ է:

4. Պանդիտուների մէջ մենք որոշեցինք ներսի և դրսի պանդուխոններ: Այժմ կ'աւելցենք, որ դրսի պանդիտութիւնը նշան է, որ հայրենի երկիրը բաւականաչափ աշխատանք չի տալիս, մինչդեռ ներսի պանդիտութիւնը ցոյց է տալիս, որ հայրենի գիւղը աշխատանք չի տալիս:

5. Մենք որոշեցինք, Կովկասեան հայերի մէջ, չորս կարգ պանդիտական կեանք վարողներ, և որոնցից առաջին երեք կարգի համար (ուսանողների, արհեստաւորների և վաճառականների) պանդիտական խնդիր չի ծագում այն պատճառով, որ նոցա գործը, գործելու միջոցը և դրութեան վիճակը որոշ են, մինչդեռ, ասացինք մենք, զիւղական-երկրագործ գասակարգի համար խնդիր կայ այն պատճառով, որ պանդիտութիւնը այդ շրջանում համարւում է ար-

¹⁾ Տես «Ամուրձ», 1889 թ., № 11.

զիւնք զիւղական-տնտեսական պայմանների վատութեան և երկրորդ այն պատճառով, որ զիւղացի-երկրագործը սկանդիստութեան մէջ չի շարունակում իւր արհեստը, այլ զեգերում է անտրոշութեան մէջ, հայթհայթելով իւր ապրուսոր պատահական, անհաստատ և քիչ վարձարւող գործերով։ Մենք նկատեցինք նաև, որ զիւղական պանդուխորը կապւած է մնում իւր զիւղի հետ, նա պէտք է վերաբառնաց և որ պանդիստութիւնը մեզանում տնօվ-տեղով չի լինում, այլ անհատներով և այն՝ գրեթէ բացառապէս տղամարդկանց կողմից։

Ահա կարճ բովանդակութիւնը մեր առաջին յօդւածի պանդիստութեան խնդրի մասին, յօդւածի, որը ինըլ մի անալիկ է պանդիստութեան խնդրի։ Անալիզով է սկսում ամեն մի խնդրի ուսումնասիրութիւն։ և ի զուր չէր, որ մենք նոյն յօդւածում յայտնեցինք հետևեալ՝ մեր հոգսը առաջժմ այն է, որ պանդիստութեան խնդրի ուսումնասիրութեան համար հող պատրաստենք։ Իսկ հող պատրաստել չէ ուսումնասիրութեան համար, երբ մամուլը կը գոհանաց միմիայն ողբալով գոյութիւն ունեցող երևոցի մասին, առանց տարրալուծելու երևոցի և առանց քննադատութեան համար նոր հորիզոններ բացելու, որոշելով խնդրի դիրքը տնտեսական և սօցիական կեանքի պայմանների ընդհանրութեան մէջ։

Եւ ահա թէ ինչու մեր առաջին յօդւածը այդ առիթով վերջացրինք այս խօսքերով՝ «այն տեսակէտը, թէ զիւղացին պանդիստութեան է զիմում, որովհետև տգէտ և ֆիմար է, մենք համարում ենք միակողմանի, այդ դատողութիւնը՝ սահմանափակ, դորանից դուրս բերւող եզրակացութիւնը՝ վազաժամ, հետեանքը ապարդիւն, մտքի, դիտողութեան և հետազօտութեան հորիզոնը և ծաւալը նեղացնող, սեղմող։ Ըսդարձակել այդ խնդրին վերաբերեալ տեսակէտները, որոշել այս վերջինները, — կը լինի, ասացինք մենք, պանդիստութեան խնդրին նորած մեր հետևեալ յօդւածի առարկան։

Գիւղական պանդիստութիւնը Անդրկովկաստում յառաջանում է պիսաւորապէս նորանից, որ հայրենի զիւղում ոյժեր աւելի են, քան գործը պահանջում է։ Այդ կարելի է և պէտք է այսպէս հասկանալ, որ հինգ բանւոր ոյժ կան մի այնպիսի ընտանիքում, որի ունեցած

տունը, հողը, այդին, խաշնը և այլն կառավարելու համար բաւական են չորս, երեք կամ երկու հոդի. տասը ոյժ կայ այնտեղ, ուր 9, 8, 7, 6 և աւելի քիչ ոյժեր բաւական են այդ ընտանիքի ամբողջ տնտեսութիւնը հողալու համար։ Եւ երբ գիւղական համայնքը, իւր ամբողջութեամբ առած, բաւականաշափ տնտեսական . ոյժերի պահանջ չ'ունի, որպէս զի մի ընտանիքի աւելորդ ոյժերը կարողանան արդիւնաւէտ գործ ճարելնոյն համայնքի սահմաններում, — այդ ոյժերը գառնում են աւելորդ ոչ միայն իրանց սեպհական բնաւանիքի համար, այլ և առհասարակ ամբողջ համայնքի համար։

Այդ՝ արդէն ոչ միայն իրանց ընտանիքի, այլ համայնքի համար աւելորդ գառնուած ոյժերը իրանց տօիպւած են տեսնում պանդընտութեան դիմելու՝ դէպի քաղաքները, ուր նոքա գառնում են արհեստաւորների և վաճառատների աշակերտներ, եթէ փոքր են, կամ մշակներ, բեռնակիրներ, բանւորներ՝ եթէ նոքա արդէն բաւականի հասակ առածներ են։

Բնական է, որ ներկայ ազգաբնակութեան պահանջների համեմատ եթէ գիւղական կեանքը և տնտեսութիւնը աւելի զարգացած լինէր, — այն մի քանի տասնեակ հազար պանդուխոները, որոնք այսօր քաղաքներում իր պանդուխոներ են ապրում, շահ կ'ունենային մնալ իրանց հայրենի գիւղերում։ բայց մի որոշ ծածանու դիմում են պանդընտութեան, երբ, այդ նպաստուոր պայմանները գոյութիւն չ'ունին իրանց համայնքում։ Եւ որ գլխաւորն է, դէպի պանդիստութիւնը դրգող հիմնաւոր պատճառներից մի քանիսը այնպիսիք են, որ գծւար է շուտով նոցա հեռացնել ասպարիզից։ Յայտնի է, որ Անդրկովկասում առհասարակ սակաւահողութիւն է տիրում, մի քանի գաւառներում անդամ այդ սակաւահողութիւնը հասցրած է ծայրայեղութեան։ Յայտնի է նաև, որ գիւղական մեծ զբաղմունքներից մէկը — այցեգործութիւնը և առհասարակ պարտիզապանութիւնն է տափարակ տեղերում։ Յայտնի է նաև, որ մանաւանդ երկաթուղարքն գծից հեռու տեղերում միրգը զրեթէ վաճառականական գնահատութիւնից զուրս մի արդիւնաբերութիւն է։ Արդ, եթէ այսօր մի որ և է համայնքում հողը սակաւ է, ուրեմն այդ հողը իւր մշակութեան համար չի պահանջում գիւղում եղած բոլոր ոյժերը, իսկ միւս կողմից այցեգործութիւնը և պարտիզապանութիւնը թէ սահ-

մանափակ է և թէ քիչ արդիւնաւէտ, — մի կամ մի քանի տարում այդ պայմանները կամ անհնարին է և կամ դժւար է փոխել:

Սակաւահողութեան չարիքի դէմն կարելի է առնել կամ նոր հողեր տալով ազգաբնակութեան կամ ջրանցքներ անցկացնելով, ուր դորա մէջ կարօտութիւն է զգացւում և կամ, վերջապէս, ցայժմ մշակող բոյսերի տեղ՝ մշակելով մի աւելի արդիւնաւէտ բոյս: Յրինակ, որպէս այժմ տարածւում է բամբակի մշակութիւնը՝ ի հաշիւ ցորենի, գարու կամ բրնձի մշակութեան թէ Երևաննեան նահանգում և թէ մի քանի ուրիշ տեղերում: Բայց կարելի է և խելացի է արդեօք յուսալ, որ սակաւահողութեան չարիքների դէմն առնելու այդ բոլոր երեք տեսակ միջոցները մի քանի տարիներում կը գործադրւեն այն չափով, որ մեր բոլոր զիւղական համայնքները միանգաման կարօտութիւն զգան իրանց բոլոր առձեռն եղած արական թէ իգական անձերի ոյժերի մէջ և պահանջեն նոցաներկայութիւնը իրանց ծննդավայրերում: Ոչ պէտք է աշխատել ամեն միջոցներով, որ մեր զիւղական համայնքները, զարգացնելով իրանց տնտեսական կեանքը, միշտ աւելի ուշ աւելի մշակ ձեռքերի կարօտութիւն զգան, բայց պանդիստութեան հետ կապւած բոլոր ինդիրները կապել այդ յոյսերի հետ—այդ չը պէտք է, որովհետեւ նաև ապագայում, աւելի զարգացած տնտեսական պայմանների մէջն անգամ ոչ ոք չի կարող երաշխաւորել, թէ համայնքի համար աւելորդ ոյժեր չը պիտի գոյութիւն ունենան: Ազգաբնակութիւնը աճելու ընդունակութիւն եթէ չ'ունենար, ինդիրը ինքն ըստ ինքեան կը լուծեր. բայց որքան տնտեսական կեանքը զարգանալու ընդունակութիւնն ունի, նոյնքան և աւելի՝ ազգաբնակութիւնը աճելու ընդունակութիւնն ունի, այնպէս որ ոչ մի համայնք չի կարող ապահով կերպով յուսալ, թէ զարգացնելով իւր տնտեսական կեանքը՝ նա կարող է իւր բոլոր անդամներին ապահով և բաւարար ապրուստ տալ: Ահա ձեզ մի համայնք 500 տուն 3000 հոգով, որոնցից 1500 աշխատաւոր բնակիչներով: Այժմ այդ համայնքի աշխատութիւնների համար աւելորդ են 100 հոգի, որոնք և պանդիստութեան են զիմում: Թող այդ համայնքի անտեսականը ժամանակով այնքան զարգանայ, որ նրան հարկաւորւեն ոչ թէ 1400, այլ 2000 հոգի: Եթէ աշխատաւոր անձերի թիւը նոյն ժամանակամիջոցում աճի մինչ 2200 հոգի, բնա-

կան է, որ այդ՝ տնտեսապէս աւելի լաւ ապագայում նոյն այդ համայնքի համար աւելորդ ոյժեր կը լինեն ոչ թէ 100, այլ զեռ 200 հոգի, որոնք կը գիմեն՝ պանդխառութեան բոլորովին այնպէս, ինչպէս այժմ զիմեցին պանդխառութեան ենթադրական 100 հոգին։ Զը պէտք է մոռանալ, որ մարդու աշխատելու ընդունակութիւնը բաւականի առաձգական է, այնպէս որ նոյն այժմեայ գիւղական ոյժերը կարող են շատ աւելի գործ կատարել, քան այժմ՝ նոքա կատարում են, միայն թէ լինի գործ կատարելու։

Այդ բացարութիւնից հենց այժմ բղիսում է մի հետևանք, որ մենք շատ և շատ կարենոր ենք համարում նոյն այս տեղում արծանագրել։ Այդ այն է, որ ի գուր կը լինէր պանդխառութեան խնդիրը անքակտելի կերպով կապել գիւղական կեանքի զարգացման խնդրի հետ, որի հետ առաջինը ունի շփման կէտեր, բայց որից նա չ'ունի կատարեալ կախում։ Խսկ երկրորդ՝ երկրի, մասնաւորապէս մեր գիւղական համայնքների տնտեսական կեանքի զարգացման խնդիրը շատ և շատ աւելի բարձր և աւելի կարեւոր խնդիր է, որպէս զի կարելի և անգամ ցանկալի լինէր նորան կապել պանդխառութեան խնդրի հետ։ Մեզ հարկաւոր է գիւղական կեանքի զարգացումը ոչ թէ նորա համար, որ քաղաքներում դեգերող պանդուխաները իրանց հայրենիքում մնային, այլ ցանկալի է և հարկաւոր այդ զարգացումը նաև անկախ դորանից, այսինքն եթէ վերջ ի վերջոյ թէկուզ մենք երկու-երեք անդամ աւելի պանդուխաներ ունենայինք, քան այժմ ունինք։ Ահա երկու գրութիւններ, որոնցից առաջինը թող ներկացնի այժմեայ վիճակը, միւսը՝ մօտիկ ապագան։

Գիւղական Գիւղական

ազգաբնակութիւն	աշխատանք	Պանդուխաներ
Այժմ 1.000.000 հոգի	970.000 հոգի	30.000 հ.
Ապագայում . . 1.500.000 »	1.410.000 »	90.000 հ.

Զարգացնելով տնտեսական կեանքը, մենք այսպիսով միմիայն գիւղական աշխատանքով ապահովացնում ենք 560.000 հոգու չափ աւելի քան այժմ, տալով պանդուխաներ 60.000 հոգու չափ աւելի քան այժմ պանդուխաներ ունինք։ Առանց պանդխառութիւնը, իբր երեսթ, ոչնչացնելու, մենք ունինք 560.000 հոգի մշտակեաց և ապահով գիւղական հասարակութեան նոր անդամներ, —ահա ինչին

կարող է ծառայել տնտեսական պայմանների բարւոքումը. և ոչ թէ մենք ձգտեցինք այդ բոլոր բարւոքումները մտցնել երկի մէջ միմիայն նորա համար, որ այժմեայ ենթադրական 30.000 հոգի պանդուխուները կարողանան իրանց տանը մնալ: Խոկ թէ ինչ զին ենք տալիս մենք ժողովրդի այդ աճմանը, ուրիշն թէ ինչ զին մենք տալիս ենք այն բոլոր պայմաններին, որոնք պէտք է ապահովացնեն նոցա վիճակը, դորա մասին արդէն բաւական ընդարձակօրէն խօսել ենք մեր անցեալ «Թիւ և Ոյժ» վերնագրով յօդւածում:

Մենք կրկնում ենք՝ պանդխունութեան խնդիրը այն ձևով, ինչպէս նա ներկայանում է մեզանում՝ Անդրկովկասում, պէտք է ջոկել գիւղական տնտեսական կեանքի զարգացման խնդրից. սորա ծաւալը շատ կը փոքրանայ, եթէ նա կապւի առաջնի հետ, թէև նոքա շիման շատ կէտեր ունին:

Պանդխունութիւնը, իբր մի յոսանք հայրենի զիւղում արդիւնաւէտ գործադրութիւն չը գտնող ոյժերի՝ մի ընդհանուր երեսոյթ է և ոչ միայն ներկայիս համար, այլ նա կարող է մնալ նաև ասպարագի համար, որպէս նա կայ աւելի ևս մեծ չափերով Եւրոպայի տնտեսապէս առենազարգացած երկիրներում, ուր նահանգից նահանգ, գիւղից քաղաք, մանաւանդ գէպի գործարանական քաղաքները գիւղական ազգաբնակութեան հոսանքը տնտեսական է: Խոկ տեղ այդ հոսանքը անցնում է անգամ տէրութեան սահմանները:

Մենք մինչ այժմ խօսեցինք այն պանդխունութեան վերայ, որը յառաջանում է գիւղական համայնքներում գործադրութիւն չը գտնող ոյժերի գոյութիւնից: Այդ է զիմանքը պանդխունութեան, թէև նա միակ պատճառը չէ:

Գիւղացուն իւր գիւղից ժամանակաւորապէս դուրս վաճող պատճառները նաև այն են, որ նա հանդիպում է որ և է տնտեսական դժբաղգութեան, ինչպէս՝ հունձի փշանալը, վաշխառուին զոհւելը և այլն: Բացց սոքա արդէն մասնաւոր գէպքեր են, և ոչ օրդանական պատճառներ պանդխունութեան, մինչդեռ ոչ ժերի աւելորդութիւնը պէտք է նկատւի, որպէս պանդխունութեան օրդանական պատճառը, մի պատճառ՝ որը բղխում է գործի

քըութիւնից համեմատած մի համայնքի աշխատաւոր անձերի թւի հետ. մի յարաբերութիւն, որը յառաջանում է տնտեսական զարգացման ուրեմն քաղաքակրթութեան մի կողմից, իսկ միւս կողմից ազգաբնակութեան աճման, ուրեմն բնութեան ոյժերի անհաւասրութիւնից։ Այն պատահական պատճառներից դէպի պանդիստութիւնը զրդող գիւղացիները միմիայն ստւարացնում են պանդուխոների թիւը մի որոշ ժամանակ, բայց նոքա չեն կտզմում այն յարատել պանդուխոների կօրպուսը, որոնք պանդիստութեան մէջ ընտրում են իրանց համար մի երկարատև զբաղմունք և ապագացի յոցաներ են զնում իրանց այդ պարապմունքների վերաց, թէ որպէս ապագաց արհեստաւոր (հիւսն, որմնադիր, երկաթագործ, գրաշար, մեխանիկ, խոհարար և այլն) կամ ապագաց վաճառական կամ գործակատար կամ որպէս գործարանների հմուտ բանւոր, վաճառառների ու քարանսարանների ամենքի հաւատարմութիւնը ձեռք բերած հաստատուն բեռնակիրներ և տան պահապաններ և այլն։ Ահա՝ թէ ովքեր են կազմում պանդիստութեան մէծ կօրպուսը և ոչ թէ նոքա, որոնք որ և է անակնկալ դէպքից տառապանքի մէջն են ընկնում և զիմում ուրիշ տեղեր, կրած մնասը մի կերպ զրատելու, բայց որքան կարելի է շուտով կրկին վերադառնայու և իրանց տան ու գաշտի գործը կրկին սկսելու և շարունակելու մտքով։ Այս վերջինները, կարծ ժամանակւայ կամ պատահական պանդուխոները առհասարակ բնում են պանդուխու գիւղականների ընդհանրութեան մէջ ամենաստորին տեղը. հանգամանքների ոյժով նոքա ստիպւած են բաւականանալ ամենաքշով, որովհետև նոքա կարող են կատարել միմայն այնպիսի պաշտօններ, որոնց համար չի պահանջւում ոչ մի առանձին ծանօթութիւն զեկավար անձերի հետ և ոչ մի որ և է մասնագիտութիւն, այլ միմիայն ֆիզիքական ոյժ։ Այդպիսիների հաւակնութիւնը «մի քանի շայի» փող աշխատելու ցանկութիւնից դէնը չի անցնում՝ տէրունական հարկը կամ մի քանի պարտքեր վճարելու համար։

Այդ վերջին տեսակներին, ասում ենք մենք, չը պէտք է շփոթել պանդուխոների ստւար մէծամասնութեան հետ, որը իւր հայրենի գիւղից զուրս վիճակ է որոնում և ոչ թէ մի «քանի շայի» փողի վաստակ։ Զը պէտք է շփոթել թէ այն պատճառով, որ նոքա

Ժամանակաւոր պանդուխտներ են և օթափառող՝ են աւելի, քան պանդուխտներ՝ բառիս բուն նշանակութեամբ, և թէ այն պատճառով չը պէտք է շփոթել, որ շատ բան, ինչ կարելի է նկատել յարատե պանդուխտների մասին՝ բոլորովին չի վերաբերում՝ պատահական կամ կարճժամանակեաց պանդուխտներին:

Յիշենք, վերջապէս, մի երրորդ տեսակի պանդուխտներին: Այդ նոքա են, որոնք պանդխտութեան մէջ միանում են պանդուխտների մեծ կօրագուսի հետ, բայց որոնք զիմել են և զիմում են պանդխտութեան ոչ թէ այն պատճառով, որ նոքա աւելորդ ոյժեր են իրանց ընտանիքում և իրանց համայնքում և ոչ էլ սովորած են այդ անելու որ և պատահական պատճառով, այլ պանդխտութեան են զիմում՝ գերազաելով քաղաքը զիւղից, գերազասելով քաղաքային արշեստները՝ զիւղական պարապմունքից: Այս կարգի մարդկանց մէջ էլ կան սոսրաբաժններ. գոցանից ոմանք կամ առանձին ձգտման և ընդունակութիւնների տէր են, ձգտումներ և ընդունակութիւններ, որոնց գործադրութեան համար ներկայ զիւղական կեանքը առհասարակ շատ նեղ է թւում և կամ մոլորւածներ են, որոնք գործում են նմանողութեամբ կամ պարծենկոտութիւնից, թիւր զաղափար ունենալուց քաղաքի կեանքի մասին, որը նոցաաչքում համանիշ է հարստութիւն, լոյս, ուսում, գիտութիւն խօսքերին: Ահա' իսկապէս այն պանդուխտները, որոնց հեռանալը ծանրանում է իրանց համայնքի վերաց, քանի որ նոքա ունին այնտեղ և տուն-տեղ և կարելիութիւն՝ տնտեսութիւն զարգացնելու: Մինչդեռ իւր տանը աւելորդ ոյժ ներկայացնող, իսկ այժմ Թիֆլիս, Բաքու և այլ տեղերում աշխատողը ոչ մի կերպ չի ծանրանում համայնքի վերաց, ոչնչով չի խանգարում թէ իւր տան և թէ համայնքի տնտեսութիւնը, այլ ընդհակառակը՝ պանդխտութեան մէջ գտնում է մի պարապմունք, որից առհասարակ պէտք է զուրկ մնար իւր հայրենի զիւղում, զորա հակառակ այն վերջին տեսակի պանդուխտները միմիացն փոխանակում են զիւղի հաստատ պարապմունքը՝ քաղաքի աշխատանքի կամ գուցէ և պարապ շըմոլիկութեան հետ:

Մեծ ինսդիր է, թէ պանդուխտների մեծ կօրպուսի մէջ այդ տեսակները ինչ տեղ են բանում, նորա որ մասն են կազմում: Բայց

այդ մի խնդիր է, որի լուծումը, միւս հարցերի հետ միասին, պէտք է վերասպահւած մնայ մասնաւոր հետազօտողներին: Այդ՝ բուն ստատիստիքական հարց է, որին մենք այսօր պատասխանել չենք կարող. բայց այն բոլորը, ինչ մենք գիտենք հայկական ընտանիքի և համայնքի կազմակերպութեան և հայ մարդու բնաւորութեան մասին, մեզ իրաւունք է տալիս պնդելու, որ լոկ ցուցամոլութիւնը մեծ տեղ չը պէտք է բռնէ գէպի պանդիստութիւնը գրդող պատճառների մէջ: Պնդել, թէ քաղաքը մեր կովկասեան հայի համար այնքան գրաւիչ է, որ նա պատրաստ լինի թողնել իւր հայրենի գիւղում տուն, տեղ, արտն ու դաշտը, իւր հասարակական դիրքը և այն՝ անյացութեան աշխարհում գեղերելու համար, — պնդել այդպիսի բան մենք չենք կարող: Արկածախնդրութիւնը մեծ տեղ չի բռնում հայ մարդու գործառնութիւնների մէջ. ընդհակառակը մենք ամենքս լել ենք այն անհուն սիրոց մասին, որ տածում է հայը գէպի իւր ծննդավայրը. լսել ենք և փաստերով համոզւել, որ մեր բնաւորութեան մէջ չէ՝ գասարկ տեղից հայրենի հողը թողնել:

Ահա այդ պատճառով է, որ առաջմ, այսինքն մինչեւ որ հակառակ փաստերը և նոր գիտողութիւնները մեզ չը համոզեն հակառակն ընդունելու՝ առ այժմ կրկնում ենք, պանդուխտների թւի մէջ մենք պէտք է ընդունենք ոչ մեծ տեղ բռնող այնպիսիններին, որոնք արդիւնաբերող ոյժեր են իրանց հայրենի գիւղում, բայց և այնպէս արհամարում են այդ պարապմունքը՝ քաղաքում: աշխատելու կամ ապարդիւն կերպով ժամանակ անցկացնելու համար:

Իսկ ողանդիստութեան երեսոյթի մէջ իսկապէս ախտացին՝ կողմը ներկայացնում են այն պանդուխտները, որոնք այդ վերջին տեսակիցն են: Անպայման պախարակելին՝ գոքա են: Եւ աւելցնենք՝ եթէ հասարակաց կարծիք պէտք է կազմեի ժողովրդի, համայնքների մէջ, այդ հասարակաց կարծիքը ամենից փրկարար ազդեցութիւն կարող է և պէտք է գործէ այդ կարգի մարդկանց վերայ, որոնց կրտսուարեր ձգտու մների գիմաց կարող է համայնքը դիմադրել իւր հասարակաց կարծիքի ոյժը: Եւ եթէ մեր սպասածից աւելի էլ լինեն այդ տեսակի պանդուխտները՝ գորա գէմն առնելու միակ միջոցը մենք կրկին տեսնում ենք միմիայն հասարակաց կարծիքի ընդգիւմադրող ոյժի մէջ: Մինչդեռ, գորա հակառակը, հասարակաց կարծիքը կորց-

նում է իւր ոյժը; երբ խօսքը մի այնպիսի պանդլստականի մասին է, որը թողել է իւր հայրենի գիւղը՝ տեսնելով իւր առարկին. նութիւնը, վարւած լինի նա այդպէս իւր ազատ կամքով թէ տան մեծի կագալրութեամբ:

Մի կարևոր հանգամանք կայ, որը մասնաւորապէս հայական գիւղերում ստարացնում է աւելորդ ոյժերի թիւը: Այդ այն դերն է, որ կատարում է հայ կինը գիւղական տնտեսութեան մէջ: Յացնի է, որ հայ կինը տնտեսական կեանքում մեծ դեր է կատարում՝ մասնակցելով տնացին և դաշտացին ամեն տեսակ նոյն իսկ ծանր աշխատանքներում: Զը լինէր կնոջ այդ մեծ աշխատակցութիւնը,—ոչ միայն մեր գիւղական արդիւնաբերութիւնը կը նւազեր զգալի կերպով, այլ և ներկայիս տղամարդկանց աշխատաւոր ոյժերը չէին բաւիլ կատարելու այն, ինչ այժմեայ նոյն իսկ դեռ քիչ զարգացած գիւղական կեանքը պահանջում է: Զը լինէր հայ կնոջ այդ աշխատակցութիւնը, բոլոր այժմեայ պանդուխաները, եթէ վերադառնացին էլ իրանց գիւղերը, այնուամենացնիւ չէին կարող լրացնել նորանոյլ գոյացած պակասը: Պանդուխաների աշխատաւոր ոյժերը միայն մի փոքր մասը կարող են կազմել այն աշխատաւոր ոյժերի, որ ներկացնում են հայ գիւղացի կանացք՝ գիւղական տնտեսութեան մէջ: Եւ դեռ այդ կանացի ոյժերը կարող են մի քանի անգամ կրկնապատկել՝ կատարելազործութիւն մտցնելով նոցա աշխատանքների տեխնիկացի մէջ և ներմուծելով գիւղերը կանանց մատչելի նորանոր արհեստներ:

Մեր կովկասեան աղջերի ամենքի մէջ գիւղական կանանց աշխատակցութիւնը տնացին և մանաւանդ դաշտացին աշխատանքների մէջ հաւասար չէ. մեր գիտեցածին համեմատ, հայ կնոջ աշխատակցութիւնը աւելի մեծ է, քան թուրքերի և վրացիների մէջ: Ահա՛ ինչու հայ կնոջ մենք ցիշում ենք իբր մի առանձին գործիչ (ֆակտոր) պանդխառութեան ինպրի մէջ, պնդելով, որ նորա մեծ մասնակցութիւնը տնացին և դաշտացին արդիւնաբերութեան մէջ՝ շատ ընտանիքներում, մանաւանդ բազմանդամ ընտանիքներում աւելորդ է գարմանում մէկ կամ մի քանի տղամարդու ներկայութիւնը իրանց սահմանափակ տնտեսութեան համար, դրդելով նոցա մի որիշ տեղ աւելի արդիւնաւէտ գործ որոնելու:

Մեծ դեր է խաղում այստեղ նաև հայի այս բնաորոշ չը գիտնիք՝ յատկութիւն ասենք, թէ՝ սովորութիւնը։ Մեր խօսքը այն քանի մասին է, որ անդործութիւնը, ծոյլ մնալը խաղառ հալածում է մեզանում։ Մէկը, որ աւելորդ է, կարող էր նաև անդործութեան անձնատուր լինել, ապրել ընտանիքի հաշով, և կամ եթէ այդ չը կայ՝ մուրացկանութեան տալ իրան։ բայց դոքա, որպէս յայտնի է, հայ ընտանեկան և համայնական կեանքի սահմանադրութեան մէջ չեն մտնում։ Ազգայիշի կեանքը արհամարւում է և հալածում աշխատութեանը սովոր հայ ժողովրդի կողմից, որով և պէտք է մեկնել հայ մուրացիկ-աղքատների սակաւութիւնը թէ գիւղերում և թէ քաղաքներում։ Կան աղքատներ—և Աստուած միացն զիտէ որքան շատ են նոքա,—բայց յայտնի մուրացողների թիւը աչքի ընկնելու չափ սակաւ է մեր տեղական հայերի մէջ։

Իսկ այդ բոլորը մի-մի գործիչներ են պանդխոսութեան, այսինքն տանից և համայնքից դուրս գալու երեսով թի, այլապէս՝ պանդխոսութեան խնդրի մէջ, խնդիր, որը, ինչպէս տեսնում ենք, կեանքի շատ հանգամանքներն է ջօշափում և տեղիք տալիս նորանոր հարցերի, որոնց հետ ծանօթութիւնը և որոնց լուծումը պիտի աշխատենք տալ ասուիճանաբար։ Խնդիրը կապ ունի, որպէս պիտի տեսնենք, մեր քաղաքների ազգաբնակութեան կազմի հետ, այս մոքով որ պանդուխոսների հոսանքը զէպի աշխատութեան մէծ կենորոնները (և մեր խօսքը Անդրկովկասի մասին է) սկսեց սաստկանալ, երբ նոր գործարանական և առհասարակ արդիւնագործական և առևտրական պահանջները կովկասի քաղաքներում չը գտան գործին կպչելու բաւականաւափ տրամադիր, ել չենք ասում պատրաստ գասակարգեր, քաղաքացու պատւի մասին կազմած կեղծ գաղափարը անհաշտելի համարելով շատ աշխատանքների հետ, որոնք «դրսի մարդու» փեշակներ պէտք է թւեին նոցա աչքում։

Մի մէծ բաղդ կարող ենք համարել այն, որ մեր կովկասեան պանդուխոսների համար կան մօտիկ կենորոններ, ինչպէս են Թիֆլիսը, Բաքուն, Բաթումը, Երևանը։ Զը լինեին մեր երկրի իրա մէջ վաճառաշահ և գործարանական այլպիսի կենորոններ—պանդխոսութիւնը մեզանում կը փոխարկւէր թէ հասարակական և թէ ազգային մէծ թշւառութեան, որովհետև այն ժամանակ նոքա ստիպւած կը

լինէին դիմել մեր երկրից հեռու կենարօններ, որտեղից կապ պահ-
պանելը իրանց հայրենի գիւղերի և ընտանիքների հետ՝ մանաւանդ
բանւոր և արհեստաւոր մարդկանց համար կը լինէր չափազանց
գժւարացրած, դուցէ և անհնարին դարձրած։ Այդ վիճակի մէջ են
թիւրքա-Հայաստանցիները, որոնց մեծ դժբաղդութիւնը, այդ նկատ-
մամբ, նորա մէջն է կացանում; որ երկրի իրա մէջ չը կան ոչ միայն
Կ. Պօլսի, այլ անդամ մեր Կովկասի մի քանի քաղաքների նման
կենարօններ, այնպէս որ այնուեղ իւր գիւղից հեռացողը երեսը
պէտք է խաչակնքէ՝ լաւ համոզւած լինելով, որ պանդխատութիւնով
խկապէս իւր ապագայ գաղթն է նախապատրաստում...։

Ակներե է, թէ որքան և որքան մեծ շահ ունինք ոչ միայն
գիւղական համայնքները առաջադիմած տեսնել, այլ տեսնել կենդանի
գործարանական կենորոնների փոխարկեած այժմեաց համեմատապէս
մեռած քաղաքները, ինչպիսիք են Երևան, Ալեքսանդրոպոլ, Կարս,
Գանձակ, Նուշի և այլն և կամ նոցա մօտ եղած բայց ապագայ
խոստացող այժմ աննշան տեղերը։ Որքան մօտիկ են այն կենորոն-
ները, ուր կարող են դիմել իրանց գիւղերում գործ չը ճարող գիւ-
ղացիները, այնքան աւելի նւազած կը լինի այն վեսար, որ կարող
է յառաջանալ իւր ընտանիքից և համայնքից հեռանալուց։ Եւ քանի
որ մենք ապացուցած ենք համարում, որ պանդխատութիւնը յառա-
ջանում է գլխաւոր ապէս աւելորդ համարուած ոչ ճերի գոյու-
թիւնից, և քանի որ ապացուցած ենք համարում, որ աւելորդ
ոյժեր կարող են լինել նաև գիւղական համայնքների աւելի զար-
դացած տնտեսական պայմաններում, ուրեմն ապագայում, և երրորդ՝
քանի որ պանդխատութեան հետեանքները վատթարանում են, որ-
քան պանդխատական կենորոնները հայրենիքից հեռու են,—այդ բո-
լորից պարզ երևում է, թէ ինչ զիրք պէտք է բունել պանդխատու-
թեան ինզրի դիմաց։ Պանդխատութիւնը պէտք է ընդունել ոչ որպէս
մի ժամանակաւոր երևոյթ, այլ որպէս մի յարաւե երևոյթ, նոյն-
քան օրդանապէս կապւած ոչ միայն մեր՝ հայերի, այլ առհասարակ
մարդկացին սօցիալական կեանքի հետ։ Ժամանակով՝ չը նայած մեր
գիւղական կեանքի անդամ մեծ զարգացման, պանդխատութիւնը ոչ
միայն կարող է զոյութիւն ունենալ, այլ նա կարող է նաև աճել
մինչ այժմեաց պանդխատութիւնը թւի մի քանի պատիկը։ Մեր մեծ

հոգով պէտք է այն լինի, որ պանդխառութիւնը չը տարածւի մեր երկրի սահմաններից դուրս և որքան կարելի է կենտրոնանայ մեր մէջի եղած քաղաքներում։ Խսկ դորան կարելի է հասնել միմիայն զարգացնելով մեր գործարանական արդիւնաբերութիւնը։

Մեզ թերեւս հարցնեն, թէ ացդ բոլոր գասողութիւններից ինչ խնդիր է յառաջանում ներկ աշխիս համար։ Այս է յառաջանում, կամենք մենք, որ, պանդխառութեան երեսցթը մեզ նման ըմբունելով, մենք ոչ թէ ասպարդիւն վայոցներով կը լցնենք մեր թերթի էջերը, անզօր յորդորներ կարգալով, որ բոլոր պանդուխաները իրանց գիւղը վերադասնան, այլ կը յարուցանենք և կ'ուսումնասիրենք պանդիւտական շարժումը կանոնաւորելու և պանդուխաներին խնամելու խնդիրն այն գերի հետ, որ կատարում է մեր պանդխառական շարժումը իրր իսալող օղակ գիւղի և քաղաքի մէջ՝ թէ անտեսական և թէ քաղաքակրթական ասպարիզում։ Այդ մասին մի այլ անդամ։

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՄԻԱՆՆԵԱՆՑ

ԱՂԲԻՒՐ ԵՒ ԱԼԻՔ

1,0 ՆԳՖԵԼ, 1,0-ից

Ա. Պ Ծ Խ Հ Ա Ն Ի

Ժայռի կրծքից գուրս է բղխում
Աղբիւր վճիտ, սառնորակ.
Թռչկոտում է, լառաջ վազում,
Վազում անվախ, համարձակ:

Իսկ ալիքը ազատ ծովում,
Հեռո՛ւ, հեռո՛ւ աղբիւրից
Մերթ լուռ ու մունջ քուն է մտնում,
Մերթ աղմկում սոսկալից:

Բայց աղբիւրը դադար չունէ,
Յառաջ, լառաջ է սահում,
Նու կարօտում, փափագում է
Նոքն էլ հանգչել լայն ծովում:

Ո.Հ. և նու հասաւ ծովին,
Ալիքի հետ միացաւ,
Եւ վերջապէս նորա կրծքին
Իւր հին վիշտը մոռացաւ...

ՀԵՂԻՆԵ

Վ. Է. Պ.

Տ-ԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

I

Մի փոքրիկ, բայց գեղեցիկ պարտիզում՝ ընկուզենիների տակ նստած էր տասնեօթ-տասնութ տարեկան ջահել աղջիկ և ձեռ քումը տրորում էր վարդի ծաղիկներ:

Նորանից մի քանի քայլ հեռու ծառին կոթնած կանդնած էր մի քսանոմիկ տարեկան երիտասարդ: Թէև օրը շոք էր, բայց նոր ջրած դալարը, բացւած վարդերն ու մարգերի միջով հոսող առուն ամբողջ պարտէզի մէջ ախորժելի զովութիւն ու բուրմունք էին սփռում: 1866 թւի մայիս ամիսն էր, Կովկասում ամենասքանչելի ամիսներից մէկը:

— Հեղինէ, հօ՛ էլի բան չի՞ պատահել քո և իշխանուհու մէջ, հարցը մտերմաբար երիտասարդը և սկսեց անթարժ նայել իւր մօրաքրոջ աղջկայ լացակրկնած աչքերին:

— Ոչ, նիկոլա, անվճռական կերպով պատասխանեց օրիորդը, բայց քեռակինը ինձ այն... գեներալին տալու միտքը չի թողել, սպասում է միայն, որ ես, ինչպէս նա ասում է... «ինելքի գամ»:

— Իսկ այդ սպասելու միջոցին երեսի քեզ անդադար նախատում է, թէ նորա բոլոր երախտիքը մոռանում ես, կծու հեգնութեամբ արտասանեց նիկողայոսը և իսկոյն զղջաց բերնից ակամայ գուրս թռած խօսքերի համար: — Հանգիստ եղիր, Հեղինէ, այդ ամենը կանցնի, ես միայն մի բանից եմ վախենում...

— Խնչի՞ց, մի երկարացնի, ասա:

— Որ իշխանուհու անտանելի յանդիմանութիւններից յուսահատած յանկարծ հաւանութիւն տաս:

— Հաւատացած եղիր, որ այդ չի լինիլ, պատասխանեց Հեղինէն և սիրալիր հայեացքով նայեց մօրաքրոջ որդուն:

— Տես, Հեղինէն, չընկճւես, վճռիդ հաստատ կայ, զգացւած արտասանեց նիկողացոսը և բռնեց Հեղինէի ձեռքը: Ես չեմ կարող առանց համակրութեան վերաբերւել ամուսնութեան՝ իբրև մի ամենավեմ հաստատութեան, որ որոշում է մարդու և կնոջ յարաբերութիւնը՝ սիրով, բարեկամութեամբ, ընդհանուր նպատակներով ու խորհուրդներով կապւած երկու էակների ներդաշնակ միաւորութեան ձեռվի: Եթէ կան աստուածացին հաստատութիւններ, ամուսնութիւնը այնքան սուրբ, վսեմ ու իմաստալից հաստատութիւն է, որ ամենից շատ նա' պէտք է աստուածացին համարէի:

Օրիորդի դէմքը աւելի և աւելի պարզում էր:

— Առաջին անգամն եմ տեսնում, նիկօլա, որ մի երիտասարդ այդքան յարգանքով վերաբերւի ամուսնութեան:

Երիտասարդը երկար խօսում էր այդ հարցի մասին: Հեղինէն խիստ փափագով ականջ էր զնում նորա խօսքերին, առանց մի բոպե աչքը երեսից կարելու: Նիկողացոսը ոչ միան սաստիկ սիրում էր իւր մօրաքրոջ աղջկան, այլ և քաղցր պարտականութիւն էր համարում իւր համար պաշտպանել նորան: Ոչ եղբայր ունենալով, ոչ քոյր, նա մանկութիւնից սովորել էր իրան նորա հօվանաւորողը համարել: Նա վախենում էր, որ մի գուցէ իշխանուհին, Հեղինէից ազատւելու համար, նորան տայ առաջին պատահած մարդուն: այդ միտքը նորան շատ անհանգիստ էր անում և այդ պատճառով, օգտուելով ամեն յարմար սուիթից, նա խօսում էր մօրաքրոջ աղջկաց հետ այդ խնդրի մասին:

Նոքա գրաւած խօսակցութեամբ երկար գրօսնում էին պարտէզում, երբ որ յանկարծ լսեցին իշխանուհու զիլ ձայնը. կարծես սառը ջուր ածեցին նոյա զլիններին:

— Հեղինէ, ո՞րոեղ ես, շուշ արա՛, արի՛, գոչում էր իշխանուհին:

Բարձրանալով վերև իւր սենեակը Հեղինէն պատահեց իշխանուհուն, որ նորա վերայ խիստ հայեացք զցեց:

— Ի՞նչ ես գժի նման վազէ վազ անում նորա հետ, այն... Այդ նիկողացոսը իրան շատ անվայել կերպով է պահում: Գնա մառ զերդ ուղղիր, մի քանի ժամանակ է աչքիս ուրիշ տեսակ ես երեռ ում, և վերջապէս աղջկան ի՞նչ սազ կը գայ Աստծու օրը առաւօտից մինչև երեկոյ ջահէլ տղայի հետ լինել:

Հեղինէն կարմրատակեց, քիչ էր մնում մի խիստ խօսք ասէր, բայց իրան զապեց և, տժոհ հայեացք զցելով իշխանուհու վերայ, յանդիմանօրէն արտասամնեց.

— Քեռակին, ես չէի սպասում այդպիսի նախատինքի, միթէ նա իմ եղբայրը չէ, մանկութիւնից միասին չենք մեծացել:

— Գլուխս տարար գու քո հակամառութիւններով, ամենենին ուշադրութիւն չես զարձնում տկարութեանս, խստութեամբ ընդհառ տեց նորա խօսքը իշխանուհին ու ձեռքերը զրեց քունքերին: Մի րոպէ անցած նա նորից սկսեց աւելի մեղմ ձայնով. աշխատիր շքեղ հագնւել, այսօր մեզ մօտ հիւրեր կը լինեն: Որքան կարող ես քաղցր վարւիր գեներալի հետ, նա... հասկանում ես... շատ խելօք, կրթած մարդ է, լաւ ստհմի որդի, բարձր գիրք ունի. այդ բոլորի մասին ես քեզ հետ արդէն խօսել եմ: Յոյս ունիմ, Հեղինէ, խելքի կը գաս և չես հրաժարւիլ այդպիսի ամեն կողմից շահաւէտ ամուսնութիւնից: Պատրաստիր, վաղը նա քեզ պաշտօնապէս առաջարկութիւն պէտք է անի, ես ու քեռիդ արդէն հաւանութիւն ենք տւել:

— Միթէ՞ բարի քեռիս ուշադրութեան չ'առաւ այն բոլոր պատճառաբանութիւնները, որ ես բերի այդ ամուսնութեան դէմ: Սիրելի քեռակին, ազատեցէք ինձ այդ մարդուց, ես չեմ կարող նորան սիրել:

— Ո՞վ է քեզ ստիպում, որ այժմ սիրես նորան. կը պսակւես՝ յետոյ կը սիրես: Իմ ժամանակ աղջիկները շատ անգամ մինչև նշանդիքը չէին էլ իմանում: Թէ ով է նոցա կին ուղողը, սակայն այդ էր արգելում նրանց բախտաւոր լինել:

— Քեռակին, մի մոռացէք, որ նա ինձ աւելի հայր կը սազի, քան ամուսին. ինչ որ ուզում էք պատրաստ եմ կատարելու...

— Դու կեանքս մաշելու ես, գոռում էր իշխանուհին զայրացած, հասկա քեզ ի՞նչ մարդ է պէտք: Նա այնքան ազնիւ է, որ

մի խօսք անգամ չի ասում օժիտի մասին. այդպիսի մարդ, ճրագով որ ման գաս, չես գտնի հիմիկաց ժամանակները: Ապերախտ, ոչինչ բանի տեղ չես դնում իմ րոլոր հոգացողութիւններս քեզ համար: Յ'ֆ, Տէր Աստուած, ինչպէս հոգիս մաշում է այս անիրաւը:

Մի քանի րոպէ անցած իշխանուհին հիստերիկա ընկած գալարւում էր անկողնում, հեկեկում էր ու տնքում: Թէև առաջին անգամը չէր, որ Հեղինէն իշխանուհուն այդ գրութեան մէջ էր տեսնում, բայց նրան այնպէս էր թւում, թէ այս անգամ հիստերիկան առաջւանից խիստ է, և նա սաստիկ վախեցաւ: Խեղճը մնացել էր կանգնած՝ անզգայ, շւարած, չէր իմանում ինչ անի. ջուր էր տալիս ու օդեկոլոնվ թրջում իշխանուհու քունքերը, յետոյ սկսում համբուրել նորա ձեռքերը ու ուղղում՝ զիլխատակը, բայց անօգուտ: Վերջապէս, երբ որ բժիշկն եկաւ, զեղատոմն գրեց ու ասաց, որ ոչինչ առանձին բան չը կայ, խեղճ աղջիկը հանգստացաւ: Եթէ նա մի քիչ փորձւած լինէր, բժշկի երկմիտ ժպիտից կը հասկանար, որ իշխանուհու հիւանդութեան անունը կապրիզ է:

Մի ժամկեց յետոյ իշխանուհին՝ ըստ երեղիթին՝ հանգստացել էր: Ճաշին հիւրեր պէտք է գալին: Հեղինէն շւարած աչք էր ածում չորս կողմը ու միտք անում, թէ ինչպէս իշխանուհուն օգնի և թեթևացնի հիւրերին ընդունելու հոգսերը:

Իսկ հիւանդը յիշելով, որ ժամի երեքին երկու նորեկ պատւառը հիւրեր են գալու, յանկարծ՝ կարծես հրաշքով՝ կենդանութիւն ստացաւ ու սկսեց ծանր ու բարակ հագնւելյ զուքեւլ: Հեղինէն կանգնած տեղը սառած մնաց ու չէր իմանում ուրախանայ թէ զարմանայ այդ յանկարծական փոփոխութեան վերայ:

Ճաշի ժամանակ իշխանը ներկայացրեց իւր քեռորդուն հիւրերից մի քանիսին:

—Տղա՛յ եմ ասել, կատարեալ զինուորական է, պէտք է գւարդիան տամ:

Նիկրղայուր ժպտաց:

—Նը, ի՞նչ ես ծիծաղում, —թանաք լպտելը աւելի լա՞ւ է, ի՞նչ, բարձրածայն բրեիշ արձակեց իշխանը ու սկսեց սաստիկ ոգեւորութեամբ, ձեռները շարժելով, պատմել վերջին սկստերազմի մանրամասնութիւնները:

Յեսոյ սկսւեց տաք վիճաբանութիւն զանազան բարձր պաշտօններ ստացած ծառայողների մասին, այս ու այն մարդու պաշտօնական դրութեան անհաստատութեան մասին և այլն:

— Ասա խնդրեմ, Հեղինէ, միթէ՞ ձեզ մօտ միշտ այդպիսի հասարակութիւն է հաւաքում, որ ես ահա մօտ երկու ամիս է ձեր տանը տեսնում եմ; Հարցրեց Նիկողայոսը հիւրերի գնալուց յետոյ:

— Այո՛, մեզ մօտ միայն գեներալներ են գալիս, երիտասարդներից համարեա ոչչոք չի լինում մեր տանը, քեռակինը աղմուկ չի սիրում:

— Այդ հօ՛ միւնոյնն է թէ մարդ. կենդանի գերեզման մտնի: Դոցանից ոչ մի կենդանի խօսք, ոչ մի առողջ միտք չես լսի երբէք:

Նիկողայոսը տաքացած երկար շարունակում էր այդ խօսակցութիւնը:

Վեց տարեկան ժամանակ զրկւելով մօրից՝ Հեղինէն մինչև տասներկու տարեկան հասակը ասպրում էր իւր հօր մօտ, որ նորա միակ առաջնորդն ու դաստիարակն էր: Հեղինէի հայրը քաղաքում ազնիւ և բարեսիրտ մարդու անուն ուներ: Զրկւելով սիրած ամուսնուց, նա իւր սիրող սրտի բոլոր զգացմունքներն ու հոգսերը ամփոփեց իւր միակ զաւակի Հեղինէի վերայ: Ծառայութիւնից մնացած բոլոր ազատ ժամերը նրան էր նւիրում՝ ժամանակ էր անցկացնում հետը, խաղում էր և, գիրկն առնելով, երկար խօսում էր հետը նրան մատչելի լեզով: Հայրը Հեղինէին չէր ճնշում երեխայական շարութիւնների համար, թողնում էր սրտի ուզածի չափ զւարձանաց. նա միայն մի բանի էր շատ հոգս տանում, — որ Հեղինէի մէջ անարատ մնայ և չը կորչի անկեղծութիւնը: «Ամեն բան, ինչ անես, քեզ կը ներեմ, բացի ստից», յաճախ ասում էր հայրը, երբ որ նա մի որ և է աններելի չարութեան մէջ բռնւելիս աշխատում էր մի կերպով արդարանալ: Այսպիսով Հեղինէն ազատ մեծանում ու զարգանում էր և թէև քիչ բան էր սովորում, սակայն այդ քիչը նա սովորում, իւրացնում էր սիրով, հասկանալով: Բայց այդ երկար չը ակեց. տասներկու տարեկան հասակում՝ Հեղինէն զրկւում է իւր սիրելի հօրից, մնալով բոլորովին որբ, մի չնչին ժա-

ուանդութիւնով։ Նորա քեռին, իշխան Շակունին վերցնում է նորան իւր խնամատարութեան տակ և ուզում է՝ ինչպէս հանգուցեալլ իրան խնդրել էր՝ տանու կրթութիւն տալ նրան, բայց կինը, պատճառ բերելով իւր ջղերի խանգարւած դրութիւնը, նորան ինատիտուտ է տալիս։ Աերջը ուսումն աւարտելուց յետոյ Հեղինէն զարմանում էր տեսնելով, որ ինստիտուտում իւր հինգ տարւայ ընթացքում ձեռք բերած դիտութիւնը ոչինչ է համեմատելով այն տեղեկութիւնների հետ, որ նա խաղ ու պարով սովորել էր տանը հօրից։

Հեղինէի մանկութեան ամենամտերիմ բարեկամը նորա մօրաքրոջ որդի Նիկողայոս Վրթանէսեանն էր, որի հետ նա տեսնուում էր համարեա ամեն օր։ Իսկ նորա ինստիտուտ մտնելուց յետոյ, Նիկողայոսը գնում էր մօտը համարեա ամեն կիւրակէ ընդունելութեան ժամերին։ Ուսումնարանական յիշողութիւններից ամենից շատ մտաքերում էր Հեղինէն այն չարաբախտ օրը, երբ Նիկողայոսը գնաց Մօսկվա համալսարան մտնելու։

Ինստիտուտը աւարտելուց յետոյ Հեղինէին իշխան Շակունին վերցրեց իւր տունը։ Զը նացելով որ Հեղինէն քեռու տանը երբեմն իրան միայնակ էր զգում, զուրկ ծնողական փայփայող սէրից, բայց նա գեռ ջահէլ էր։ Նորա զգայուն ու վառվուն հոգին սովորեց կեանքի նոր պայմաններին, նորա սիրալիր սիրտը շուտով սիրեց քեռակնոջը, քեռուն և այն ամենքին, որոնք մօտիկ էին նրան։ ամենքը նրան բարի էին թւում, չար ասած բանը գոյութիւն չ'ունէր նորա համար, մի խօսքով ամեն բան ժապտում էր նրան։

Հեղինէի քեռին, իշխան Շակունին, յիսունուհինգ տարեկան, բայց թարմ ոյժերով ու քաջառողջ գեներալ էր։ Զէրքէզների դէմ վարած կուրհների շնորհիւ նա քաջ ու ազնիւ զինւորականի հոչակ էր սուացել։ Նորա բարձր հասակը, լայն թիկունքը, գուրս ընկած կուրծքը, գանգրահեր զլուխը, երեսի սաստիկ թխութիւնը ու խիստ աչքի ընկնող, կոպիտ դիմագծերը շատ լաւ համապատասխանում էին նորա ծաղկացրած, չափազանցրած պատմութիւններին իւր պատերազմական կեանքից, որոնցով նա շատ սիրում էր զբաղեցնել իւր հիւրերին, օգտելով ամեն յարմար առիթից։

Իշխան Շակունին յաւակնութիւն չ'ունենալով ոչ մեծ խելք ոչ էլ բարձր կրթութիւն ունեցող կարծելու իրան, անվեհերութիւնն

ու քաջութիւնը ամեն բանից բարձր էր դասում։ Հաւատացած լինելով, որ կինը շատ խելօք ու հմուտ կերպով է վարում տան ներքին գործերը, գեներալը բոլորովին նորա կամքին էր ժողել երեխաների կրթութիւնը և՝ որ ասես՝ ոչ մի բանում չէր խառնուում տանու գործերին։ Զը նայելով իւր ծեր հասակին, նա ոչ միայն հանգլասութիւն չէր փնտրում, այլ միշտ յուզւում էր, որոնջում էր խաղաղութեան երկարատեսութեան վերայ. սիրով վտանգաւոր արկածներ էր փափազում։ Տանը չէր կարողանում նստել, բայց որոշած երեխոներից, երբ որ նոցա մօտ հիւրեր պէտք է գային։

Հեղինէն սկզբում մի քիչ վախենում էր բարկացկոտ ու դիւրագրգիռ քեռուց, բայց շուտով համոզւեց, որ նա իւր կարծածիցը աւելի բարի է։ Խշանի զայրոյթը առհասարակ շուտով անցնում էր, նա դորանից յետոյ սովորականից աւելի քաղցր էր վարւում, առնում էր գիրկը Հեղինէին կամ թէ իւր կոշտ արեւառ ձեռքով փաղաքշում նորան։ Խշան նակունու կինը, Մարիա Նիկոլաևնան կամ, ինչպէս սովորաբար անւանում էին նորան ազգականները, իշխանուհի Մայիկն՝ խելօք և գործնական կնոջ համարումն ունէր։ Զը նայելով որ քառամասուհինգ տարեկան էր, նա գեռ սիրուն էր։ Եւ թէև համարեա ամենելին՝ կրթութիւն չէր տացել, բայց մանկութիւնից վայելակիրժ կոչւող շրջանում ապրած ու մեծացած լինելով, նա ձեռք էր բերել քաղաքավարական արտաքին փայլ։ Չուզենալով յետադէմ կին համարել, նա երբեմն պաշտպանում էր նոր գաղափարներ, բայց իսկապէս նա երբէք չէր կարողանում հաշուել այդ գաղափարների հետ և ատելով ատում էր երիտասարդութիւնը, որ հասարակութեան մէջ նոր գաղափարների ներկայացուցին է։ Խշանուհին շատ փոփոխամիտ բնաւորութիւն ունէր։ Երբ որ նորա կամքովն էին շարժւում, նա չափից դուրս բարի ու քաղցր էր լինում, բայց հէնց որ մի բան նորա սրտովը չէին անում, գաղաղում էր և ամեն բանի վերայ փնթափնթում ու կռւում էր։ Սաստիկ սիրելով հանգիստ կեանք, իշխանուհին հեռացրեց իրանից իւր երկու փոքրահասակ տղաներին, ուզարկելով նոցա Ռուսաստան ուսում առնելու։ Մարդը հակառակ էր այդ բանին, բայց իշխանուհին համոզեց նորան, որ երեխաները առհասարակ ծնողներից հեռու աւելի լաւ։ Ին սովորում։

Այդպիսով ազատելով իրան ամեն տեսակ հոգսերից, իշխանութին ամբողջ օրը զւարձութիւններով էր անցկացնում, որոնցից ամենից շատ սիրում էր բէզիկ (Ըղթափող) խաղալը: Հասկանալի է, որ նա չէր կարող ուրախ սրառվ ընդունել իւր տունը Հեղինէին և դրանով խանգարել իւր անդորրութիւնը. նա երկար ժամանակ դիմագրում էր իշխանի ցանկութեանը, բայց վերջապէս վախենալով հասարակաց կարծիքից սահմանած եղաւ զիջել իշխանի խնդիրքին:

—Այդ աղջկաց պատճառով պէտք է առաջւայ անհոգ, ազատ կեանքից ձեռք քաշեմ, բայց՝ յոյս ունիմ՝ այդ երկար չի տեիլ: Նորա պէս գեղեցիկ աղջիկները երկար չեն նառում տանը, յաճախ միսիթարում էր իրան իշխանուհին:

Մի ամիս էր անցել այն օրից, երբ Հեղինէն ոտք դրեց Շակունու տունը:

—Յոյս ունիմ, Մայիկօ, որ դու խեղճ որբի համար հարազատ մօր տեղը կը բռնես:

—Զե՞ս ամաչում, Դէորգ, որ դեռ կասկածում էլ ես, թէ հս նորան իմ աղջկաց պէս կը սիրեմ. մի՞թէ ես տեղիք եմ տւել ինձ անսիրտ համարելու, նեղացած ձայնով պատասխանեց իշխանուհին:

—Եա՛չը, չեմ իմանում ինչպէս խօսեմ քեզ հետ. ինչ ասում եմ սրտիդ զիսպչում է. իմ ասածը այդ չէր, գոռաց իշխանը, խփելով իւր ճակատին ու սկսեց մեծ քայլերով ճեմել սենեակում: Ես իմ Աստուածը, Մայիկօ, աւելի հեշտ է թշնամուց թնդանօթ խլել քան թէ կնոջը մի բան հասկացնել: Խսիր թէ բանը ինչումն է: Հեղինէի հայրը մեռնելիս ինդրեց ինձ, որ աշխատեմ լաւ կրթութիւն տալ իւր աղջկան: Որ միտքս է գալիս, Մայիկօ, հանգուցեալի վերջին աղերսալից հայեացքը, սիրտս ուզում է...

—Չեմ հասկանում թէ միտքդ ինչ է, անհամբերութեամբ ընդհատեց նորա խօսքը իշխանուհին. իմ կարծիքով մենք նրան առանց այն էլ աւելի ուսում ենք տւել քան թէ հարկաւոր է մի աղքատ աղջկան:

—Այդպէս մի խօսիլ, Մայիկօ: Եթէ նա իմ աղջիկս լինէր, ես կասէի, թող կարդալ գրել, սրբազան պատմութիւն ու կարուձե սովորի, —ըրիստոնեաց մարդու ու տնարար աղջկաց համար դրանից աւելի բան պէտք չէ: Բայց քրոջս աղջկաց համար ես պէտք է անեմ

այն, ինչ որ իւր հարազատ հայրը կանէր՝ եթէ կենդանի լինէր. չեմ ուզում որ հոգուս մեղք լինի:

Իշխանը խորը հոգոց քաշեց ու լնկաւ բազմոցի վերաց: Իշխանուհին կարծես զգացւեց, ասաց, որ կը մոտածի այդ հարցի մասին:

—Այս գիտեմ, որ խելօք կին ես: Դու գիտես հօ՛, Մայիս, որ ես վախկոտներիցը չեմ, թուր ու հրացանից երեսս չեմ թեքիլ, աշխարհում ոչնչից չեմ՝ վախենում, բաց խիզմս չի տանի անկատար թողնել մեռնող մարդու խնդիրքը:

Այդ խօսակցութիւնից մի ամիս էլ չեր անցել, որ Հեղինէի համար ֆրանսերէն ու գերմաներէն լեզուների և երաժշտութեան ուսուցիչներ վարձեցին: Հայերէնի մասին ամենեւին խօսք էլ չ'եղաւ, որովհետև թէ իշխանը թէ իշխանուհին, որոնք շատ վատ էին խօսում իրանց մայրենի լեզով, երբէք մոքներովն էլ չէին անցնում, թէ անհրաժեշտ է սովորել մայրենի լեզուն: Իշխանուհին էլի կիսատ պրատ կարդալ-գրել գիտէր հայերէն, իսկ իշխանը մինչեւ անգամ իւր անունը ստորագրել չեր կարողանում մայրենի լեզուով: Իրար հետ մարդ ու կին միշտ ուռւսերէն կամ վրացերէն էին խօսում: Հայերէնը յարգի չեր վայելչակիրթ կոչող ընտանիքներում: Այդ կողմից Վրթանէսեանի ազգեցութիւնն էլ նշանակութիւն չունէր Հեղինէի համար. Վրթանէսեանը մանկութիւնից այնպիսի պայմանների մէջ էր ապրել, որ մայրենի լեզուն իմանալը ամեն մի հայի անհրաժեշտ պարտակութիւն չեր համարում:

Հեղինէն սկսեց եռանդով պարապել ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով ու երաժշտութիւնով: Ազատ ժամերին նա կարդում էր ձեռքն լնկած գրքերը: Ոչ ոք հոգս չեր քաշում նորա համար գրքերի ընտրութիւն անելու և ոչ ոքի նա հաշիւ չեր տալիս իւր կարդացածի մասին: Ուսումնարանական ընկերուհիներից միայն Կատարինէ Աբգարեանն էր նրան այցելում, բաց նա էլ շուտով հեռացաւ Թուից:

II

Հեղինէն օրէցօր աւելի և աւելի էր զգում իւր միայնակութիւնը. ոչ զինւորական քերին, ոչ ջղացին քեռակինը, ոչ էլ զեներալների ու ազգականների հասարակութիւնը չէին կարող բաւարարութիւն տալ նորա պատանեկական անփորձ սրտի իղձերին: Օրիորդի

Երեւակայութիւնը միշտ զբաղւած էր իւր ստեղծած պատկերներով. նորա յուղւած միաքը յաճախ վերանում էր իրական աշխարհից. նա արդէն սկսել էր մուժ կերպով զիտակցել, թէ ինչ-որ շատ կարևոր բան իրան պակասում է, թէ իւր կեանքը դատարկ, անբովանդակ է, և այդ՝ սկզբում մուժ՝ զիտակցութիւնը քանի գնում աւելի և աւելի զօրանում էր: Հետզետէ մօտենում էր այն օրը, երբ պետք է նորա տասնութ տարին լրանար և նա օր օրի վրայ սիրունանում էր. ուսումնարանի նատական կեանքից մի քիչ կոացած մէջքը շիտկւել էր, այնպէս որ մարդու խելքը գնում էր՝ նացելով նորա շնորհալի բարձր հասակին. նուրբ իրանը լցւել, զարդացել էր. գեղեցիկ աւ աչք-յօնքն ու մազերը աւելի ևս գեղեցիկ էին երեւում նորա սպիտակ ու կարմրայտ, երկարուկ երեսի վրայ: Բայց Հեղինէի գեղեցիկ գէմքում ամենագորեկանը նորա գրաւիչ ժպիտն ու խոր, ծով աչքերի վերին աստիճանի քաղցր հայեացքն էր, որոնք կարծես անշմարելի էին գարձնում նորա թէւ կանոնաւոր, բայց փոքր ինչ խիստ դիմագծերը:

Իշխանը քանի անգամ է, որ հասկացնում էր կնոջը, թէ Հեղինէի համար պէտք է երիտասարդ ծանօթներ գտնել. իշխանուհին՝ ըստ երեսյթին՝ համաձայն էր նրան, բայց երկուսն էլ, մեկը անհոգութիւնից, իսկ միւսը չափազանց զբաղւած լինելով իւր անձնական ինդիբներով, ցանկութիւն յաջտնելուց հեռու չէին գնում:

Մի օր, երբ Հեղինէն սովորականից աւելի էր զգում իւր միայնակութիւնը, նամակ բերեցին փօստից. նամակը Կատարինէիցն էր. նա հազրորդում էր Հեղինէին, թէ ինքը պսակւել է մի Գէորգ Սահառունի անունով շատ արժանաւոր երիտասարդի հետ և յափշտակութեամբ նկարագրում էր, թէ ինչպէս են միասին ապրում: Հեղինէն երեւակայութեամբ տեղափոխւեց Կատարինէի մօտ, առժամանակ մոռացաւ իւր դարդը, ուրախանալով ընկերուհու բախտաւորութեան վերայ:

Նոյն երեկոյ մի ուրիշ նշանաւոր դէպք էլ պատահեց: Նրանց մօտ հիւր եկաւ Հեղինէի մօրաքրոջ որդին ու մանկութեան ընկերը՝ Նիկողայոս Վրթանէսեանը, որ օգուտ քաղելով քեւու հրաւերից, վճռել էր նոցա մօտ մի քանի ժամանակ մնալ, այդտեղ նոս կարող էր մի քիչ կազդուրէլ իւր խախտած առողջութիւնը:

Վրթանէսեանը միջահասակ մի երիտասարդ էր, չափազանց լղար ու գունատ: Նորա անկանոն դիմագծերը ոչնչով աչքի չեն ընթռւմ, բայց երբ նա ոգեւորած խօսում էր, նորա աչքերի փայլը այն աստիճան խելք ու եռանդ էր արտացացում և ամբողջ գէմքը այնքան ազնիւ արտացացութիւն էր ստանում, որ այդ ժամանակ նորան կարելի էր համարեա գեղեցիկ տղամարդ անւանել: Մեծ խելքի ու ընդունակութիւնների տէր լինելով, բայց սոկուն աշխատութեան հակումն չ'ունենալով, Վրթանէսեանը չէր կարողանում որ և է գործի բոլորովին անձնատուր լինել, կենդրոնացնել մի բանի վերայ բոլոր իւր ոժերն ու ջանքերը: Դեռ փոքր հասակում, գիմնազիացում, նա իրան յատուկ յափշտակութեամբ գրաւեռում էր մէկ այս մէկ այն մասնագիտութիւնով: Համալսարան մանելով նա այն աստիճան յափշտակւեց հասարակական հարցերով, որ բաւարարութիւն չէր կարողանում գտնել չոր ու ցամաք գիտութիւնների ուսումնասիրութեան մէջ. մի բաժանմունքից միւս բաժանմունքն էր փոխում, չը կարողանալով կանգ առնել մի որ և է մասնագիտութեան վերայ:

Հեղինէն շուտով հասկացաւ, որ Նիկողայոսը նման չէ այն մարդկանց, որոնց նա ամեն օր տեսնում է. նա նրանում մի այնպիսի բան նկատեց, որ կարող էր իւր սրտի խորքը թափանցել: Եւ իրաւ, Նիկողայոսը միակ մարդն էր, որ Հեղինէի հօր մահից յետոյ կարող էր նորա վերայ բարերար ազդեցութիւն գործել: Մի յարկի տակ կենալով նա ու Հեղինէն համարեա ամբողջ օրը միասին էին լինում. նա կարդում էր մօրաքրոջ աղջկայ համար իւր հետ բերած գրքերից, խօսում էր հետը և զարմանալով նկատում էր, որ նա օրէցօր փոխում է իւր կարծիքները, աւելի և աւելի իւրացնելով իւր համար բոլորովին նոր հայեացքներ: Առաջին զինում նկարագրած խօսակցութիւնից յետոյ մի ամիս էր անցել: Վրթանէսեանը երկար փնտրում էր Հեղինէին. ամբողջ տունը ման եկաւ,— չը կայ, վերջապէս նորան գտաւ պարտէզում: Հեղինէի ձեռին ինչ-որ գրոտած թերթեր կային:

—Կարծեմ, ինչ որ գրում էիր. կարելի՞ է տեսնել:

—Ե՛, յիմար բան է, ժամանակդ ափսոս է, —ասաց Հեղինէն կարմրելով և չէր ուզում ցոյց տալ: Ենստիոռուտից սկսած ես սո-

վորութիւն եմ դարձրել թղթի անցնել այն բոլորը, ինչ որ մաքովս
ու սրտովս անցնում է միայնակութեան մէջ։ Բացի թղթից ոչ ոք
չ'ունիմ, որին կարողանաքի հազորդել իմ տպաւորութիւնները։

— Մի՛թէ ինձ բարեկամ չես համարում, համարեա յանդիմա-
նօրէն հարցրեց նիկողացոսը։

— Բացց դու շուտով գնալու ես, ես էլի մէնակ պէտք է ֆնամ։
Վերջին խօսքերն արտասանելիս Հեղինէի սիրտը տիրեց, բայց նի-
կողացոսի համար դժւար չէր փարատել նորա վիշտը։ Նա պերճախօս
էր. Հեղինէն մեծ հաճոյքով էր ականջ զնում նորա խօսքերին։

— Ա՞յ, ացդպէս, երեխերք, ծիծաղէք ուրախացէք, այդ իմ
հաւասար մօտ է, ուրախ ձայնով արտասանեց Նակոնին, պատահե-
լով նրանց պարտէզում ճեմելիս։ Նիկօն շատ է լցւել ու լաւացել
չէ, Հեղիկ։ Մի՛տ է ինչքան զեղնած ու լզար էր, երբ որ Ուո-
սաստանից եկաւ։

— Հա, քեռի, բայց ի՞նչ, քանի որ էլի կարող է հիւանդանախ
սրտացաւութեամբ պատասխանեց Հեղինէն։ Բժիշկն ասաց, որ Մօս-
կուայի օդը շատ վատ է նիկողացոսի թոյլ կուրծքի համար։

— Ոչինչ. ես բոլորովին կազդուրւել եմ, այնպէս որ մէկ-երկու
ամնից յևսոց աներկիւղ կարող եմ գնալ...

— Զի՞, ինչ ուզում ես ասա, նիկօ, ես քեզ էլ Ուուսաստան
թողնողը չեմ, — խստութեամբ կտրեց նորա խօսքը քեռին։ Ո՞ւմ
պատանքն էին հերու պատրաստել, հը, մոռացել ես, հա՞։ Իսկ
եթէ անպատճառ ուզում ես շարունակել ուսումդ, գնա արտասահման։

Նիկողացոսը կմկմաց, չը կարողացաւ մի վճռական բան ասել։
Քեռին հասկացաւ պատճառը։

— Գիտեմ, որ միջոցներդ չեն ներում արտասահման գնալու, բայց
քանի ես ողջ եմ, ոչ դու, ոչ էլ Հեղինէն ոչ մի բանում կարուու-
թիւն չէք բաշիլ։

Վրթանէսեանն ու Հեղինէն սիրով ու երախտագիտական զգաց-
մունքով սեղմեցին իրանց քեռու ձեռքը և երեքով պարակից տուն
գնացին։ Խշանուհին նստած բէ զիկ էր խաղում։

— Գէորդ, նստի՛ր, իմ տեղը խաղա՛, ես այս բոսկէին կը գամ, —
զիմեց նա ամուսնուն, և Հեղինէի ձեռքը բոնեց ու հետը հիւրա-
սենեակից դուրս եկաւ։

—Այսօր մեզ մօտ ճաշելու է քո հին ծանօթներից մինը—
Տրունիցկին։ Որքան կարող ես ուշադիր եղիր դէպի նա։

Նատ լաւ մարդ է։ Երեկ մի տան միասին հիւր էինք, քո
մասին շատ էր հարց ու փորձ անում։

—Միտս չի գալիս, այդ ո՞վ պէտք է լինի, —խորհրդաւոր ժըպ-
տաց Հեղինէն։ —Հա՛, այժմ ցիշեցի, անցեալ տարի նա լինում էր
մեզ մօտ։

Եւ զարթնեց Հեղինէի երևակացութեան մէջ կանոնաւոր, ձուաձե-
ռ թխագոյն դէմքով և շէկ մազերով, բարձրահասակ և վայելա-
կազմ երիտասարդի պատկերը։ Նա լաւ ցիշեց, որ Տրունիցկին, չը
նայելով, որ գեղեցիկ տղամարդ է, իւր վերաց անախորժ տպաւորու-
թիւն էր գործում։

—Հիանալի մարդ է, ոչ մի պակասութիւն չես կարող գտնել
մէջը, —հանեց նորան մնախոհութիւնից իշխանուհին։ Խելօք, ճարտար
տղաց է. բացի դորանից հայրը մեծ կապեր ունի Պետերբուրգում,
անկասկած որդին շատ առաջ կը գնայ։

Հեղինէն անտարբեր ականջ էր գնում իշխանուհուն։

Երբ որ ճաշին բոլոր հիւրերը հաւաքւեցին և օրիորդը մտաւ
դահլիճը, Տրունիցկին բարձր հասարակութեան մէջ կրթւած կընասէրի
յատուկ ճարապիկութեամբ վագեց մօտը և սկսեց հաճոյախօսութիւններ
թափել գլխին։ Հեղինէն ուշի ուշով նայեց նորա վերաց, կարծես
ցանկանալով սոսուգել իւր առաջւայ կարծիքը։ —Նո՞յն յանդուզն
ծաղրը նրբագիծ շրթունքներին, նո՞յն կեղծ հայեացքը մեծ խա-
ժագոյն աչքերում; Նո՞յն լիրք անձնապաստանութիւնը բոլոր շարժ-
ւածքներում։

Ճաշին Տրունիցկին նստած էր Վրթանէսեանի կողքին։ Մի քիչ
քէփովանալով, նա դարձաւ իւր հարեանին և շշնջեց նորա ականջին։

—Ի՞նչ սքանչելի, ի՞նչ սիրուն է ձեր մօրաքրոջ աղջիկը։ Երևի
յաճախ համբուրում էք նորան, օգտւելով եղբայրական իրաւունքից։

Վրթանէսեանը քիչ էր մնում տեղն ու տեղը պատառ պատառ
անէր լիրք հարեանին, բայց իրան զսպեց։

Տրունիցկին չէր հեռացնում Հեղինէից իւր վավաշոտ հայեացքը
և շարունակում էր իւր անսպատկառ խօսակցութիւնը Վրթանէ-
սեանի հետ։

—Զայներդ կտրէ՛ք, պարոն, թէ չէ պատուհանովլ դուրս կը զցեմ ձեղ, —շնչեց նորա ականջին Վրթանէսեանը, կարմրատակած կատաղութիւնից:

—Ա՛յ, ա՛յ, ա՛յ, տես ինչ կրակի կառն է եղել: Ե՛, բարեկամ շատ խակն էք երևում, —ծիծաղի զցեց ծրունիցկին:

—Մի քանի րոպէ անցած նա արդէն զբաղեցնում էր տիկիններին ու օրիորդներին քաղաքի առէ կօսէն երով, բամբասանքներով:

—Խնչո՞ւ չէք խմում, պարոններ, —հիւրասիրում էր տանտէրը: —Բարեբեր Կովկասը այսպիսի անմահական խմիչք է մեզ պարգևել, որ յանցանք է չը խմելլ:

Ճաշից յետոյ տղամարդիկ սկսեցին բարձրաձայն խօսել. մէկը յարձակում էր մոտքերը վարակող նոր զաղափարների դէմ. միւսը հրապարակ էր հանում իւր ծանօթի կեանքի զաղտնիքները, մի ուրիշը տիկիններին զբաղեցնում էր երկդիմի, անպատկառ հաճոյախօսութիւններով, որ լսելով Հեղինէն ամօթից կարմրում էր: Մի ժամկց յետոյ աղիկինների ու տղամարդիկանց մեծ մասը նատեցին թուղթ խաղալու: Հեղինէն գնաց իւր սենեակը:

Ալգակս էին ժամանակ անցնում միշտ իշխանն ու իշխանուհին. օր օրից ապարերում էր միան աննշան փոփոխութիւններով, խակընդհանուր ոգին նոյնն էր:

—Պէտք է զարմանալ, որ շրջապատողների դատարկութիւնը չի ազդել Հեղինէի վերայ, մտածում էր Վրթանէսեանը վնտրելով սենեակներում մօրաքրոջ աղջկան:

—Ես եմ ասում, ո՞րտեղ ես, —ասաց նա գանելով Հեղինէին: Այսուեղ շատ տօթ է, գնանք պարտէզ:

—Նատ լա՛ւ, իմ սիրտս էլ է ուզում պարտէզ գնալ: Եւ նոքաթեանցուկ արած իջան պարտէզը, ուր՝ չը նայելով օրւայ շոքին շատ հով էր:

—Այն ի՞նչ էիր կարդում, Հեղինէ, —հարցրեց Վրթանէսեանը երբ որ նոքա մոտան պատառուկներով շրջափակած հովանոյը և նստեցին:

Քո բերած զրքերիցն է: Նորանում նկարագրած անձնաւորութիւններից մէկը ինձ հիացնում է՝ ո՛րքան զգացմունք, ո՛րքան հաւատ ունի դէպի լաւը:

Ահա իսկ հերոսական հոգու տէր մարդ: Իմ կարծիքով, այդպիսի մարդիկ առաջւայ ժամանակները պէտք է աւելի շատ լինէին քան այժմ:

—Ինչո՞ւ:

—Այն ժամանակւայ կեանքը այժմեանի նման չէր. հերոսութիւն ցոյց տալու առիթներ աւելի էին պատահում, անվճուաբար պատասխանեց Հեղինէն: Կամ գուցէ հերոսական հոգու տէր մարդիկ հիմիկւանից աւելի առիթներ չէին ունենում իրանց ցոյց տալու, բայց եղած առիթներից օգուտ էին քաղում...:

—Ճիշտ է, Հեղինէ, ներկայ ժամանակը աղքատ է նշանաւոր տաղանդների կողմից, բայց դորանից չի կարելի եզրակացնել, թէ հասարակութեան բարոյական ոյժերն էլ սպառւել են:

—Հապա ինչո՞ւ այժմ դժւար է գտնել այնպիսի նշանաւոր մարդիկ, որոնք հազար ու մեկ վտանգների ու հալածանքների ենթարկւելով դիմում են իրանց որոշած նպատակին և մի քայլ անգամ չեն շեղւում նորանից:

—Առաջւայ ժամանակի մոտաւոր կեանքը առաջ էր գնում հասարակութեան աննշան փոքրամասնութեան, մի քանի անհատների գործունէութեան շնորհիւ, անհատների, որոնք՝ իիստտարբերւելով իրանց շրջապատողներից՝ աւելի ևս զարմանք են պատճառում մեզ իրանց եռանդով: Իսկ այժմ, Հեղինէ, այդպիսի անհատները էլ մեզ հսկաներ չեն թւում:

—Լաւ, նիկօլա: Շատերն ասում են, թէ առաջ կարելի էր հերոսական գործեր կատարել, զոհւել, վրէժիսնդիր լինել ճնշողներից, իսկ այժմ միթէ՞ այդ բոլորը անելու առիթներ չը կան: Թող ամեն մէկը վճռի վարւել այնպէս ինչպէս արդարութիւնն և ճշմարտութիւնն է պահանջում և շուտով կը զգայ, որ իւր մէջ էլ հերոսական ոգի կայ:

—Մի քիչ խորը որ նացես հարցին, Հեղինէ, հայեացքդ կը փոխես այժմեան կեանքի վերայ: Բանն այն է, որ այն ոյժը, որ առաջ կետրնացած էր սակաւաթիւ անհատների մէջ և շլացնում էր իւր հսկայական ծաւալով, այժմ հազարաւոր մասերի բաժանւելով, մանրացել է: բայց չէ որ այդպիսով նա մատչելի է դարձել հասարակ ամբոխի համար: Առաջւայ հսկաները իրանց մէջ էին ամ-

փոփում իրանց ժամանակակից հաւարակութեան բոլոր մտաւոր ու բարյական ոյժերը։ Եւ որովհետեւ նոքա կատարեալ և միակ ներկայացուցիչներ էին այդ ոյժերի, անձնական ներկայացուցիչներ և ոչ հասարակական, քանի որ այն ժամանակ չը կար հասարակական ինքնագիտակցութիւն, - նոքա լուսաւորում էին միայնակ, թէև ի հարկէ շացուցիչ լոցով։ Նոցա վառած ճշմարտութեան լապտերը այժմ լուսաւորել է ամբողջ աշխարհը. գիտնականների փակւած շրջանից նա տարածւել է և թափանցել ամբոխի խորքերը, մտել աղքատի խրճիթը։ Մի ժամանակւայ ազնւասիրական, արխառոկրատական գիտութիւնը այժմ ռամկավարական, գեմօկրատական է գարծել։

Հեղինէն գլխով նշան արեց, թէ չի հասկանում վերջին խօսքերի միտքը, բայց Վրթանէսեանը չը նկատեց այդ. իսկ յետոյ երբ որ տեսաւ մօրաքրոջ աղջկայ իւր վերայ յառած հարցական հայեացքը, ակսեց բացատրել։

—Այսինքն գիտութիւնը այժմ իւր առաջւայ անմատչելի բարձրութիւնից իջել է և գիւրըմբանելի է դարձել հասարակ մահկանացուների համար։ Այժմ ռամկավարական սկզբունքն է իշխում հասարակական կեանքում, այնպէս որ հասարակութեան շահերին ծառայելու համար պէտք չէ անպատճառ հերոս, հանձար լինել, հասարակ մահկանացուն էլ այժմ կարող է գործել հասարակութեան օդոին...

Վրթանէսեանի խօսքը բերնին մնաց, որովհետեւ այդ բոպէին լսւեց վերեւից իշխանուհու ձախնը. նա կանչում էր Հեղինէին դաշնամուր ածելու։ Հեղինէն անսիրտ վերեւ բարձրացաւ իշխանուհու կամքը կատարելու։ Երկու-երեք կտոր ածելուց յետոյ նա նորից իջաւ պարտէզը և լուռ սեղմեց Վրթանէսեանի ձնուքը։

—Ի՞նչ ես միտք անում, Հեղինէ։

—Ես գեռ քո խօսածի ազգեցութիւնից չեմ ազատւել։

—Եւ երեւի մոքովդ անցնում է, թէ ձեզ մօտ հաւաքւող հիւրերից անշուշտ շատ քչերն են որ և է լուրջ սկզբունքներով զեկավարւում իրանց կեանքում։ Այս՝ Հեղինէ, նոցա մեծ մասը ռենվէն են խմում, շքեղ կառքերով զբօսնում ու վատնում հօրական փողերը առանց մոքներով անգամ անցկացնելու թէ մարդս կեանքում մի որ և է կոչումն ունի։

— Խնչալէս Տրունիցկին, — հեգնական ժպիտով արտասանեց Հեղինէն և սաստիկ կարմրեց:

— Հեղինէ՛, Հեղի՛կ, ո՞րտեղ ես, չես երեռում, — լսւեց յանկարծ մի քայլ հեռւից:

Զայնը ծանօթ էր. Հեղինէի սիրտը թնդաց, երեսը պայծառացաւ, և նա ուրախ ուրախ վազ ու եց շքեղ հագնւած ջահէլ տիկնոջը դիմաւորելու:

— Բարեւ, սիրելի Հեղիկ:

Կատեա, այդ գո՞ւ ես, սիրտս ուրախութիւնից ուզում է ձաքել: Ո՞ր խաչիցն է, — աղաղակեց Հեղինէն փաթաթւելով լնկերուհու վզին:

— Զանիս դարդ է դարձել, որ այսքան ժամանակ է այստեղ եմ ու նոր եմ քեզ մօս գալիս:

— Վաղո՞ւց ես եկել:

— Երկու շաբաթ կը լինի:

Հեղինէն յանդիմաննօրէն նայեց նրան:

— Ների՛ր, հոգիս, հաւատա, որ ամեն րոպէ մտքումն եղել է քեզ մօս գալ, բայց չեմ կարողացել կատարել սրտիս փափաղը: Դու դեռ չը գիտես, թէ ինչ գլխացաւանք է տուն ու տեղ սարքելը: Ծիծաղդ չի՞ գալիս, որ ես այժմ տիկին եմ, հա՛, հա՛, հա՛:

— Եատ ծիծաղելի է երեռում ինձ, — Կատեան՝ տիկի՞ն: Բայց ես մոռացայ՝ առաջինը — չնորհաւորել մարդու զնալդ և երկրորդ՝ ներկայացնել քեզ իմ մօրաքրոջ որդի — Վրժանէսեանին: Նիկողայոսը անշնորհ կերպով զլուխ տւեց, և մի քանի րոպէից յետոյ հեռացաւ իւր սինեակը:

— Մօրաքրոջդ որդին ինձ գուր եկաւ, ափսոս որ լաւ ձեւեր չունի, — ասաց Կատարինէն նորա գնալուց յետոյ:

— Ո՛, հիանալի տղայ է, հաւատացած եմ, որ շատ կը հաւանես նորան:

— Այժմ այն միայն տեսայ, որ հասկացող մարդ է, մեզ մենակ թողեց: Ես քեզ հետ շատ բան ունեմ խօսելու:

Նոքա ձեռք ձեռքի տւին, նստեցին ահագին լնկուզենու տակ և սկսեցին պատմել միմիանց այն բոլորը, ինչ որ զլիներով անցել էր վերջին երկու տարւայ լնիծացքում:

III

Թափած հեռանալու նախընթաց օրը Վրթանէսեանը ձեռները յետին դրած մտացող ման էր գալիս դահլիճում: Իշխանն ու իշխանուհին տանը չկին: Նեղինէն տիսուր կանգնած էր պատշգամիլ տառղ ստպակիաշէն դրան մօտ և շուտ շուտ նայում էր մօրաքրօջ որդուն:

—Ախ, ի՞նչ պէտք է անեմ քո գնալուց յետոց, —յանկարծ դուրս թռաւ բերնիցը:

Նորա ձայնի տիրութիւնը սաստիկ յուզեց, կսկծացրեց Վրթանէսեանի սիրոը: Նա մի քանի խօսք ասաց նորան մխիթարելու համար և հարցրեց:

—Խչո՞ւ է Կատարինէ Սահառունին այդքան ուշուշ գալիս քեզ մօտ:

—Որովհետեւ քեռակինը շատ սառն է ընդունում նորան և առհասարակ....

—Գիտեմ, իշխանուհին քո ուզածի հակառակն է անում, որովհետեւ չը կարողացաւ քեզ համոզել պսակւելու Տրունիցկու հետ: Լա՛ւ, իսկ քեռին, նա՛ ինչպէս է վերաբերում այդ հարցին:

—Քեռին շատ չէր ստիպում, որովհետեւ նա առհասարակ դէմ է հայ աղջիկների օտարազգիների հետ պսակւելուն:

—Եւ կատարեալ իրաւունք ունի:

—Ի՞նչ ես միտք անում, նիկօլա:

—Մտածում եմ այն պայմանների մասին, որոնց մէջ դու ապրում ես. ինձ դեռ երբէք այնքան պարզ չէր թւել այդ պայմանների անհեթեթութիւնը որքան այսօր:

—Յետո՞յ:

—Զարմանում եմ, թէ ի՞նչպէս ես կարողացել անվասս մնալ այդպիսի պայմաններում:

—Դորա պատճառն այն է, որ ես ինձ շրջապատող կեանքի վերայ նայում եմ իրու մի օտար, ինձ համար խորթ բանի վերայ: Ես ինքս էլ չեմ հասկանում, ինչիցն է, որ, միայն զբքերում կարդացած լինելով, թէ կայ և ուրիշ տեսակ կեանք, ես հաւատացած եմ, որ ապագայում ինձ աւելի լաւ կեանք է վիճակւած:

Ասաց այդ՝ զգացւած ձայնով՝ և նազելի շարժմունքով յետ

գցեց սև մազերը. աչքերը և երեսը վառւում էին. Վրթանէսեանը
բռնեց ձեւքը՝

— Ձեր մէջ, կանանց մէջ, սիրելի Հեղինէ, մի ինչ-որ զօրաւոր
բնազդումն կայ, որի շնորհիւ դուք զարմանալի հեշտութեամբ
մաքրւում էք կեղաղից ու ցեխից և յաճախ ձեր հողու ազնւութեամբ
յաղթում էք արտաքին անբարեցածող հանգամանքները:

Իշխան Շակունին եկաւ և ընդհատեց նոցա խօսակցութիւնը
Հետեւեալ առաւոտը Վրթանէսեանն ու Հեղինէն բաժանւեցին
իրարից: Երկուսն էլ միմեանց ամենաքաղցր զգացմունքով էին յի-
շում: Չորս ամիսը նոցա համար շատ շուտ անցաւ, բայց ոգեսոր-
ւած ուսանողի ազգեցութիւնը վաղանցուկ չ'եղաւ. նորա ցանած
սերմը շատ խոր արմատ քցեց Հեղինէի արտում:

Թէև Հեղինէն շատ հարցերի մասին ինքնուրոյն հայեացք էր
կազմել, բայց շատ բան էլի նորա համար մութն էր. նրան ամենից
աւելի հետաքրքրող հարցերից շատերը ինքը չէր կարողանում լու-
ծել, և այդ պատճառով նորա աշխարհահայեացքը շատ որոշ չէր:

Վրթանէսեանի գնալուց յետոյ մի քանի շաբաթ էր անցել:

— Նորհաւորում եմ ծնունդդ, Հեղիկ, — ազաղակելով ներ-
ընկաւ. Հեղինէի սենեակը տիկին Սահառունին և հանեց զրպանից
մի փոքրիկ արկղ:

— Չուր ես նեղութիւն քաշել, սիրելի Կատեա, դու գիտես, որ
ես զուքս ու զարդարանք սիրողներիցը չեմ:

— Գիտեմ, հոգիս, բայց վերցրու այս ինձնից քեզ յիշատակ:

Սահառունին հանեց արկղիկից մի գեղեցիկ փոքրիկ մեղալիօն՝
մէջը դրած իւր լուսանկարը:

— Այս, ես բոլորովին մոռացել էի, որ այսօր քո ծննդեան օրն
է, շնորհաւորում եմ, — կիսաքերան ասաց իշխանուհին, տհաճու-
թեամբ վայր դնելով խաղաթղթերը և համբուրեց Հեղինէի ճա-
կատը: 19 տարիդ լրացաւ, գիտե՞ս, Հեղինէ, — առանձնապէս շեշտե-
լով աւելցրեց իշխանուհին, և նորից խորասուզւեց թղթախաղի մէջ:

Երբ որ տիկին Սահառունին պատրաստում էր գնալու, իշխա-
նուհին խնդրեց նորան, որ մնայ ճաշին:

— Կը մնամ միայն այն պայմանով, որ Հեղինէն վաղը գայ ինձ
մօտ ու ամբողջ օրը մնայ:

— Ապահով եղեք, Եկատերինա Դւանօվնա, ձեր խնդիրքը կը կատարի, լսեց կողքի սենեակից իշխանի ձայնը:

Ասաց իշխանը ու մատաւ այն սենեակը, որտեղ նոքա էին, Համբուրեց Հեղինէին ու տւեց նրան մի փոքրիկ մինէազարդ ժամացոյց:

— Ի՞նչ հիանալի կին էք դարձել, — գիմեց նա սիկին Սահառունուն:

— Հապա ի՞նչ էիք կարծում, կոտրտւելով գլուխը թափ տւեց նա: Դուք, իշխան, ամենւին չեք փոխւել:

— Դուք ինձ միթէ ցիշո՞ւմ էք:

— Խստիսուտի աշակերտուհիներից ո՞ր մեկը չի ցիշում բարի քեռուն, որ միշտ քաղցրեղէններ էր բերում իւր քրոջ աղջկան: — Իշխանը բարձրաձայն ծիծաղեց:

— Ե՞րբ էք մեզ ծանօթացնելու ձեր հոգևորի հետ նրա հօր հետ լաւ բարեկամ էինք: Դուք այսօր մեզ մօտ էք ճաշելու, վճռւած բան է: — Եկատերինէին ի նշան հաւանութեան ժպաաց:

— Եատ լաւ, ես ճաշին հետո ուրախ հիւրեր կըբերեմ: Գեներալը գնաց:

Միւս օրը իշխանուհին Հեղինէին տարաւ Սահառունիների մօտ:

— Ո՞ւր է, ինչու չի գալիս մարդդ այսքան ժամանակ, Կատեաւ:

— Եուսով կը գայ: Բայց ի՞նչ անհամբերութեամբ ես ապատում նորան, Հեղիկ, չը լինի կարծում ես, թէ շատ գեղեցիկ է:

— Քո նկարագրածին նայելով, պէտք է որ այդպէս լինի, — Ժպաաց հեղինէն:

— Զուր ես կարծում, հոգիս վախենում եմ, հիասթափւ ես: Բայց ճիշտ որ ինչո՞ւ այսքան ուշացաւ, շուտով ժամի երեքը կը լինի: Ես քեզ շատ անյարմար օր հրաւիրեցի: Մոռացել էի որ այսօր երեկոյեան մեզ մօտ հաւաքւելու են մի գործի համար: Գէորգը երևի ընկերներից մէկի մօտ նստած խօսքով է ընկել:

Կողքի սենեակում լսեց Սահառունու ոտնաձայնը:

— Ահա և իմ հոգևորը, աղաղակեց Կատեան: Պարոն, ձեր կողմից շատ անքաղաքավարութիւն է այսքան երկար սպասել տալ:

— Ներողութիւն, սիրելիս, իմ կամքովս չեմ ուշացել, գործ ունէի:

Մինչև Կատեալի ծանօթացնելը, Հեղինէն կարողացաւ նկատել Սահասունու բարձր հասակը, գունատ և, թէև անկանոն, բայց ազդու գէմքը՝ մեւ, մի քիչ գանգուր մազերով։ Բայց ամենից աւելի համակրելի արտայաջտութիւն էին աալիս նորա գէմքին սպիտակ, բայց ճակատը և մեծ, մուգ աչքերի անկեղծ հայեացքը։

— Այնքան է խօսել ձեր մասին կինս, որ ես առանց տեսնելու համարեա ճանաչում էի ձեզ, — ասաց Սահառունին նստելով Հեղինէի կողքին։

— Ի՞նչն էր խանդարում ձեզ կատարելապէս ծանօթանալու ձեր կնոջ լնկերուհու և դեռ աւելի՝ ազգականուհու հետ, — հարցրեց նա ժպուալով։

— Այդ որ՝ է՛լ մի ասի, — ընհատեց նորա խօսքը Կատեան։ Գէորգս մարդամէջից փախչող է։

— Այս անգամնայ նկատմամբ ասածդ իրաւացի չէ։ Ես երկու անգամ գնացել եմ իշխան Շակունու մօտ. առաջին անգամին ոչ ոք չը կար տանը, երկրորդ անգամ՝ ինձ ասացին, թէ իշխանուհին հիւանդ է, իսկ դուք, օրիորդ, պարապում էիք ուսուցչի հետ։

— Հեղինէն միշտ կամ դաս է առնում կամ ուրիշին դաս է տալիս, դա այդ պակասութիւնն ունի, կիսահեգնօրէն ասաց սեղանատունից Կատեան։

Այդ խօսքերի հեգնական եղանակը դուր չեկաւ Սահառունուն, որ խսկոյն աւելցրեց։

— Սակայն այդ շատ գովելի պակասութիւն է, այդ պակասութեան շնորհիւ մարդ կարող է իւր բնաւորութեան շատ վատ կողմէրը ուղղել։

— Ով զիստի դուք ինչ եղրակացութիւններ հանէք Կատեալի խօսքերից, կարմիրելով ասաց Հեղինէն։

— Միք վախենալ, մոքովս ոչինչ վատ բան չ'անցաւ։ Ես մի բան եղբակացրի և եթէ չը վախենայի թէ հաճոյախօսութեան տեղ կ'ընդունէք, կը յաջանէի ձեզ եղրակացութիւնս։

Սահառունու պարզ, բարեկամնական վարմունքը քիչ քիչ դրաւեց Հեղինէի սիրութ և նա վատահարար նայեց նորան։

— Մի օր կ'ասէք ինձ, թէ ի՞նչ եղրակացրիք, այնպէս չէ՞ Գէորգ Ալեքսանդրուիչ։ — աշխաւժով արտասանեց Հեղինէն։

— ‘Ի՞՛, համեցէք ճաշելու, լսւեց Կատեայի ձայնը:
Ճաշը շատ ուրախ անցաւ: Վաղուց էր, որ Հեղինէի սիրով
այնքան չէր ուրախացէլ, որքան այդ օրը:

Ժամի վեցի ժամերքը Սահառունու առանձնասենեակը սկսեց
լցւել երիտասարդներով: Ներողութիւն խնդրելով Հեղինէից, նա գնաց
նոր հիւրերի մօտ: Այնուեղ շուտով սկսւեց բարձրածայն խօսակցու-
թիւն. տաք տաք վիճում էին: Հեղինէի ու Կատեայի նստած սե-
նեակից պարզ լսւում էին նոցա բոլոր խօսքերը: Ժամի 8-ին օրիոր-
դին յացնեցին, որ իշխանուհին կառքը ուղարկել է նորա յետելից:
Խշանի քէֆն եկաւ, որ տեսաւ Հեղինէին ուրախ ու զւարթ տրա-
մադրութեան մէջ, և խոտացաւ յաճախ թողնել նորան Սահա-
ռունիների մօտ, բայց, որովհետեւ իշխանուհին շատ անդամ հակա-
ռակում էր այդ բանին, այդ բաղդին Հեղինէն շատ ուշ ուշ էր ար-
ժանանում: Նա մեծ ուրախութեամբ էր յիշում Սահառունիների
տանը իւր անցրած մի քանի ժամերը, նա զգում էր, որ այնտեղ
տիրում է մի ուրիշ, աւելի բանական կեանք, որ մարդիկ այնտեղ
հաւաքւում են ոչ թէ դատարկ ժամանակ անցկացնելու համար, այլ
մտածում, աշխատում են օգտակար գործ կատարելու, մի որ և է
նպանոակ ունեն առաջներին:

Այն օրից երբ լրացաւ. Հեղինէի 19 տարին, նա նկատում էր,
որ քեռակինը ուզում է նորան անպատճառ մարդու տալ: Այնուհե-
տեւ Հեղինէն իրան օտարի նման էր զգում քեռու տանը. կարծես
խորթ լինէր: Իւր անմիտիթար վիճակից նա միայն մի ելք էր տես-
նում, այն է պասկեւլ մի արժանաւոր և սիրած մարդու հետ, և
առիթը շատ շուտով ներկայացաւ:

Մի օր իշխանուհին ու Հեղինէն գնացել էին քաղաքից դուրս
գոնեւող ազգիներից մէկը նւազահանդէսի (կօնցերա): Իշխանուհու
հին ծանօթներից մէկը՝ զեներալ Միհրանօվի կինը՝ ծանօթացքեց
նորան և Հեղինէին մի երիտասարդի հետ, որի գեղեցիկ տեսքը և
նուրբ ձևերը երկուսին էլ դուր եկան: Հեղինէն նորան արդէն տեսել
էր Սահառունիների տանը, բայց հարեւանցի կերպով:

— Ամիրանօվը ամուսնուս ընդունակ և ճշոտապահ աստիճանա-

որներից մէկն է: Ուսումառած, լաւ կրթութիւն ստացած, յաջողակ մարդ է, մի խօսքով, ես հաւատացած եմ, որ նա իւր փայլուն ընդունակութիւնների շնորհիւ շատ առաջ կ'երթայ, — գովարանում էր Ամիրանովին Ելիզաւետա Ֆօգդանօմնա Միհրանօվան իշխանուհու առաջ, մինչդեռ Հեղինէն նոր ծանօթի հետ զմայլում էր զիշերւայ գեղեցկութիւններով և երաժշտութիւնով: Միհրանօվան միտքը դրեց պսակել Ամիրանօվին Հեղինէի հետ, զիտենալով, որ դորանով թէ իշխանուհուն և թէ իւր մարդու աստիճանաւորին մեծ ծառայութիւն մատուցած կը լինի: Նա իբրև գործնական կին լաւ զիտէր, որ մարդիկ այդպիսի ծառայութիւններ չեն մոռանում:

Հետեւեալ օրը Ամիրանօվը այցելութեան գնաց իշխան նակունու տունը: Նա շուտով գրաւեց թէ իշխանի թէ իշխանուհու համակութիւնը և սկսեց յաճախել նոցա մօտ:

Ամիրանօվը աղքատ տանից էր: Նորա քեռին Ուբարօվը, որ ունեւոր մարդ էր և ամուրի, նորան գեռ երեխայ ժամանակը տարել էր իւր հետ Մոսկա, ուր ինքը առեւտուրով էր պարապում: Ուբարօվը ոչինչ չէր խնայում իւր քեռորդու համար. նա նորան տւեց Մոսկայի ամենալաւ գիշերօթիկ դպրոցը, իսկ դպրոցում ուսումը աւարտելուց յետոյ տարեկան նրան որոշեալ գումար էր տալիս, որ համալսարանում ուսումը շարունակի: Այն ժամանակը, երբ Ամիրանօվը պէտք է երկրորդ կուրսից երրորդը փոխւէր, քեռուն դժբախտութիւն պատահեց. նա կոտր ընկաւ և էլ չէր կարողանում օգնել քեռորդուն: Ամիրանօվը սկսեց ելք փնտրել իւր դժւար դրութիւնից և շուտով նրան յաջողեց մի քանի շահաւետ դասել: Իսկ քեռուն նա սկզբում զանազան ճշմարտանման պատրւակներով քանի գնում աւելի ուշ ուշ էր այցելում, յետոյ վերջապէս սկսեց բացայաց արհամարհանքով վերաբերւել նրան: Քեռորդու ապերախտութիւնը այն աստիճան զայրացրեց Ուբարօվին, որ նա վճռեց ընդմիշտ դադարեցնել նորա հետ զագականական յարաբերութիւնները:

Ամիրանօվը գեռ համալսարանում եղած ժամանակը հմուտ էր ամեն բանից օգուտ քաղելու արհետոին. նա զիտէր թէ ում հետ ունեցած ծանօթութիւնից ու յարաբերութիւնից իրան շահ կարող է լինել, ում մօտ ինչ մտքեր պէտք է պաշտպանի և ինչպէս պէտք է վարւի, որ թակարդ չընկնի. այնպէս որ աղքատութիւնը նորա

ապագայ ասպարէզի համար արդելք չէր կարող լինել։ Նորա քաղաքավարի վարմունքը տիկինների հետ, կանոնաւոր գծերով, թուխ, գեղեցիկ դէմքը, օրիորդների հետ զանազան պատարկ բանների մասին ճարտար խօսելու ընդունակութիւնը, նոցա հացիկների վերաբերութեամբ պարտուպատշաճ յարգանքի ցոյցերը և երեխաններին դրաւող առաստ ընծաները՝ համարեա ամեն տեղ յաջողութիւն էին ունենում և նա զրկաբաց ընդունելութիւն էր գտնում։ Ամիրանօվը շատ շուտ հասկացաւ, որ իրան շատ ձեռնուու է պատել Հեղինէի հետ։ Բացի զորանից նրան շատ էր դուր գալիս օրիորդի զրաւիչ ու գեղեցիկ դէմքը. այնպէս որ մի շաբաթ անցած նա բոլորովին դրաւեց այդ յաջողակ մոքով։

— Ճիշտ է, ես գեռ ջահէլ եմ և ասպարէզս գեռ ապահովւած չէ, բայց չ^է որ գեղեցիկ կնոջ, ազդեցիկ ազգականների, կապերի և կանանց իրանց ամուսինների շահերը պաշտպանելու բնասուր վարպետութեան շնորհիւ աւելի հեշտ կը լինի համնել ցանկալի նպատակին, — ինքն իրան մտածում էր նա, ինքնազոհ ժափիան երեսին երեւակացելով իրան առաջը բացւող փառաւոր ապագան։

Ամիրանօվը իւր բնասուր գործնականութեան շնորհիւ կարծածիցը աւելի շուտ կարողացաւ իրագործել իւր մտավրութիւնը Տեսնելով որ օրիորդը ընթերցանութիւնով ու երաժշտութիւնով է պարապում միշտ, նա սկսեց նորա համար գրքեր ու նօտաներ տանել շատ անգամ էլ նորա համար գրքեր էր կարուում, և գանելով նորա թոյլ երակը, պաշտպանում էր նորա սիրած գաղափարները կեղծ ոգեսորութեամբ։ Հեղինէն չէր նկատում նորա կեղծութիւնը, որովհետեւ նա շատ լաւ էր կեղծում։ ուրախութեամբ լսում էր նորա խօսքերը և աշխատում էր առիթներ գտնել նորա հետ մենակ մնալու։

Ամիրանօվը նկատելով, որ օրիորդը չի սիրում իրանց մօտ հաւաքւող հասարակութիւնը և փախչում է նորանից, ինքն էլ շատ անգամ հեռանուում էր միւս հիւրերից, գնում էր նորա մօտ պատշգամբը և սկսում էր անխնայ յարձակել այդ հասարակութեան վերաց։

— Եկայ ձեզ հետ մաքուր օդ ծծելու, օրիորդ Հեղինէ, քիչ էր մնում սիրոս պատուի նոցա անմիտ զեւզեկութիւնից։

— Խնէ է ձեզ ամենից աւելի վրդովեցնուում, — հարցը Հեղինէն, հանգիստ նայելով նորա երեսին։

— Նոքա կանանց վերայ նայում են իբրև սեպհականութեան վերայ, օրիորդի վերայ—իբրև ապրանքի վերայ, որից պէտք է ազատւել յարմար առիթ պատահածի պէս. նոցա նման անզգայ մարդկանց ի՞նչ բանն է խօսել կողջ պէս ազնիւ ու սքանչելի էակի մասին:

— Զարմանալի է, Միխայիլ Պետրօվիչ, դուք այդպէս զայրացած էք խօսում նոցա մասին, իսկ հետները շատ քաղցր էք վարւում. ներեցէք, որ այսպէս անկեղծ յայտնում եմ ձեզ իմ միտքս, — ասաց օրիորդը և սաստիկ կարմրեց:

Ամիրանօվը մի քիչ շփոթւեց, բայց վարժւած լինելով յուզմունքները զսպելու, շուտով ուղղւեց.

— Ընդհակառակը, ես շատ շնորհակալ եմ, որ անկեղծ էք վարւում ինձ հետ, անկեղծութիւնը մաերմանալու առաջին քայլն է. միւս կողմից՝ այդ միջոցով միայն մենք կարող ենք փարասել ժամանակ առ ժամանակ մեր մէջ ծագող տարակուսանքները:

Ամիրանօվի քարցրահնչիւն ձայնը մի քիչ դողում էր. Հեղինէն զգացւեց և սիրալիր հայեացք քցեց նորա վերայ:

— Բանն այն է, օրիորդ, որ այդ տեսակ մարդկանցից շատերը նոյնպէս կատարելութեան են ձգտում, բայց թողլ կամքի տէր լինելով, ուզում են առանց ջանքի, առանց աշխատանքի կատարելութեան համել, — և ահա այդ գէպքում, եթէ նոքա տեսնում են, որ իրանց հետ արհամարհանքով են վերաբերում, նոցա սրտում ֆացած վերջին կացն էլ հանդչում է: Միւս կողմից, — շարունակում էր նա ձախնը դողացնելով, որ սաստիկ տպաւորութիւն է գործում լսողների վերայ, — անարատ սիրտը մարդկանց ատել չի կարող: Ատելութիւնը վեսակար բան է. անհամբերող ոգին կորցնում է որ և է լուսաւոր գաղափարով ոգեսրւելու ընդունակութիւնը:

Ամիրանօվը նկատեց, որ իւր խօսքերը Հեղինէի վերայ սաստիկ տպաւորութիւն գործեցին:

Հետեւալ օրը մանելով նակունիների մօտ նա տեսաւ, որ օրիորդը խորասուզւած է ընթերցանութեան մէջ, բարեկամաբար խրախուսեց նորան և սկսեց երկար ու բարակ խօսել կանանց կրթութեան օգտի մասին:

Հեղինէի միտքը զբաղւած էր կանանց ազատութեան, էմանսիպացիալի հարցով: Ամիրանօվը այդ գիտէր և երբեմն, աչքի տա-

չով թաքուն նայելով նորա վերայ, ինքն իրան ասում էր, — այդ բոլորը քո սիրուն, տաքղիսի ցնորքներն են, մարդու գնաս՝ կը խոհեմանաս: Քեզնից թունդ օրիորդներ ենք տեսել, բայց մարդու հմտութիւնն ու հաստատ կամքը ամեն բան ուղղել են:

Կրթութեան մէջ Ամիրանօվը ամենից բարձր էր դասում երաժշտագիտութիւնը. թէև շատ քիչ էր պատուահում, որ նորա հոգին զմայէր երաժշտութեան քաղզը հնիւններից, բայց նա երաժշտագիտութիւնը անհրաժեշտ էր համարում բարձր դասին պատկանող կնոջ համար, երաժշտութիւնը հասարակութեան մէջ փայլելու լաւ միջոց համարելով: Հեղինէն շատ լաւ էր դաշնամուր ածում: Ամիրանօվը ժամերով ստիպում էր նորան ածել, բարձրաձայն շացտնում էր իւր հիացումը, գովում էր նորա ձիրքը և երկար ու բարակ խօսում էր երաժշտութեան նշանակութեան և այն խորը ազդեցութեան մասին, որ նա զործում է մարդու. սրտի վերայ:

Անցաւ մի շաբաթ, և Հեղինէն սկսեց մտերմանալ Ամիրանօվին, համարելով նորան իրանց տանը այցելող սակաւաթիւ երիտասարդներից ամենաազնիւը և ամենախելօքը, և շուտով հաւանութիւն տեց, եթե որ Ամիրանօվը պատկելու առաջարկութիւն արեց:

Հեղինէն զգում էր, որ Ամիրանօվին դեռ բոլորովին հոգով սրտով չի սիրում, ոչ էլ մարդու գնալու մեծ փափագ ունէր, բայց որ միտքն էր գալիս քեռակնոջ հետզհետէ սաստկացող գանդառները և անվերջանալի փնթփնթոցը ու նորա խորհրդաւոր շնչոցը քեռու հետ, ամուսնութիւնը փառք էր երեւում ազդակի կեանքի հետ համեմատելով: Քեռու տանը Հեղինէն իրան վատ էր զգում. իշխանուհու արհեստական քաղցրութիւնը, վարմունքի իշխանական եղանակը և նորա որբութիւնը ցիշեցնող անվերջանալի ակնարկութիւնները, իսկ երբեմն մինչեւ անգամ և դառն նախատինքները՝ անտանելի էին զարձնում նորա վիճակը, չը նացելով որ նորան շատ էր սիրում իւր բարեսիրո քեռին, որ, ինչպէս առաջ էլ ասացի, ցերեկը համարեա սկի տանը չէր լինում կամ թէ տուն էր գալիս մի խումբ հիւրերի հետ: Հեղինէն վաղուց համոզւել էր, որ իւր և քեռակնոջ ջուրը մի առւով չի կարող գնալ. ինչ որ ասում է, ինչ բան որ բունում է, իշխանուհու սրտովը չի գալիս, փնովում է. ա'յս այսպէս չէ ո՛ւ, ա'յս չի ընդունւած հասարակութեան մէջ, ա'յս սազ չի գոյ

ջահել աղջկան. ա՛յ, կը պսակւես, այն ժամանակ ինչ կ'ուզես արա, — լոււմ էր նա շատ անգամ իշխանուհուց և այդ պատճառով ամուսնութիւնը նրան վարդագոյն, հրապուրիչ էր երեւում:

— Ենորհաւոր լինի, հոգիս, — աղաղակելով ներս ընկաւ նորա սենեակը Կատուան նշանախօսութիւնից մի քանի օր յետոյ: Ի՞նչ հիանալի մարդու հետ ես պսակւելու. նա քեզ թագուհու պէս կը պահի, կը բախտաւորացնի: Դու որ՝ բոլորովին արժանի ես այդ բախտին, Հեղիկ:

Հեղինէն երախտալից սրտով նայեց ընկերուհուն և սիրով համբուրեց նորան:

— Գիտեմ, Կատուա, որ դու ուրախ ես իմ բախտաւորութեանը: Ամիրանօվի հետ վաղուց ես ծանօթ:

— Ի հարկէ. նա իմ մարդու ընկերն է:

— Մարդդ գեռ չի եկել:

— Զէ, նա մի ամսից շուտ չի վերադառնայ: Վաղը ես նրան կը գրեմ, ուրախութիւնից չի իմանայ ինչ անի: Գէորգը ինձ շատ անգամ է ասել. քո Հեղինէն հիանալի աղջիկ է, Աստուած նորան երջանիկ ապագայի արժանացնի:

— Ճիշտ է, — մոտածում էր Հեղինէն նշանդրէքի նախընթաց օրը, — Նիկողայոսը ինձ զգուշացնում էր, որ առանց սիրելու ըլ պսակւեմ, բայց միթէ բարեկամութիւնը, ո՛չ, բարեկամութիւնից էլ զօրեղ համակրութիւնը՝ նոյնալիսի սուրբ զգացմոնք չէ և չի փոխւում սէրի: Ամիրանօվը շատ լաւ կողմէր ունի, խելօք է, զգայուն սրտի տէր, բայց նորմնում մի ինչ-որ անըմբոնելի յատկութիւն կայ, որ ինչ անում եմ՝ չեմ կարողանում որոշել ու սահմանել: Ափս' ս Նիկողայոսը այսուեղ չէ, նա շատ սուր դիտող է և անպատճառ իմ տարակուսանքս կը փարատէր: Բայց ի՞նչ տարօրինակ մարդ եմ ես, — ասաց նա, կարծես ուշքի գալով, և նորա պայծառ, սիրալիր հայեցքը կանգ առաւ նշանածի պատկերի վերայ... Քի՞չ բան կարող է անցնել լուրջ և ուսումնական տղամարդու մտքովը, որ մեր, աղջիկներիս հասկացողութիւնից վեր է... շատ կարելի է, այն ժամանակ երբոր նորա երեսին յայտնուում է այն անըմբոնելի նշոյլը, նորա ինեւը զբաղւած է լինում աղնիւ ու վսեմ մասմունքներով... Ացդպէս էլ պէտք է լինի անպատճառ, բոլոր փաստերը նորան նպաս-

տաւոր են, անցաւ Հեղինէի մաքովը և նորա դէմքը սկսեց աւելի և աւելի գւարթանալ: Մենք միասին կը պարապէնք, կ'աշխատենք, նա կը լրացնի իմ կրթութիւնը, ընդհանուր ձգտումներով, գաղափարներով կը ոգեւորւենք, միթէ՞ այդքանը բաւական չէ որ ես նորան հոգով սրտով սիրեմ: Նա երէկ ինձ ասում էր, որ կեանքումը ոչ մի ժամանակ նորա միրտը այնպիսի քաղցր բոպէներ չի զգացել, ինչ-ալէս ինձ հետ: Նա սիրում է խեղճ որբ աղջկան ամենաանշահասէր սիրով,—այսքան ժամանակ միթէ՞ մէկն ու մէկը ինձ վերաց նորա նման սաստիկ տպաւորութիւն դործել է: Սիրտս ինձ ասում է, որ քեզ հետ բախտաւոր կը լինեմ, Միքայէլ: Այսուհետեւ դու իմն ես: Մէ՛ծ է շնորհքդ, Աստուած, այսուհետեւ էլ ես մենակ չեմ,—համարեա արտասանելով մտածում էր Հեղինէն, լի հաւատով և յոլով դէպի լաւը, դէպի բարին:

Միւս առաւօտը նա սովորականից դուրս ուրախ ու գւարթ դուրս եկաւ իւր սենեակից թէ լսմելու:

Մէկ—երկու շաբաթ անցած իշխան նակունին շքեղ հարսանիք կատարեց: Բարի գեներալը ուրախութիւնից ոտների վերաց պար էր գալիս:

—Տե՛ս, հաւատարիմ եղիր մարդուդ, շատ կորիճ տղաց է, սկի նման չէ այժմեան մեծամիտ լակուներին,—ճանապարհ էր դնում նորան գեներալը:

Աստուած քեզ բախտի արժանացնի, աւելացրեց նա յուզւած ձայնով, օրհնելով նորան պսակից առաջ, և գրկեց:

Իշխանուհին լացակրինած յացնում էր նրան իւր սէրն ու դորով և ասում էր բոլոր ծանօթներին, թէ ինքը անշափ ուրախ է տեսնելով իւր սրտի գուրգուրած փափազի կատարումը, այն է Հեղինէին իւր սրտի սիրած մարդուն տալը, և թէ յիմարութիւն է ժամանակի պահանջների դէմ վարւելը:

(ԱՅ ՀԱՐՄԱՆԱԿԵՐ)

ԹԵ ԹԱՓԱՌՈՒՄ ԵՄ

ՊՈՒՆԻԿԻՆ-ից

Թարգմ. Ա. Կրասիլնիկեանի

Թէ թափոռում եմ մեծ փողոցներում,
Թէ մտնում եմ բազմամարդ տաճար,
Թէ նստում անմիտ պատանեաց կշտին,
Խոր մտածման մէջ կորչում եմ իսպառ:
Ես ասում եմ միշտ՝ դարեր կընթանան,
Եւ որքան այստեղ մենք կանք կենդանի,
Ողջ պիտի իջնենք այն անդարձ աշխարհ,
Եւ մէկի ժամը մօտ է վախճանի:
Թէ նախում եմ ես մենաւոր կաղնուն,
Ես մտածում եմ՝ մօտ սպագալին
Այդ նահապետը ինձ էլ կը թաղի,
Ինչպէս թաղել է և՛ մեր սպագերին:
Թէ փաղաքշում եմ նոզելի մանկան
Ես միշտ ասում եմ՝ հոգեսկ իմ ներիք,
Քեզ համար ահա տեղ եմ զիջանում,
Ինձ պէտք է փթել, իսկ դու դեռ ծաղկի՞ր:
Օրեր, տարիներ ես սովորել եմ
Այս մտածութեամբ միշտ անցուցանել,
Եւ գալիք մահւան ու տարեգարձը
Զանում նոցա մէջ շուտով գուշակել:
Եւ ուր ճակատագիր ինձ ման կուղարկի,
Պանդխտութեան մէջ, կունում թէ ծովում,

Թէ անշունչ դիակս անհետ պիտ կորչի
 Իմ այս հարեւան դալար հովիտում:
 Թէպէտ անզգալ իմ բոլոր մարմնին
 Ողջ մէկ է ուր որ փթելու լինի—
 Սակայն սիրալիք մօտ իմ վախճանին
 Ես էլի կրկին հանգչիլ կ'ուզէի:
 Սառ գերեզմանիս մուտքի առաջև
 Թող մատաղ կեանքը ժամանակ ու խաղալ,
 Եւ բնութիւնը լի գեղեցկութեամբ
 Փալլի լաւիտեան շիրիմիս վերայ:

1884 թ. Բագու:

ՆԱԴՍՈՆԻՆ

ԿԱՍՏ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԻ

Անագորոյն ճակատագիրը քո դժբաղդ
Լոկ հալածանք վիճակել էր քեզ բաժին,
Եւ դու պօչտ, որպէս զինւոր ճշմարիտ—
Մարտ մզելով մինչև ըռպէն քո վերջին
Պաշտպանեցիր միշտ վսեմը և բարին:

Քո երգերը դառն, տիսուր թախծալի
Հառաջանք են տանջւած, վշտոտ վեհ սրտի.
Եւ կրելով ծանը խաչը այս կեանքի
Զանում էիր լուծել դժւար, ծանրագին
Ժամանակիս լարդ հարցերը կնճռալի...

Բայց ապարգէւն. կոյր ամբոխը մեր տգէտ
Անշարժութեան խորին քնով մրափած—
Քո քաղցած եղբայրական այն սուրբ սէր
Զը հասկացաւ—կրկին ըռնած իւր ուղին
Նա գնում է անուշագիր, անտարբեր...

ՆՆՁԵԼ...

ԿՈՍՏ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆԻ

Ննջե՛լ, քնե՛լ յաւիտենական
Խաղաղ մի քնով,
Մոռացւել ընդ միշտ, և կեանքի հոգսից
Մնալ անվրդով—
Այս բւռը կեանքի ճնշում է սաստիկ,
Զը կայ մեզ անդորր,
Տիրել է աշխարհ անհամար չարիք
Վշտեր բիւրաւոր:
Ուրը նենգաւոր, գեղը շպարած՝
Ամեն տեղ կեղծիք—
Արդարութիւնը ոտնակոխ եղած,
Յոյսը խարուսիկ...
Կեանքի ալեաց հետ միշտ և շարունակ
Կռիւ ենք մզում,
Եւ այսորէս օրերը տխուր ու դարտակ
Դնում են, կորչում...
Հոգիս ձանձրացած այսքան վշտերից
Հանգիստ է ուզում—
Եւ օր ու գիշեր այս դառն մտքերից
Սիրտս է մաշւում:
Ննջե՛լ, քնել... յաւիտենական
Խաղաղ մի քնով—
Մոռացւել ընդ միշտ, և կեանքի հոգսից
Մնալ անվրդով...

Բ Ղ Թ Ե

Պ Ե Ր Ճ Պ Ո Ռ Ե Ե Ա Ն Ց Ի

Նուէր մեծ, բժշկապետ Յովհաննէս Գասպարեանցին:

(Եաբունակութիւն 1)

Ի Զ.

Տ Ա Ւ Տ Ա Ւ

Կարբումը, կիզիւմատուռի հիւսիսային կողմը, շատ ժամանակ չէ՝ մի ձեռք տուն է բուսել, մի երկու յարկեայ փոքրիկ շէնք:

Խնքն ըստ ինքեան այդ շէնքը մի երեւելի և նշանաւոր բան չէ, փոքր ի շատէ ճաշակը զարգացած մարդի համար աչքի ընկնող ոչինչ չ'ունի. բայց ներկայ Կարբու նման մի զիւզի համար այդ տունը լաւերից մինը կարելի է համարել:

Լաւ ասածս պէտք է հասկանալ վերնայարկի վերաբերութեամբ, ասպա թէ ոչ, ներքին յարկի վերայ ոչինչ ջանք չի դործ դրուած, անկարգ, անձև պատերով շրջապատած մի քանի ծակեր են, որոնք ոչ գոմի պէտք կը լինին, ոչ խոհանոցի ու մատանի, ոչ գրաստ կապելու մօրքի տեղ է թողած, ոչ վառարանի ծխնելոցզ, ոչ գիւղական թռնրի համար մուխ քաշելու երդիկ և ոչ լոյս մանելու մի ծակ:

Այս իսկ պատճառաւ՝ շինուած օրից մինչև հիմի ներքնայար-

1) Տե՛ս «Մալբոք»-ի 1889 թ. № 12 և 1890 թ. № 1, 2, 3, 4:

կումը շունչ կենդանի եթէ որոնելու լինիս, ցամաքային խոնաւասէր գորտերից ու հողաբնակ ժժմունքներից աւել ոչինչ չես գտնիլ։ Տան տիրոջ ուշըն ու միտքը, բոլոր հոգացողութիւնն ու ծախսած դրամը սպառուել է վերնայարկը զարդարելու և արևելեան ճաշակով կարմիր և կանաչ նկարներով լցնելու վերայ։

Պարսիկ ծաղկաբարը հարեմական, ախտաբորբոք սեղեխների կենդանագիրներ ծեփելով սենեակների պատերին, համակերպուել է, երեխ, տան տիրոջ ժամանակակից հանոցքներին և դիպուածական արամաղութիւններին։ Դիպուածական և պատահաբար՝ որովհետև տան ջահել տէրը շինութիւնն սկսելուց մի քանի օր յառաջ միայն զգաց իսկապէս, որ ինքն էլ նորահաս երիտասարդ է և բնական հակումն ունի դէպի գեղեցիկ սեռը։

Նորաշէն պալատը, եթէ լողների ականջին ծանր չը հնչէ այս մեծաբանութիւնը, և իւր տէրը շատ չար ու բարի լեզուներ սրեցին իրանց դէմ և բամբասանքների ու ասակուսէքի տեղիք տուին։

Խօսողներն իրաւունք ունեին. տունը շինուել է, կահաւորուել է, կարասիներով լցուել է, բայց ոչ տէրը մի կտոր հաց է կերել մէջը և ոչ տես ու ծանօթներ մի կթղայ օղիով շնորհաւորական բարեմաղթութիւններ են արել։

Յորեկները դռները բոլորովին փակ են եղել, իսկ գիշերները մի պառաւ կին միայն ձիթի ճրագի աղօտ լուսով, ուրուականի նման, իւր երկար ստուերն է տարածել անկիւնից անկիւն, սենեկից սենեակ։

Երգուել չեմ կարող, վերջերումս գիշերներ են պատահել, երբ տան երիտասարդ տէրը իւր հնմաշ անկողինը գետնին փռուած թողնելով ինքը ժամերով երթեւեկել է փակուած սենեկի մէջ և յուսահատ կամ յուսապարար զլորուել ու խոմփացել մինչեւ լոյս։

Պարզելու համար ասենք, որ տան տէրը, որ թոյլ է տուել իրան այս շուալութիւնը, մեր բարեկամ Բղդէն է. իսկ պառաւը՝ իւր մացը Սալբին։

Բղդէն շինութիւնն սկսել տուեց Երևանից վերադառնալու օրը, և ի պատիւ նորա՝ պէտք է խոստովանած՝ ոչինչ չը ինայեց իւր շէնքը փառազարդելու համար, որպէս զի, ինչպէս ինքը շատ անդամ յեղեղում էր իւր սրտի խորքում, ջհուտ Աղաջանի աշքերը շլայնի իւր հարստութիւնով, նողիկին իրանը շինի, փափագին հասնի

և յետոյ Աղաջանին լակ ձուի նման պատովը զարկի, հողի հետ հաւասարացնի:

Բղդէն շինութիւնը կարգի դրեց ու ինքն իւր նոր գործին տիրացաւ:

Այդ էր պատճառը, որ ցորենառուի թափառական պաշտօնը թոյլ չէր տալիս նրան վայելել իւր պալատի հեշտութիւնները:

Սալբին էլ, իբրև հին կին, աւելի գերադաս էր համարում իւր մխոտ թոնրատանն օրն ի բուն փափսալ, քան թէ աղտոտ ուղերով սենեակների փուռածքը տրորել:

Ուրիշ գործ ու զբազմունք չ'ունէր Սալբին. նա շարունակ պարագած էր իւր որդու զնած դիւրագին յախճապակեայ պնակները լուանալով, որոնք Կարբու համար նոր շւայլութիւններ էին. ըստ որում գործածականը տեղական շէնքի հասարակ կաւէ անօթներ էին:

Պառաւը լուանում էր, ցամաքեցնում էր, դասաւորում էր իւր թոնրատան դարակների վերայ և կրկին մի ժամից վայր էր բերում և էլի լուանում:

Սալբու սովորական զրոյցընկերը լինում էր Տուտու նանը. և Տուտուն էր, որ շարունակ հանդիպում էր Սալբուն պնակները լուանալուս:

—Հերի՛ք է, հերի՛ք, Սալբի բաջի՛, ախար ընչո՞տ են, որ ացդքան լուանում ես, առած սրից դէսը զեռ շեն իւղոսուել, աղէդ տան երես չի տեսնում, դու էլ Բայազիդից բերած ժանդոտ պղնձէ ամանումն ես զբուր ուտում, իսկ թանով ապուրի համար՝ հողէ քերեղանը կայ ու կաց:

—Ընչի՞ աղտոտ թողնեմ, փոշին կը նասի, շնորհքը կ'երթայ, Տուտու. ջա՞ն, տես ի՞նչպէս ֆրֆուում են, Սալբին մեռնի՛ սրանց առնողի ջանին, ոգևորուում էր Սալբին և ուրախութեան արտասուքը ծպծպան աչքերից ցողում:

—Աստուած քեզ բաշխի՛ մինուճարիդ, բարո՛վ մի խորոտիկ հարս բերես, նոր շինած քեօշկ ու սարայումը. շորոր տալով առջեւդ պտոյս գայ, միշտ ցանկութիւն էր յայտնում Տուտուն և առաջարկում Սալբուն հանել ծոցից իւր քթախոտի տուփը:

—Զէ՞ որ երեկ բուռնութուդ պարկը լցրի, Տուտու, դու հէնց դորա համար ես գալի՞ս, յանդիմանում էր շատ անգամ Սալբին Տուտուին, բայց միշտ էլ նորա պարկը լցնում էր:

Մի օր Տուտուն, ըստ սովորականին, ներս մտաւ Սալբու մատ և սառած մնաց:

Պառաւի աշքերը խոր ընկած էին, չորացած արտասուքի հետքերը նշմարուում էին, գոյնը դալկացել էր, թիկունքը կռացել, երգուակրուել էր: Մի խօսքով, Սալբին այսօր կատարեալ զառամութեան կուտակրուել էր: Մի խօսքով, Սալբին այսօր կատարեալ զառամութեան հասած պառաւի էր նման, որ՝ այլ ևս գործելու ոյժ չունենալով՝ ինամատար հոգածուից միանգամացն զուրկ՝ մահ է խնդրում և անողոք մահը փախս է տալիս նրանից:

Սալբին նստած էր պրտուեաց խսիրի վերայ, պնակները անկարդ ցրուած էին առջելը, մի հատ էլ ձեռքին էր մնացած, երեւում էր՝ ուզեցել է լոււանալ և չի կարողացել:

—Ի՞նչ է, ի՞նչ է պառահել քեզ, Սալբի բաջի՛, մօտ վազեց Տուտուն, այդ ի՞նչ օրն ես ընկել:

—Ոչի՞նչ, խոր հոգւոց հանեց Սալբին:

—Ի՞նչպէս ոչինչ, այստեղ կոյր մարդ չը կայ, ամեն մի աչքիդ բունը մի մի ընկուզից աւելի են տողել, մեծացել, գերեզմանից դուրս քաշած չորեքօրեաց Նազարոսի գոյնն ես ստացել:

—Ի՞նչ անեմ, Տուտուն, մօր օրօրոցը կրակ պէտք է ընկնէր, որ ոչ մեծանար, ոչ որդու ցաւեր տեսնէր:

—Ի՞նչ է քա, չը լինի՞ Բղդէդ, հեռի իրանից, մի հանդիպսի է (պատրիարք) հանդիպել:

—Հանդիպսի՝ հանդիպի իմ երեխին հանդիպսի հանդիպեցնող:

—Ախար ի՞նչ կայ:

—Էն կայ՝ որ երեխիս խելքը գլխին չի:

Այս բացականչութիւնով Սալբին պատմեց, թէ մի քանի գիշեր է միացն, որ իւր որդին տուն է գալիս, այն ինչ նոր պաշտօնին տիրացած օրից, մեծ մասը զիւղերումն էր մնում, թէ իւր Բղդէն մտնում է սենեակներից մէկի մէջ և փակուում, ոչ հաց և ոչ ջուր է պահանջում և շարունակ բաց աչքով լուսացնում է՝ ինքն իրան խօսելով և հառաջանքներ ու սպառնական խօսքեր արտասանելով: Պատմեց Սալբին՝ թէ ինքը բազմիցս դուռը բաղիսել է, աղաշել, թախանձել է՝ տուն թողնել իրան, յայտնել ցաւերը, բայց որդին անողոք է մնացել մօր պաղառանքներին և երկու խօսքով ահ տուել, թէ նա իւր գլուխը մահու կը տաց, գաշոյնով սեպհական փորոտիքը կը թափի, եթէ միւս անգամ իրեն ձանձրոյթ պատճառեն:

Վերջ բանին պատմեց Սալբին, թէ ինքը մի հնարք է մտածել, հենց որ որդին ձիուց իջել է նա մի տեսակ յաջողեցրել է հեաը ներս մտնել նորա սենեակը, փառուել է նզդէի ծնիներով և մայրական սոխնքն ու ծծած կաթը բարեխօս կացուցանելով՝ կարողացել է գուրս կորզել իւր հարազատի սրտնեղութեան շարժառիթը:

— Սաքի թէ ի՞նչ, հետաքրքրուեց Տուտուն:

— Թէ էն՝ որ իմ սիրելի զաւակը սիրահարուած է:

— Աւրեմն դու դորա համա՞ր ես գլուխտ մահու տալիս, ծաղրեց անմիմիթար մօրը խելացի Տուտուն. օրն էսօր կերթամ խնամխօս և լոյսը չը բացուած՝ նշանը կը տանենք:

— Հենց էդ է, որ տղիս ցաւի գեղապեաը, նորա դարդի դարման պտուղը քաղած ու տարած է, այլ ևս ձեռք չի ընկնիլ, հոգոց հանեց նզդէի մայրը և պարզ ասաց, որ իւր որդին ցնդած է ջհուտ Աղաջանի գուտոր նողիկի սիրով, իսկ, ինչպէս յայտնի է, նողիկն երկու տարի է, որ անուն արած է, տիրունի է և մի քանի օրից կը պսակին, կը տանեն:

— Ե՛հ, քո ճարը գա՞յ, քամահրեց Տուտուն, մէկը չը լի՞նի, միւսը կը լի՞նի, աղջիկն աղջիկ է, Կարբուց մի՛ ուզիլ, ուրիշ զիւղից տար, նզդէիդ հիմի ամենքը կ'ուզեն փեսայացնել. դու իրանից հարցրո՛ւ, յոյս տուեց Տուտուն, որի վերայ մատը դնի, ես մի օրումը գլուխ բերեմ:

Որդեսէր մօրը չը կարողացան սփոփանք պատճառել կարեկից հարեւանի մսիթարական խօսքերը. նա յայտնեց, թէ իւր որդին կորական վճռել է Աղաջանի տունը բնաջինջ առնել, Բոտինենց Սհօցի ծուխը կորել և վերջն իրա գլուխն սպանել, եթէ գործն այդպիսի վախճանի համելու լի՞նի:

Վերջապէս Սալբու խօսքերիցն իմացուեց, որ Տէր-Յակովիքի պատճամաւորութիւնն անյաջող է եղել, թէ ջհուտ Աղաջանը վըճռողապէս յայտնել է, որ եթէ աշխարհումն մնան միայն ինքն ու նզդէն՝ նա այն ժամանակն էլ իւր աղջկանը կը թթուացնի, կը քայախացնի, կը պառաւացնի և նզդէին չի տալ:

Տուտուն քթի տակին ժպտաց:

— Իսկ եթէ ես գլուխ բերեմ, ինձ ի՞նչ կը տաք, հարցրեց նա:

— Ի՞նչ քո սիրով կը ցանկանալ:

— Խոսքով վկաւ չի եփուիլ, իւղ ու բրինձ է հարկաւոր, բեր տեսնեմ՝ ո՞րքան ես ցնծում, որ ես ամեն դժուարութիւն հեշտացնեմ:

— Ե՛հ, Տուտու ջա՞ն, շատ մեծ մեծ ես բրթում, կուրանա՞յ ու խաւարի նզգէիս մէրը, նորա առաջին բոլոր գոները փակ են. երեխէս պատմեց, թէ ինքն էն ծակծկոսուելու Նողիկի հետ երեսէ երես խօսեցել է և նա խմ տղիս մարդառեղ չի դրել:

— Եղ ո՞ի՞նչ, դու փող ասա՛, որ աչքեր կապի, մենք էնսկս կ'անենք, որ Նողիկը մոմի պէս կը հալուի ու կամքի կը գայ, մենք էն հնարը գիտենք, որ եթէ գոները առաջին փակէք, երթիկովը տուն կ'ընենի:

— Տուտու ջա՞ն, էլ ո՞ր օրուայ համար ես պահել բարեկամութիւնդ:

— Ավար բան ասացի, սրբի դուռն էլ առանց խաչհամբուրի չեն գնում, զեռ. մոմն ու խունկը, մատադն ու գանձանակը չեմ ասում:

— Այ քեզ զուրբան, ինձ փողն ո՞վ է տուել, որ քեզ տամ, եթէ բանը զլուխ բերես, նզգէս քաշովդ մին ոսկի կը տայ:

— Հապա դու էլ ընչի՞ ես անունդ նազդասար աղայի մէր զրել, որ մի քանի սե փող էլ չ'ունիս ծոցումդ՝ քեզ համար ժամի ու աղքատի տալու :

— Թէ սե փողով բան զլուխ կը գայ, աչքի՛ս վերայ. հաւ ու ճիւ եմ ծախում, ձու ու բազուկ եմ ծախում, մէկ մէկ նզգէս սիրտն ուրախ ժամանակը սպիտակ փողեր է տալիս, թէ՝ ալէ՛, քեզ համար գանձանակի փող արա՛. էլ ի՞նչ երկարացնեմ, բաժինքումն բերած քսակիս մէջ տասը մանէթի չափ հոգեպահուստ ունիմ, թէ որ նզգէիս փափազը կատարուելու համար էդքանը բաւական է, վե՛ր կալ, վերջն էլ երբ Նողիկը մեր գոնով հարս մտաւ, կա՛ց ու ոսկու մէջ լեղ տո՛ւր:

— Առաջին ծախսերի համար հերիք է, գնա՛ բեր:

— Բայց չ'ասացիր, թէ մաքինդ ի՞նչ է, ի՞նչ հնարքներ ես գործ գնելու:

— Եղ բանից ձեռքերդ լուա՛, տասը մանէթ չէ, որ քաշովս մէկ ակն ու մարգարիտ տաք, իմ բերանիցս ոչ տաք գուրս կը գայ, ոչ հոփ:

Շատ ինողից Սալբին, բայց Տուտուն մնաց անցողողդ, հետն

էլ սպառնաց, որ եթէ իրան չեն հաւատալ, մի շաբաթ չի քաշիլ,
Քղղէն իսպառ խելքահան կը լինի, կամ արենտէր դառնալով՝ Սի-
րիր կերթայ:

Այս խօսքերն էին, որով տասնեակ տարիներով զիզած Սալբու
կոպէկներն ու սպիտակ փողերը լոյս աշխարհ տեսան և Տուտուի
ծոցագրապանումը զետեղուեցան:

ԻԵ.

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ, ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

Փամբակաձորումն է Հ. անունով հայարնակ գիւղը: Նա ար-
քունի ճանապարհից շատ ծուանց է և ընկել է Արարանի ու Փամբակի
բարձրաբերձ լեռներից կազմուած մի խոր ձորի մէջ:

Այս գիւղի հետ հազորդակցութիւն ունեցող անիւի միակ ճա-
նապարհը գալիս է գիւղի արևելեան կողմից, իսկ արևմտքից մի-
միայն մի նեղ կիրճ է առաջնորդում ձիաւոր կամ հետևակ ճանա-
պարհորդին դէպի ձորաբնակ կիսավայրենի, բայց հիւրասէր ժողովուրդը:

Այսօր չէ՝ բայց տասը տարի սրանից յառաջ իւր գլխից ձեռք
վեցրած մարդը միայն իրան թոյլ կը տար առանց շատերի ուղեկ-
ցութեան վտահօրէն անցկենալու վայրի այծերի և մանրատուիկ
եղնիկների այս քարածերպերիցը և Հ. գիւղը մոնելու:

Ուրիշ ելք, կամ մուտք ամեն կողմից բնական լեռնալին սահ-
մաններով լնդհասուած են:

Զորամիջի է, ասացինք, Հ. գիւղը, բայց ինքը նստած է լե-
ռան բարձրադիր լանջի վերայ:

Այդ դիրքը լնծայում է զիւղին մի բանաստեղծական տեսք՝ ա-
րևելեան լայն ճանապարհով գիւղն եկող սայլաւորների, ձիաւորների
և հետևակների համար: Փոխադարձաբար՝ զիւղացիք էլ միջոց ունին
իրանց տների առաջից զուարձանալ իրանց մօտ շնորհ բերող ճա-
նապարհորդներին տեսնելով: Ուղում եմ ասել, թէ որքան գիւղի
արևմտեան կողմը սեղմուած է սարերի մէջ, հետևաբար մինչեւ գիւղի
ափը ըլ հասնես, մի տուն չես տեսնիլ, այնքան լնդհակառակին արե-
ւելքից մի լանսատարած, ծագկալից, սիրուն հոգիս լնդարձակուում
է և ծացը մինչեւ մեծ ճանապարհը հասցնում: Եթէ աշքերդ տուր

են, զբանդ նստի՛ր և հինգ վերստից եկողին նալի՛ր, հէնց կարծես, եկողը, թէզի բաժակի նման, մատուցարանի վերայ առաջդ է գալիս:

Աշնան վերջերն է. լեռների կատարները մէկ օր՝ տարիների հաշվութ կորցրած զառամեալ ալեւորի զլուխ են դառնում, միւս օրը՝ թիսագանգուր երիտասարդի կերպարանք են ստանում արեգակի քմահանութեան համաձայն. միմիայն հայի համար երկու նուիրական ալեզարդ ծերունի նահապեաներն են, որոնց վեհութեան յառաջ խոնարհում են Այրարատ աշխարհի բոլոր միւս բարձրաւանդակութիւնքը. Մասիսն ու Արագածն են, որ սպիտակափառ զլիներով հարաւից և հիւսիսից հովանաւորում են իրանց փոքր եղբայրներին:

Դարաչօբանու լեասուր, որ Փամբակի հարաւային կողմի սարերից ամենաբարձրն է և Հ. գիւղը տանող լեռնային ուղղաձիգ ճանապարհը, ամառն էլ վտանգաւոր է, թող թէ աշնան վերջին կամ ձմեռը Վատանգն երկու կողմից է. եթէ բաղդ ունեցար ազատ՝ պրծնել սարի զլիսի անընդհատ գիծ քամիներից և բքերից, կարող ես անբազդ գտնուիլ և մի վայրկենի մէջ զլիսիցդ զրկուել և ձորն ի վայր անզլուխ թաւալազլոր մինչև տնդունդը ճանապարհորդել ու այնտեղ արծիւների ու անգղների համեղ կերպակուր լինել:

Ես ոչ ականատես և ոչ երաշխաւոր եմ, միայն ասում են՝ որ Դարաչօբանի բարձրութեանց վերայ բնութիւնն ինքն է; մարդակեր աւազակների համար յարմար որջեր սոեղծել:

Ահա այս ահօնելի սարիցը, աշնան վերջին, անվիսաս ցած իջան երկու հոգի և երեսներին խաչ քաշեցին, երբ Հ. գիւղի արեւմտեան ափի մարագներից մէկի պատի տակին հանգիստ առան:

—Կինարմատի խելքով լնկանք, աղէ՛ (Տայրի՛), ասաց երիտասարդ տղամարդը ձիու սանձը բռնելով, ես օձի միս կ'ուտեմ և միւս անգամ կրկին այս տեղով չեմ վերադառնալ:

—Իմ ցոյսս հաստատ էր, որդի՛, որ Հ. գիւղի հրաշագործ տէրտէրի արժամաւոր օրհնութիւնը մեզ կը պահպանի. մինչև էսօր նորագուող դնացողներից ոչ մէկը փորձանքի չի հանդիպել:

—Ե՛հ, ինչ և իցէ, Աստծուն փառք տանք, որ էս անիծած սարիցն ազատուեցինք, և շտապենք՝ քանի մութը չի կոխել՝ էս անլեզու անասունի համար մի տաք գոմ ու կեր ճարել, մեզ համար էլ մի զլուխ զնելու տեղ գտնել:

— Սիրտդ հանդարս պահիր, զաւակս, մենք ուղղակի կ'իջնենք աէրտէրի տանլը. լուսահողի հօրդ հետ նա սրտէ ի սիրտ բարեկամ էր և Մողնու ուխտին տուրբ Գէորդ գալուս մի երկու գիշեր Կարբումը մեր տանը պատիւ է տեսել:

Մայր ու որդի՝ ձին քարշելով՝ գիւղը մտան և առաջին հանդիպած ծերունուց քահանացի տունը հարցրին:

— Ի՞նչ գործ ունիք մեր տէրտէրի հետ, մայրս, պատասխանեց ալեւորը:

— Տէրտէրը մեր ծանօթն է, նորա մօտ պէտք է իջնենք:

— Ո՞ր գիւղն էք գնալու:

— Ուզիղ տէրտէրի մօտ ենք եկել:

— Երկում է գրի գործ ունիք:

— Հրամելի՛ք:

— Որ էդպէս է, հետս եկեք, տէրտէրին ոչ էս գիշեր կարող էք տեսնել և ոչ վաղը:

— Ախար ընչի՛ համար:

— Էղ ձեր գործը չի, էս իրիկուն դուք իմ հիւրերն էք, հետս եկեք:

Անծանօթները ծերի խօսքերից ոչինչ չը հասկացած՝ կուրօրէն հետևեցին նրան:

ԽԸ.

ՎԵՐԻՆ ԳԼԽԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ, ԿԱՄ ՇԱՏԱԽՈՍ ԿԱԶԱՊԱԿ

— Հլա՛ բա՛րի բի՛կուն, ա՛յ քիր, ա՛յ ջհել բա՛լամ (Երեսառարդ), բա՛րով հզար բա՛րի էք ե՛կել մեր շէնը, մեր օ՛ջաղը, ա՛մեն ճա՛մփից հե՛շու: Ե՛յ, Քարհանանց ա՛ղջիկ, քէ՛ցվանի, դվո՞րն ես հլածա՛կուել, դէսն արի՛, տե՛ս, քե հմա ի՞նչ ա՛ղիզ զօ՞նաղ եմ բե՛րե: Ե՛, ա՛ ջհելնի, ա՛ քռանզաջնի, խի՞, բա դուք ուղո՛ւի չ'ունի՞ք, դուս թափեցէ՛ք, ձին քաշե՛ցէք, ա՛լափ տուէ՛ք, Ա'սոծու դօնաղնե՛րին պա՛տիւ տուէ՛ք:

Այս ուրախ բացականչութիւններով ներս մոցրեց ծերունին հիւրերին իւր յարկի տակ:

Հիւրերն էին մեզ ծանօթ ծուտուն և իւր որդին:

Տուտուն ստացաւ Սալբուց տասը մանէթը և նոյն օրը որդու ուղեկցութեամբ Փամբակու ճանապարհը բռնեց։ Երկրորդ օրն էր, որ նրանք Կարբուց դուրս էին եկել։

Տուտուն զարմացած՝ որդուն հարցասիրական նշան արաւ, երբ ծերունու յարկի տակ տեսաւ երկու ուրիշ օտարականներ էլ, որոնցից մէկը մի հաստամօրուս ուուսի մուժիկ էր, միւսը գլխի կէսը մէջ տեղից գերծած մեծափափախ ուղտապան, Զօրանքեարայ թուրք։

—Ո՞ կնիկ, ասաց ծերունին կիսաերեւանցու— կիսալոռեցու բարբառով և առողանութեամբ, որով խօսում են լնդհանրապէս փամբակեցիք և որը մենք աւելորդ ենք համարում կրկնելը. ա' կնիկ, շուտ արա՛ էս ալլազգերին հաց ուտացրո՛ւ, թող գնան հանգստանան, հարաներին էլ հրամացի՛ր, որ ջահէլներին առանձին իրիկնահաց տան, իսկ մեզ համար, մեր երկու ազիզ հիւրերի հետ միասին մեր փոքր տանը տուփրայ բաց արա՛, նատենք, չորս հորով մի քիչ քաղցր զրոյցներ անենք։

Տուտուն գլխով բացասական շարժումն արաւ և յայտնեց, որ իրեն համար ամօթ է տան տիրոջ պէս մի պատուելու ծերի հետ սեղան նատել, կամ թէ բերանի փակը արձակել ու խօսել։

—Չէ՛, պատասխանեց ծերունին, այսուհետեւ ոչ քեզ, ոչ իմ պառաւին վայել չէ չըխօսքան մնալ, կամ տղամարդից քաշուել, մենք երեքս էլ օրերս անց ենք կացրել, ասաց, թող ջահէլ հարաներն իրանց յարգելոր պահեն։ Դուք, կարծեմ, շատ զարմացաք, երբ ես ձեզ ասացի, թէ էսօր տէրաէրին չէք կարող տեսնիլ. ես կամենում եմ սեղանի վերաց մեր իրիցի մասլահաթն անել։

Եւ հիւրատէր տանուտէրն այսպէս սկսեց իւր շատախօսութիւնը, նախապէս ներողութիւն իննդրելով, որ ինքը շատախօս կաչաղակի նման պէսաք է ձանձրացնի իւր հիւրերին։

—Խնչպէս երեւում է, ձեզ յաբոնի է մեր տէրտէրի գրի զօրութիւնը, սրա նման զրբաց արար-աշխարհքումն երկուսը չի լինիլ. սրա մօտ դժնուած զրերը Սողոմոնն իմաստունի իւր մատներով գրածներն են։

—Պարզ բան է, որ էնպէս օջաղ կայ, որ հօրից ու պապից ժառանգութիւն է ստանում բացի հողը, փողը, չորքուանին, էլի մի էնպէս բան, որ շատէրի տանը չը կայ։ Էնպէս տուն կայ, որ բոլոր

եղբայրներն իրանց պապերի գիտեցած արհեստն են բանացնում։ օրինակի համար՝ հէնց մէկը մէնք. ինձ Զուհլակենց Դաւիթ են առում, Զուհլակենց տունը ողջ Փամբակին յայտնի է, ես էլ, իմ չորս որդին էլ, իմ բաժան եղբայրներն էլ՝ բոլորս Զուհլակ ենք։ Հէնց որ գաշտի գործը՝ վերջանում է, մէկս ու մէկս ոտներս հորումը քաշ ենք անում ու մակրւկը խաղացնում. այ, տես քո բարի աշքովը, Էն քննի փոսն է մեր Զուհլակի հորը, հէնց էս սհաթիս էլ կտաւը հինած՝ սանտրի միջովն անց է կացրած։

Տուտուն գլուխը տմբամբացրեց ի նշան համաձայնութեան։

—Մեր հարեւանենք էլ ներկարարենք են կոչուում, շարունակեց Զուհլակենց Դաւիթը, հէնց էս բոպէիս նրանց մէծի ու պատիի ձեռքերը կապուտ են, մեր գործած կտաւը նրանք լեղակի կարասն են կրխում, կապուտացնում ու տիրոջը տալիս։

—Տներ էլ կան, որ իրանց հին պապերից ժառանգել են մի մասունք, մի սուրբ աւետարան, մի խաչ և մինչև էսօր էլ նրանց քններից մէկում էդ սրբութիւնները բազմացրած են, ուխտ գնացողների փափագը կատարում են, նրանց տէրերն էլ էդ սրբի խաչ-համբուրովն են ապրում։

Տուտուն կրկին հաւանական նշան արաւ։

—Հէնց էղպէս էլ մէր քահանէն է, կցեց Դաւիթը. էդ Սոդոմնիքն ու Վեցհազարեակն իւր պապերիցն են իրան մնացել. իմ ողորմած հոգի պապս պատմում էր մեր տէրտէրի պապերի արած հրաշքները։ Ասում է՝ դրանց տան հօտաղները, մշակները, մինչև անգամ կով կիթող կնանիքը բոլորը սատանէք են եղել. ախար լսած կա՞ք, որ կին սատանաց լինի, բայց նրանք ունեցել են. Էն ողորմածիկը գրի զօրութիւնովը սատանէքանցը դուրս է կանչել զետնի տակից, վրաներիցը մի մի մազ պոկել է, աղաքարի տակն է գրել ու նրանց իւր տանն անվարձ անհաց բանացրել է. ախար էդ անիծածնիրը՝ ինչ տեղ ուղում ես պահիր իրանց մազը՝ կը հանեն ու կը կորչին, բայց հէնց որ աղաքարի տակը դրեր, դիպչել չեն կարող, զրանդ շունը կը դառնան։

—Ասում է մեր գիւղացիք՝ մէծ ու աստիկ մտիկ էին տալիս սատանէքանց ոտներին ու վրաները ծիծաղում, զլիններին վէր հատում. ախար սատանէքանց ոտները մերի պէս չեն, նրանց կրունին

յառաջ է, մատները կրնկի տեղը նւղիղ է, մեր տէր-Մանուկն էղ պէս բան չի անում, բայց սա էլ ուրիշ հրաշքներ է գործում: Աս իմ աչքովս տեսայ, էս մեր պատաւի (իւր կնոջ մասին է խօսքը) էլ միտքն է, թէ մի ամառ ինչ օդին խաղաց տէր-Մանուկը սար եկող Դաղախի թուրքերի զլուխը:

— Անիրաւները մեզ շատ նեղութիւն էին տալիս, մեր հանդն ու արօտն ուտացնում էին, որ չէր անցկենում, որ մի վնաս չը հասցնէին:

— Այ երէց, ասացի, աշխարհքի համար կաս և մեզ համար չքուում ե՞ս, շնորհքդ մի ցբյց տո՛ւր էս մարդակերներին, մեզ զրանց ճանգիցն ազատի՛ր:

— Տէրտէրը քթի տակին ժպուաց, Փարաջէն յետ քաշեց, գոռկածալի կաղամարը բաց արեց ու ասաց.— դէ հիմի սէհր արէք (ցուաբանալ):

— Թուրքերի օրէքն (Վրան) ու մերերն իրար զիմաց էին, մի բլի զլսի նրանք էին պալրած՝ մէկէլի վերաց մենք, իրարից հեռու էինք, բայց իրար պարզ տեսնում էինք:

— Հենց էնքան աչքովս ընկաւ, որ մեր տէրտէրը զրիչը զրեց իւր բութ մատի եղունկի վերաց ու մի բան խզմզեց: Մէկ էլ ի՞նչ աչքդ բարին տեսնի, մա՛րդ, կնի՛կ, երեխա՛յ, տասը տարեկանից սկսած՝ շորահան եղան, շորերը կապեցին զլսներին դրին, վրաները մնաց, հեռու հացիցս, հեռու լսողաց, շապիկ ու շապկահընկեր. ամենքը կոնաբռնուկ արին ու մինչեւ ծնկները բաց՝ եալլա կանչելով՝ ճանապարհ ընկան, զէպի մեզ են գալիս:

— Հա՛յ հա՛յ, զէ՛հ հա՛յ զէ՛հ, ձանի են տուել թուրքերը, քիչ մնա՛ց, մի՛ վախէք, սիրտ են տալիս իրարու, զետի վարար ու զոչգոյան տեղն անցկացանք, զժուարը պրծանք, շուառվ ափը դուրս կը գանք, կերթանք մեր հարեւան հայերի օրէքը կը քանդենք, կաւ երենք, կը կողովտենք, նրանց կը փախցնենք ու նրանց արօտատեղերը կը խլենք:

— Գու մ՛ ասիլ մ՛րս, տաքացած պատմում էր Զուհլափենց Դաւիթը, մեր տէր-Մանուկը թուրքերի աչքին մի մեծ գետ է երեացրել, որպէս թէ մեր ու նրանց արանքովը կատաղած զետ է անցկենում: Հիմի նրանք իրանց կարճ խելքովը գալիս են, որ մեզ տեղահան անեն, մեր իւրտը (ԿՅԵ-ԹՆ) խլեն:

—Տէ՛ր իմ արարիչ, ծիծաղու կոտորուել ենք, մասներս կտրես՝ չենք հասկանալ, փորներս բանել, վէր ենք թափել. —ամա՞ն, այ երէց, ձէն տուի, քեզ մատա՛ղ, մենք մեռանք, մի ճար տե՛ս, էսքան ծիծաղն իւր քամակից լաց կը բերի:

—Հէնց էդ խօսքի վերաց՝ տէրտէրն եղունկի վերայ թքեց ու փեշով սրբեց:

—Թաւրքերի աչքերը բացուեց, մնացին կիսաճանապարհին կանանչ տափի վերայ խայտառակուած, կանգնած: Վերջն ամօթները ծածկելու համար ձոր ու փոս մտան, թագ կացան, մկան ծակին հարիւր թուման կը տալին, որ մէջը պարտակուին. բայց տէրտէրն էլ սպասել չը տուեց, կրկին գրիչը հանեց, եղունգի վերայ գրեց: Նորից ևո զազախները դուրս թափուեցին ծակերիցն ու ինչպէս եկել էին, ևս կարգով, որպէս թէ, զեաը մտան ու յետ դառան: Կիսաճանապարհին երկրորդ անդամ տէր-Մանուկը թլիամը ջնջեց ու բոլորին գաշտի երեսին աղամմերկ թողեց:

—Էն օրից մինչեւ էսօր՝ մեր արօտատեղերից մի սմբուլ խոտ չի պակասում, մեր մի քննուոտ (անհշան) ուլլ չի կորիւ մեր վերջին երեխի քիթն արիւնոտ չի եղել: Հիմի նրանք տէրտէրին տեսնելուս եօթն օրէն ճանապարհից մինչեւ ծունկը զլուի են տալիս:

Վերջապէս ջուհլակ Դաւիթթը լոեց և Տուտուն պատմեց կարճառօտ իւր գալու պատճառը. Նորա ասելով՝ օտարները խլել են իւր քրոջ որդու նշանածին, աղջկանը գիր են արել, սիրով գողացել են, հիմի ինքն ուզում է տէրտէրի վեցհազարեակի շնորհիւ իրանց հարսնացուին օտարի ճանգից յետ խլել:

—Չեմ կարծում, որ մեր տէր-Մանուկն աղջիկ-աղայի գործում խառնուի, պատասխանեց ծեր Դաւիթթը, էն վաղ էր, ինչ էշը կազ էր, էն վաղ էր, որ մեր տէրտէրը մի զրչի ծէրով երկու ջահէլ սրտեր մխլատուզի (Տագնիր) պէս քաշում, իրար էր կպցնում ու թէ-կուզ եօթը լուծք դոմէշ լծէիր, չէիր կարող ջոկել, բաժանել: Հիմի տէրտէրը քաշուում է աղայ ու աղջիկ սիրահարացնելու գիրն ու թլիամը անելուց...

Ի Թ Բ.**Ա Ն Զ Ն Ա Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն**

Աշունը շատ պաղաւէս էր, պատերազմը խիստ կատաղի, ռուսի զօրքը Կարսը շրջապատել նատել էր, աշուարակցիք բոլորեքեան հարստացել էին, զինին և օղին մեծ գին ունէին և այդ առևտուրի մէջ աշտարակցիների հետ մրցումն անել ոչ մէկի գործը չէր. նրանց մի ոսքը Կարս էր, միւսն Արարատեան այգեգործ զիւղերում. բուն Աշտարակի գինին մի կաթիլը մի ոսկւով չէիր ճարիլ, լաւ կամ վատ, թունդ թէ թոյլ, թէկուզ մի երակն էլ թթուած՝ հաւաքում էին զիւղերից, լցնում տկերի մէջ և երեք-չորս օրից այս բոլորը իջրե Աշտարակու արտադրութիւն ծախում և վերադառնում, կրկին գիւղերն ընկնում:

Գնողներն էին սպաներն ու զինուորները:

Ոչ մի մարդ չէր վերագառնում պատերազմական դաշտից առանց նոր և թարմ լուրի, օրական մի քանի տեսակ համբաւներ էին տարածուում. մէկ հռչակուում էր, թէ Օսմանցին ջարդ ու փշուր խորտակուել է, նորա մի թևեն խաղառ ոչնչացել է, միւս բաժինն իւր գնդերով գերի է բռնուել և քշուել խորին Խուսաստան. միւս անգամ աղմուկն աշխարհնը վերցնում էր, թէ Քէհրուղովը յետ է մղուել բաշխօղուկներից մինչև Ասուրեանի ափը:

Այս լուրերից մի քանիսը հաստատութիւն էին գտնում, շատերն էլ հերքուում էին, նորութիւնները փոխադարձաբար ուրախութիւն և ախրութիւն էին պատճառում երկու զբացի այլակրօն ազգաբնակութիւններին. հայը հրճուում և փառք էր տալիս իւր Յիսուսին, որ հզօր է արել կրօնակից ուուսի քաջ բազուկը և խաչի անսասան զօրութիւնով ընկճել խորտակել է լուսնի արածայր եղջերները, խսկ պարսիկն առ երես ուրախութիւն էր արտացայտում, բարձր քաղաքական վարչութեան գրաւոր հրամանին համաձայն աղօթում էր իւր մէջիդներում՝ ուուսի զօրքի սուրը կտրուկ անելու համար. բայց իներքուստ նա մահաբեր հարուած և կարեվէր խոց էր ստանում իւր սրտին:

Մեծ մարդարէի հաւատարիմ աւանդապահ կանաչագլուխ մօլ-

լաները, սպիտակագլուխ ախունդները, նոյնպէս և փէշամբարի սերունդ՝ կապտագլուխ սէցիդները՝ թափառաշրջիկ դաւրիչների գործակցութեամբ ստիպուած էին երկու հակասական դեր կատարել. նոցաբերանից միանուագ և հով էր փշում և ջերմ; տաճարի ամբիոնից մօլլան ոգևորուած աւետում էր ոռուսի զօրքի յաղթութիւնը, իսկ մաննաւորապէս ամեն ուղղափառ խօսմի վերայ պարտք էր գնում՝ որ նա օրական երեք անգամ կատարելիք նամազից մէկը բաժին հանի իւր հոգուն, որպէս զի իւր մահից յետոյ Մահմեդի դրախտի մէջ հուրիփարիներով շրջապատած լինի, իսկ երկու նամազը նուիրէ Օսմանցութրի յաջողութեանը:

Վերոգրեալ խարութիւնը անջառել էր դարերով միասին ապրած հային ու թուրքին. նրանք միշտ իրարից զգոյշ էին և պատրաստ էին մնում. հայն իւր անձնապաշտպանութեան վերայ էր մտածում, պարսիկը վրիժառութեան և հայ գիւղերի բարիքին տիրանալու հոգումն էր:

Թուրքն իրաւունք ունէր, լինելով բնական ծով՝ իւր հողերը հային էր ծախում չնշին գնով մշակելու և օգոսուելու, իսկ ինքը պարապում էր միայն կեղեքելով և յափշտակելով:

Հէսց էդ պատճառաւ՝ պարսիկները միանգամայն հողի հետ հաւասարուեցան, պատերազմի առթիւ ծանրացած հարկերի ու հասերի ներքոյ ճկուեցին, ուամիկ ու շինական, բէզզադայ ու խանզադայ, մի կտոր հացի կարօտ մնացին. ընդհակառական, հայ գեղջուկը հարկահաններին էլ էր կշտացնում, իւր տունն էլ բարօրութեան մէջ էր պահում և նոյն իսկ պարսկին էլ էր օգնում, դեռ աւելորդը վաճառելով կարողութիւն էր զիգում:

Ի՞նչ անեն ուրեմն պարսիկները, որ չը նախանձեն. զիազող ըուպէի էին սպասում, որ վրէժ առնեն. կուտակուել էին մթին և լեռնաշափ ամպերը, որոտմունք և փայլառակունք միայն պէտք էր կարկտելու և շանթահարելու համար:

Սցոյ վայրկեանը մօտ էր:

Կայծակի արագութեամբ մի չարագուշակ գոյժ արձագանգ տուեց Կարսից մինչեւ Մասեաց ստորոտը, թէ ոռուսի զօրքը մեծ հարուած է ստացել Օսմաննեան բանակից:

Ոռուսաց նորեկ քաջընտիր Դրագունի (Վէշտաղողուն) գունդը՝ իրանց

անհմուռ զօրավարի առաջնորդութեամբ՝ շըջափակուել է առաջի կողմից տաճկական զօրքից, իսկ ետևից՝ ոռոսական անհաւատարիմ պարսիկ միլիցիացից (անհանո՞ն զօրք):

Աչ ոք չի կարողացել հսկել և իմանալ, որ միլիցիայի հրամանատար պարսիկ խանը գաղտնի բանակցութիւն է ունեցել տաճկի զլիաւոր հրամատարի հետ, իսկ այսուղ բոլոր պարսիկ զիւղերին է պատուեր առւել՝ որ նշանը տալուն պէս՝ նրանք յարձակումն գործեն հայ զիւղերի վերայ և սուրբ քաշեն ու կողոպտեն բոլորին, մեծից մինչեւ փոքրը:

Միանուագ կազմակերպուած է եղել Օսմանցու խորամանգ փաշաների ձեռքով մի գունդ Քուրյ հրոսակներ, որոնք այդ յաջող բուպէում տաճկական զրօշակով երեք թնդանօթի ուղեկցութեամբ պէտք է միանալին Ալսուրեանի կողմի ափերի պարսիկների հետ և աւերածութիւններ անելով՝ հպատակութեան երգումն առնելին հայերից:

Կարգադրուած է եղել, որ գեռ Աղէքսանդրապօլը չ'առած՝ պարսիկ բազմամարդութեան օգնութեամբ Երևանին տիրեն:

Օսմանեան հրամանատարն իրագործեց իւր ռազմազիտական ծրագիրը. ասում են, մի երկու ժամի մէջ բնաջինջ արեց պարսիկ միլիցիայի շնորհիւ կորիճ և գեղանի Դրագուններին, զոցանից երկութե երեք հոգի միացն դիպուածով ազատուել են:

Յացնի չէ, թէ միլիցիայի դաւագրութիւնն ի՞նչպէս հրապարակ եկաւ, բայց անհերքելի ճշմարտութիւն է, որ գեռ ոչինչ չեղած, գեռ թշուառական Դրագունների օրհասից մի շարաթ յառաջ, Արագածոտնեան և Արարատեան դաշտի բոլոր հայերը գիտէին իրանց դրացիների նենգաւոր խորհուրդը և իրանք էլ իրանց կողմից պատրաստուեցան:

Հէնց այս ճգնաժամերի մէջ մեր հերոս Բղդէն, արհամարհելով ամեն արհաւերք, մի կողմից իւր ցորենառութիւնն էր շարունակում, միւս կողմից հանգիստ չէր տալիս ջհուտ Աղաջանին:

Աղաջանը բացասական պտտասխան էր ուղարկել Բղդէին տէր Յակովի բերանով, անարգել էր իւր հոգատարութեամբ հացի տէր եղած չարչու ապերախտութիւնը և շատապում էր վերահաս փոթորիկներն անցնելուն պէս՝ պատկել իւր աղջկանը:

Բայց Աղաջանի բարկութիւնը կրկնապատկուեց, երբ մի երեկոյ իւր փեսայ Սահակը յանկարծ ներս բերեց քարշկուտելով մի պառաւ կնոջ:

Սահակը պատմեց, որ այս կնոջը բռնել է Աղաջանի շեմքի տակը փորելուս:

Կինը Տուտուն էր. նա իւր բերած թլիսմներն էր գործ դնում: Պատաւն այլ ևս թոյլ չը տուեց իրան խուզարկելու, իւր ձեռքով հանեց երեք կախարդական փաթեթները և դրեց Աղաջանի յառաջը:

Նա ոչ միայն չը խոստովանեց իւր մասնակցութիւնն այս գործի մէջ, ընդհակառակին հաւատացրեց, որ ինքը մեղաղել է նղդեին և մօրը իրանց անխիղն վարմունքի գէմ, որ չը վախենալով Աստուածային արդար բարկութիւնից՝ ուզում են սաստանայական հմայութիւններով երկու տարուան նշանը քանդել:

Տուտուն կծու երդումներով հաւատացրեց, որ ինքը մտաղիր է եղել անձամբ թլիսմի փաթեթները Աղաջանին ներկայացնել, բայց եթէ այդ նա չի արել և միանգամից դուռը չի բացել ու ներս եկել, այդ այն յարգելի պատճառաւ է եղել, որ ինքը նղդեին զրացու սպառի տակից հսկում էր և վերահասու էր իւր գործողութեանը:

Աղաջանը պատառուուելով թլիսմի դրերը՝ սպառնաց նղդեին Տուտուի ձեռքով, որ եթէ նա ձեռք չի բաշիլ իւր ցիմարութիւններից, ինքը սովորուած կը լինի զիմել աւելի զսպից միջոցների:

—Այնքան ծեծել կը տամ քեզ, ապապարանք արեց Տուտուի ձեռքով Աղաջանը նղդեին, որ շաբթէ շաբաթ կը գժուես:

Տուտուն վերադարձաւ և տասնապատիկն աւելացրած՝ պատմեց նղդեին, ասելով՝ թէ իւր անձը կապուա լեղակ է դարձել Աղաջանի և իւր փեսացուի մահակներից:

Լալով պատմեց Տուտուն, թէ չոքել համբուրել է Աղաջանի ոտքը, համաձայնել է սիրով կրել ամենատեսակ ծեծ ու պատիժ, միայն թէ իրան դարձնէին իւր ծոցից հանած թլիսմը, իբր թէ ինքը կամեցել է հաւատացնել, թէ այդ թղթերը ոչ թէ սիրահարական յուռութքներ էին, այլ իւր որդու դիմացաւի դրերը:

—Աղաչեցի, զլուխս ոտքի տակին մատաղ անել խոստացայ, շարունակեց Տուտուն, բայց ինչ օգուտ՝ ուշաթափուեցայ, փոքր մնաց

խելքս կորցնում էի, երբ յանկարծ երեք փաթեթների բոցը լուսաւորեց մութը տունը, օջաղի մէջ վառուող կրակը մի բոպեռմը լավեց իմ գառն քրանքի արդիւնքը:

— Նա'տ լաւ, զլուխը թափահարեց հղդէն, տեսնենք՝ թէ ո՞վ ո՞ւմնից վրէժ կ'առնի:

Բայց ոչ Աղաջանն իւր սպառնալիքը զլուխ տանելու ժամանակ ունեցաւ և ոչ Բղդէն կամեցաւ շուտով իւր մտքումն ցղացած խորհուրդը իրագործել:

Խնչ մանր և չնչին կրքեր յաղեցնելու միջոց էր, երկիրն արիւնը վերցրել էր:

Դեռ նոր բերանից բերան թուչում էր Դրագունի գնդի կոտորումի գոյժը, ահա Արագած լերան հիւսիսային հայ գիւղերը սատանեցան:

Արագածի արևմտահիւսիսային սահմանամօտ հայ գիւղերում Քրդի հրոսակներն իրանց համայնքների զլիսաւորների առաջնորդութեամբ Օսմանեան գրօշակը տնկեցին և հպատակութեան խոսուումն առան:

Քրդերից խրախուսուած մեր պարսիկ դրացիները խմբաւորուեցին և յարձակուելու պատրաստուեցան: Ընչասիրութեան քաղցը այնքան ուժգին էր նոցա մէջ, որ էլ չը սպասեցին Օսմանեան դրօշակին և թնդանոթին, այլ խմբակներով յարձակում գործեցին այս և այն գիւղերի վերայ:

Բայց որովհետեւ, ինչպէս ասացինք, հայերն էլ իրանց կողմից պատրաստ էին, ամեն տեղ պարսիկներն անյաջողութիւնի հանդիպեցան և յետ լնկրկեցին:

Կատաղի էին դարձել հայերը. տասն և վեց տարեկանից վեր, ամեն տղամարդ, բացի գաշոցնից, մի քանի կրակ ունէր վրան: Սիրելի էր տեսնել, թէ ինչպէս երեկուան խաղի գնդակով գուարճացող պատանին այսօր մի երկու ատրճանակ գոտկածալումն ամբացրած՝ մի ծանր հրացան էլ ուսին դրած՝ ցորեկ ու գիշեր հսկում է հերթով գիւղի շրջակայքում:

Հրացաններից շատերը սեպհական էին, մի մասն էլ սոսացել էին Պետութիւնից:

Չունեցողներին աէրութիւնը զէնք, վառօդ ու գնտակ էր ընձեռել:

Իւրաքանչիւր գիւղ իւր ամռուր և ապահով մասում ժողոված իւր ընտանիքը և երեխաներին, պաշտպանուում էր:

Ամեն գիւղ իւր զլիսաւոր հրամանատարը, իւր ցիսնապետներն ու տանապետներն ունէր. ամեն մէկի պաշտօնը որոշ էր և յայսնի:

Բացի մասնաւոր անձնապաշտպանութիւնից, մերձաւոր գիւղերը միմէանց փոխադարձ օգնութիւն համելու ուխտ էլ արել էին:

Կարբու ցիսնապետներից մէկն էր ջհուտ Աղաջանը: Նորան սոսորագրեալ էր ուրիշների կարգում և իւր փեսայ Սահակը, իսկ Կարբու ընդհանուր հրամատարն էր ինքը՝ իւր սիրելի հօտի անձնադիր հովիւ քաջասիրտ տէր-Յակովը:

Միակ բացակայ անդամը կարբու բնակիչների մէջ էր Բղդէն, որ իբրև պաշտօնական անձն, իրաւունք չ'ունէր մասնակցելու համայնական պարտականարութիւններին:

Մի քանի գիշեր Բղդէն էլ Կարբի չէր դալիս, ոչ ոք էլ հետաքրքիր չէր լինում իմանալ նորա գիշերելու տեղը:

Միայն Սալբին իբրև մայր՝ հոգւոց էր քաշում իւր որդու աեսքովը կարօտած: Նրան էլ միսիթարում էր իւր զրկից Տուտու նանը՝ օրական մի քանի անգամ դալով նորա մօտ քթախու քաշելու:

Մի երեկոց վերջնալունից յետոց, մինչ գիւղապահ զինակիրները զեռ նոր դուրս էին եկել իրանց հսկողութեան պաշտօնը կատարելու, Կարբու արևմտահիւսիսացին կողմից երեք ձիաւոր կամեցան Կարբի մանել:

Գիշերապահութեան հերթը ջհուտ Աղաջանի խմբինն էր: Աղաջանը գեռ տանից չէր եկել նորա տեղը կառավարիչ էր ժամանակաւորապէս իւր փեսացու Սահակը:

Վերջինս աեսնելով հեռուիդ ստուերները, կարգի հրաւիրեց իւր խմբին և գոչեց.

— Ա՞վ էք, մի՛ մօտենաք, ապա թէ ոչ գնդակահար գետին կը զլորուիք:

— Ես եմ, Սհօ եղբա՛յր, երկիւղ մի՛ կրիր, ձայն եկաւ. զիմացից:

— Խակ ուղեկիցներդ ո՞վ են, կրկին հարցրեց Սհօն:

— Եմ՝ ձիաւորներն են:

— Իրաւունք ըլ կայ գիւղը թուրքեր առւն թողնել. եթէ ուղում ես զալ, պէտք է դրանց յետ գարձնեա:

Դեռ հանդիպից պատասխան չը ստացած՝ Սհօն մի մարդ վա-
գեցրեց իւզբաշու ետևից:

Խոզբաշի կոչուում էր խմբապետը:

Այս խմբի իւզբաշին զիտենք որ Աղաջանն էր:

— Դու մի՞թէ ինձ չը ճանաչեցիր, Սհօ եղբա՛յր, կրկին ձայն
եկաւ հակառակ կողմից շատ ուշ: Երեւում է, որ եկաւորների մէջ մի
կարծ խորհրդակցութիւն էր կայացել:

Առաջին անգամից ճանաչեցի, ոլ. Բաղդասա՛ր, պատասխանեց
Սհօն, բայց եթէ հետիդ մարդիկը թուրք են, իրաւունք չ'ունիմ
առանց իւզբաշու հրամանի ներս ընդունել:

Մինչ այս, մինչ այն՝ Աղաջանը ձին հեծած եկաւ և իմանալով
գործի էութիւնը՝ յառաջ կանչեց Բղդէին իւր ընկերներով:

Գիշերը պարզ էր. լուսինը 18 օրական լինելով շատ ժամանակ
էր, որ իւր աղօտ փայլը սփոել էր աշխարհքի երեսին, բայց լուսնի
լոյսը բաւական էր յացնի կացուցանելու Բղդէի ձիաւորներին:

Նոքա էին Արագածի լանջի վերայ գտնուած Փ. գիւղի բէզ-
զաղէքանցից երկուոր, որոնք որքան և ազնուատոհմ՝ բայց մարդա-
սպան աւազակների համբաւ էին հանել ամբողջ գաւառումը:

Բղդէն Աղաջանին բարե տուեց և մօտ եկաւ:

— Ո՞րտեղից այս կէս գիշերին, սառնութեամբ հարցրեց Աղաջանը:

Գիւղերից. մի քանի խալվար ցորեն էին պահանջել, Թալինի
կողմովը ճանապարհ դրի և վերաբարձայ:

— Խսկ սրանց ընչո՞ւ ես քեզ հետ շրջեցնում:

— Թալինցի ձիաւ որների հետ եկայ մինչև սրանց գիւղը, նրանց
վերաբարձրի և սրանց հետո վերցը:

— Եւ երկիւղ չը կրեցի՞ր:

— Ընչի՞ց և ո՞ւմնից:

— Իբր թէ դու աշխարհքից տեղեկութիւն չ'ունիս, որ Օսման-
ցին սուսին յետ է քշել, քուրդը Թալինի գաւառն է մոել, սարի
վրայի պարսիկ գիւղերն էլ պատրաստուել են մեր վրայ յարձակուել:

Բղդէն երդուեց, որ ինքը Թալինի կողմից ցորենը ճանապարհէ
ձգել իւր հսկողութեամբ, թէ մի քանի օր է ինքը թուրք ու հայ դիւղե-
րում շրջում է և ոչինչ վտանգ կամ շփոթ չի նկատել:

Ապա դառնալով իւր ուղեկիցներին ասաց.

—Տղէք, տեսնում էք մեր հայերի պատրաստութիւնը, և լինի թէ ցիմարանաք, մոքներովդ չարութիւններ անցկացնեք, եթէ ուրիշներն էլ չը լինին, մեր Սհօն Հերիք է ձեզանից տասին գնդակախորով անել. տեսնում էք ինչպէս գեղեցիկ զրահաւորուած է, լաւ տնտղեցէք սորա դէմքին ու հառակին. ինքը նշանած աղայ է, մուրազի վրայ է, մի քանի օրից փափազին կը հասնի. մեր իւզբաշի Աղաջանի վեսացուն է:

—Աստուած տա'յ, Աստուած տայ, կրինեցին թուրքերը, կորիճ տղամարդ է երեւում, ջիւան է, ջահել է:

—Առանց շատախօսութեան վերադարձրու թուրքերիդ և ինքդ գնա քո տունը, խասութեամբ պատուէր արձակեց Աղաջանը:

—Տղէք, ձայն տուեց Բղդէն, իւզբաշի Աղաջանը նեղանում է, որ դուք գովութեամբ էք խօսում իւր փեսացուի վերայ, բաւական է, շնորհակալ եմ, կարող էք վերադառնալ ձեր դիւզը:

Թուրքերը գիշեր բարի մաղթելով յետ դնացին, իսկ Բղդէն մոտ կարբի և իջաւ իւր տանը:

—Դու քո հայը կերար, իւզբաշի Աղաջան, քո փեսայ Ահօյիդ հետ միասին, Ալին ու Մահմատ-Վալին այսուհետև ականակիր խաւարի մէջն էլ կարող են հարիւրաւոր մարդկանց մէջ որոշել քեզ ու քո փեսին, եթէ էս զիշեր չը յաջողեցրին, էգուց կամ էլօր երկուսիդ արեն էլ մէր կը մացնեն, զեղին ոսկիքը ձեր ուղուրին են նրանց զրպանը մտել. էն ժամանակը, նողիկ ջա՞ն, չոքէ չոք ոտս կը դաս:

L.

ՈՒՐ ԶԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆ ԱՆՊԱՏԻԺ Է ՄՆՈՒՄ

—Մողնին տարա'ն, սուրբ Գէորգը քանդեցի՞ն:

Աշա այն բօթասու լուրը, որ փոթորկալից քամու նման խոռոշեց առանց զորան էլ անհանգստութեան մէջ ծիացող և մոլորուած Մողնին շրջապատող հայ զիւղերը:

Աշապահ հարաւից, կարբի՝ հիւսիսից և Փարբի՝ արևմոքից. երեքից առաջին երկուաը զուտ հայաբնակ, վերջինը հայ ու թուրք խաւան մի զիւղ:

Վերջինից օգնութիւն սպասելն աւելորդ էր, վաղի առակի ալէս՝

քաշալը դեղ իմանաց, իւր գլխին կանի, ինքը աշնան տերեւի նման զեղնել է սեպհական անհաւատարիմ զբացիներից, երկիւղից մի ան-նշան հողմիկի հարուածը բաւական է նրան սալարեցնել. իսկ առաջին երկուքը նոյնպէս իրանց զլխի ճարը տեսնելու հոգսերումն են. հետևաբար ժամանակ չեն կարող ունենալ ուշադիր լինել դուշաբերների ձայնին:

Սիալ ենթադրութիւն. Հայը խաղաղ ժամանակ մոռացկոսութեան ենթարկուած՝ անտարբեր է դէպի ինքնաճանաչութեան վսեմ զգացմունքը, իսկ նեղութեան ժամանակնա զիտէ անձնազոհ գտնուել, արհամարհել ամենայն զժուարութիւններ, տանջանքներ, մահ, մանաւանդ երբ վտանգը սպառնում է իւր զարաւոր նուիրականութիւններին, իւր կրօնին, իւր ազգային սրբութիւններին, իւր եկեղեցւոյն:

— Մողնին տարա՞ն, վանքը քանդեցի՞ն:

Ներիք էր այս երկու խօսքը զիշերուան թանձր մթութեան մէջ հասնէր մի աշտարակցու, կարբեցու, մի հետու կամ մօտիկ հայի ականջին և սղասելու էր այն՝ ինչ որ կատարուեցաւ:

Գոյժը տարածողը վանահօր կողմից ուղարկուած մողնիցիք էին:

Մողնի զիւղում գտնուած սուրբ Գէորգայ վանքը, թէպէտ մէծ և հուշակաւոր ուխտատեղի է և նորա ուխտի ժամանակ՝ գլխաւորապէս աշունքը՝ տանիեակ հազար ժողովուրդ հինգ վեց աւուր ճանապարհից խոնուում են լիզել հինաւուրց մենաստանի քարերը, բայց նա չ'ունի մէծ միաբանութիւն:

Հասարակի օրերի մշտակաց վանքականները մի վարդապետ է վանահայր անուամբ, մի պատաւ տնուես կինէ, որ հայր սուրբի համար պարզ և անպատճոյն կերակուրներ է եփում, նորա փոխնորդն է լուանում և վանքին մատաղ բերած երկու երեք կովերն է կթում, մի Մշու երկրացի՝ հայրենիքից փախած՝ վանքի չորս պատերի մէջ սղատսպարուած, անվարձ մշակ է, որ ամառները գոմի դրանն է խորշում յողնած ու լախտուած դաշտիցը վերադառնալուց յետով և ձմեռը գոմի օդայումը մրափում, լուերի մէջ խումբացնում և մի պատանի մոնթ է վարդապետի ազգականներից կամ ծանօթներից՝ որ յառուկ նրան աշակերտելու և ծառայելու համար եկած է:

Ուրեմն ընդամենը չորս կամ առ առաւելն վեց հոգի են, որոնց

վճռած է վանքի լայնատարած բակի մէջ ապրել և վանքի պաշտամութեանն իրանց անձը նուիրել:

Սոքա միայն են և ուրիշ ոչ ոք, որ տարին բոլոր լնդունում են և պատուով ճանապարհ են զնում վանքն այցելող հայ և օտարազգի ուխտաւորներին, սոքա են սուրբ Գէորգակ թանգարանի, մասունքների և սրբազն անօթների տւանդապահները:

Ոչ պարսկական բռնակալ իշխանութեան օրերում և ոչ մեր ժամանակները լսուած չէր, որ սակաւաքանակ վանքականները վատանգի ենթարկուած լինէին:

Ճիշտ է՝ վանքը շրջապատած է քառակուսի հաստահիմն պարսպով, գեռ մի ուրիշ ամուր պատնէշ էլ բաժանել է բակին արտաքին և ներքին մասերի, բայց այդ ամրութիւնները ոչինչ նշանակութիւն չունեին հրոսակների յարձակմունքների դէմ, եթէ մի երկու տասնեակ ձիաւոր մտազրուեին խրամատել պարապի մի պատը և ներս խուժել վանքի բակը, դժուար չէր նմանապէս կրնկահան անել երկփեղիեայ դրները:

Զէ, մտածելն անդամ յանդանք էր:

Սուրբ Գէորգայ հրաշագործութեան հռչակը սարսափ էր ներշնչել զրացի անքրիստոնեայ մահմեդականին և քրդին, ոչ սակաւանդամ պարսկի մօլէն կինդանի մատաղով սուրբ Գէորգայ դուսն է եկել, մոմ է վառել և գանձանակ է տուել ընչի՞ց, կամ ո՞ւմնից, ասպաքէն, պէտք է երկիւղ կրէին վանքցիք, կամ ընչո՞ւ կասկած կը տանէին, թէ մի օր ստոհակ մարդիկ կարող են իրանց դարեւոր սովորութիւնները ոտնատակ տալ, կարող են յանդգնել և պիղծ ձեռներով մօտենալ մեծահամբաւ սրբավայրին:

Եթէ այս յարգելի և ծանրակշիռ հանդամնքները չը լինէին, ոչ վանքի հարաւային պարսպին կից 15 տուն Մողնի գեղն իւր մի քանի քաղցած ու տկլոր անհոգ գիւղականներով և ոչ նոցն ինքը վանահայրը՝ այս երկիւղալի ժամանակին՝ այսքան ապահով ու անվրդով կը լինէին:

—Հայր սո՛ւրբ, Հայր սո՛ւրբ, բազիսում է սպասաւոր պատանին վարդապետի մենարանի փակած դուռը՝ կէս գիշերին:

—Անիծեալ, ի՞նչ ես անհանդիստ անում, զեռ կէս գիշեր չը կայ, ի՞նչ ժամի ժամանակ է, որ զարթնացնում ես, քեզ համար

սովորութիւն ես արել, չես թողնում՝ մի քիշ քնենք, ես այս առաւոտ ժամ չեմ գալու, եթէ կամենում ես, ձայն տուր բաշի զլսից տէր հարսեղին, թող գայ ժամն ասէ;

—Զարթի՛ր, հայր սուրբ, ժամի համար չեմ քեզ վերկացնում, դեռ կէս զիշեր էլ չի եղել:

—Ուրեմն ի՞նչ ես գլուխս ցաւացնում:

—Չե՞ս լսում գրսի գրան բաղխումները, վանքը պատել են, թուրքերը գաները չարգում են:

—Իրա՛ւ, այս ի՞նչ թխթխկոց ու շառաչիւն է, վերցատկեց հայր սուրբը և անմիջապէս մի խելացի կարգադրութիւն արեց:

—Եթէ թշնամին յարձակումն չի գործել զիւղի վերայ, հրամացեց վշնահայրն իւր փոքրաւորին, իջիր պատովը, զարթնացրու տէրաւէրին և մի քանիսին, խորյն ուղարկի՛ր Աշտարակ, Կարբի ու Փարբի օգնութիւն խնդրելու. մեաս չունի, գոներն ամուր են, մանաւանդ միջի դուռը երկաթապատ է, մինչև տեղահան անելլը օգնութիւնը վերայ կը հասնի:

Պատանու ուղարկած մողնեցիքն էին, որ մի շնչի վազելով՝ շփոթ ձգեցին վերոցիշեալ զիւղերը:

—Շո՛ւո, քաջ եղբայրնե՛րս, կարգադրեցին հսկող իւղբաշիքը, զիւղը հաւար ձգեցէք, թող բոլորեքեան զէնք վերցնեն, մի մասը զիւղը պաշտպանեն, միւսը զինուառուած՝ շտապեն Մողնին պաշտպանելու:

Հայր սուրբն ուղիղ դատեց, վանքը կողովոող հրոսակները՝ թուով ցիսունի չափ՝ դեռ նոր քանդել էին պարսպի արտաքին պատը և սկսում էին խուել զոմի պատը, որ միակ յարմար տեղն էր ներսի բակը մանելու համար, երբ Աշտարակու և Կարբու սպառազինած ձիաւորները կրակ կտրած՝ միաժամանակ վրայ հասան: Քիչ միջոցից մի քանի փարբեցիք էլ հասան:

Նփոթն ընկաւ թուրքերի մէջ:

Քանդած պատի մօտ պահապան կարգած ձիաւորներն իմաց տուին իրանց լնկերներին օգնութիւն եկաղների մասին և աւերիչները յետ դարձան:

Հայերը մնացել էին մոլորուած, գրսի գուռը փակ էր, հարաւացին կողմի պարիսպը և Մողնի զիւղը նոյնագէս անմիտաս, խև վար-

դապետն ու մողնեցիք խցերի կտերը աղաղակ և գուոցներ էին հսնում:

—Հայր սո'ւրբ, ձայն տուեց Աշտարակցի իւզբաշի աւչի Փիլումը, ո՞ւրեն թշնամիքը:

—Օրհնեալ լինիք, քաջ զաւակներս, թշնամին ներս է լցուել՝ արևեան կողմից պատը քանիկելով, ի սէր Աստուծոյ, դուք զդոյց եղեք, չը լինի՝ թէ յանկարծ կուռի բանուիք, նոքա ձեզանից կրկնապատիկ աւելի են, ես վերնայարկի լուսամտից լաւ դիտեցի:

Փիլումը փորձառու զօրավարի նման իւր վերայ առաւ ընդհանուր հրամանատարութիւնը և իւր գունդը, եթէ կարելի է այսպէս ասել, երկու բաժանեց, կարբեցիներին և փարբեցիներին զիւղի տակովն ուղարկեց պարագի արևմտեան կողմը փակելու, իսկ ինքը իւր խմբովն անցաւ արեելը:

—Ես ինքս ներս կը մոնեմ բակը, կարգագրեց Փիլումը և մի երկու գնդակ կարձակեմ դէպի թուրքերը, շփոթ կը բարձրացնեմ, եթէ թշնամին յանդզնի անուշաղիր գանուել և կամենայ վանքի ներսի բակը մտնել, մենք ետեից ջարդ կը տանք, իսկ եթէ փախուստ տալու լինի, թոյլ տուէք առանց արխւն թափելու հեռանան:

Փիլումի կարգագրութիւնը գուր անցաւ:

Յանկարծ մէկամէկու ետելից դուրս թափուեցին թուրքերը և վախկոտ նապատակի նման կորչում էին իրանց որսորդների ձեռքից:

—Ոչ մի գնդակ դուր տեղը չը կորցնէք, ուղում էր հրամայել Փիլումը, բայց խօսքը բերանին մնաց, փախչողների միջից մի հրացանի պայթիւն լսուեցաւ. գիշեր էր, գնդակը կրակ կտրած՝ շեշտուեց դէպի կարբեցոնց խումբը:

—Ես ընկայ, աղէք, վրէ՛ժ առէք, ձայն տուեց առաջապահ ձիաւորը և գլխի վայր ձիուց գետին ընկաւ:

—Ո՞վ էր ընկնողը, գոչեց Փիլումը և դեռ իւր պատասխանը չը տուացած՝ ինքն իւր հրացանն ուղղեց դէպի գնդակը դուրս թռած ուղղութիւնը:

—Աղաջանն էր, մեր իւզբաշին, լսուեց կարբեցոնց կողմից:

—Վրէ՛ժ, առիւծի նման մոնչաց Փիլումը, քամակիցս եկէք, սպանենէնք, բրդենք և ոչ մի թուրքի չը թողնենք կենդանի յետ դառնան:

—Եալլա՛, սուրբ Գէորգը մեր կուանը կենա՛յ, գոշեցին բոլորեքեան և Փիլումի հետ յառաջ մղուեցան:

Գնդակների շաչիւնը և փայլը գիշերուան խաւարի մէջ նմանում էր զարքնոցի սալի վրացից զուրս ցացած կայծերի, երբ կուանահարները հաստակուո. մուրճերը կարգով զարկում են հրաշեկերկաթին:

Վերջապէս լուութիւնը տիրեց, ել ձայն ու ձուն չի լսուում, ել ձիրանոնց զովիւն և զրովիւն չը կայ:

Տեղը մնացին երկու-երեք թուրքեր, որոնք Փիլումի և ուրիշների գնդակներից Մահմեդի^թարքայութիւնն էին վերափոխուել:

—Բաւական է, տղա՛յք, վերադարձէք ամենքդ ձեր գիւղերը, կարգադրեց Փիլումը, սպանուած թուրքերն ել թող տեղն ու աեղը մնան, եթէ իրանք չը տանին, էզուց մենք նաշանիկին խմաց կը տանիք:

Սեր տղայքը Փիլումի տնօրէնութեամբ վերադարձան:

Ոչինչ բանով կարբեցիք չը համաձայնուեցին Աղաջանի մարմինը թողնելու Մողնումը. Հայր սուրբը շատ յորդարական խօսքեր ասաց, բայց հնար չ'եղաւ:

Կարբեցիք իրանց մեռեալը կապեցին նորա ձիու վերայ և մեծ սպով յետ զարձան:

Հաւատարիմ կենդանին իւր տիրոջ մարմնի մօտից չէր հեռացել:

Կարբու և Մողնու միջասահմանումը՝ Քասախի քարքարուտ ափին մօտ, ճանապարհից մի քայլ հեռու գոնուում է Մողնու սուրբ Գէորգայ նախկին վանահայերի և միաբանների գերեզմանոցը:

Նոյն տեղումը՝ սրբակեացների շիրմիներից գէպի արևելք՝ այսօր էլ զոյգ կանգնած են իրար մօտ երկու բարձրադիր, մամուապատ «ձիաքար» կոչուած տապանաքարեր: Եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում, դամբարաններից մէկի վերնագիրն է ուստա Մուռ ատինը:

Աւանդութիւնն այսօր էլ Մուռատին ընդունում է սուրբ Գէորգայ հրաշակերտ վանքի կառուցանողը: Միւս տապանը վերագրուում է քաջահմուտ վարպետի ուշիմ աշակերտին:

Մի փոքրիկ ան շալու, կամ գմնիկը կոչուած փուշ՝ չեմ սխալուիլ, եթէ ասեմ՝ դարերով անջատել և կրկին շաղկապել է միմիանց հետ այդ երկու ցիշատակարանները, որոնք առանձին իմն պատկառանքով գրաւել են տեղացիների քաղցր համարում անձին՝ այնտեղից անցկենալու՝ ցիշել Մուրատին և իւր աշակերտին և «Աստուած ողորմի սրանց հոգւոյն» խօսքերի հետ պատմել իւր ուղեկցին՝ վարպետի և աշակերտի նահատակութեան հետաքրքիր պատմութիւնը:

Անցքը շատ կարճ է. Մուրատը հոգւով և սրտով սիրելուս է եղել իւր աշակերտին՝ նորա մեծ ընդունակութեան և հմտութեան պատճառաւ. նրա ասութեամբը՝ աշակերտն իւր աջ կուսն է եղել:

Վանքի մեծ կաթուզիկն կառուցանելիս՝ աշակերտի ոտքը սահում է և նա վայր ընկնելով մեռնում է:

Զարադէտ դժբաղդութիւնը Մուրատին բարոյապէս ընկնում է. նա յուսահատուում է, ոգևորութիւնը կորցնում է և չի կամենում շնչքը շարունակել: Մուրատը Վանահօր և ուրիշների թափանձանքներին զիջանելով՝ վերջապէս մի քանի օրից խապառ աւարտում է գմբեթը և վերջին քարն ամրացնելուց յետոյ՝ ինքն իրեն գոհավեցած է գլորում այն բարձրութիւնից:

Վախճանը բոպէական է լինում:

Մուրատի վերջին խօսքն այս է լինում. «Ի՞նչ կարող է գործ ել ձախ ձեռն առանց աջի»:

Հազիւ վանքին օգնութիւն եկած կարբեցի ձիաւորները հասել էին Մուրատի գերեզմանի հանդէսը, որ ամպերի պատառուածքներից լուսնի լուսով նշմարեցին նրանք վարպետի և աշակերտի տապանների արանքին փշի թփի ստուերումը շարժուող մի էակ:

Բատինենց Աահակը անհեռատեսութեամբ ձին յառաջ վարեց եղելութիւնը ստուգելու:

—Որսն իւր ոտքովն է գալիս, Ալի բէ՛գ, գործերս յաջող է գնում, Մողնումն Աղաջանի զլուխը խաշեցինք, փեսացուն էլ հիմի իմ գնդակին մատաղ կը լինի և մենք մեզ խոստացած սոկիքը վաղը դրաններս կը լցնենք. խօչէն խօսքին տէր մարդ է:

Այս խօսքերի հետ միասին Մուրատի գերեզմանաքարի տակից զլուխը վեր բարձրացրեց մի թուրք և հրացանն ողղեց դէպի Աահակը:

Գնդակը փշբեց Սահակի ձախ ուսագլուխը:

— Դաւադրութիւնն, մեր տղէք, գոչեց Սահակը և ուշք չը գարձրած իւր վերքին՝ աւրծանակով փոխադարձ մահացու հարուածը տուեց հակառակորդի ուղիղ կրծքի մէջ տեղից:

Թուրքն անշունչ տարածուեց գետնին:

Նոյն այս միջոցին աշակերտի գերեզմանաքարի եաւից մի ուրիշ գնդակի արձակուեց դէպի Սահակը:

Հարուածն անյաջող անցկացաւ. գնդակը շաշիւնով սլաց Սահակի գլխավերեւով:

Դարան մտած մարդը աեղից կանգնեց և կամենում էր թուրը սկառտեանիցը գուրս քաշել:

Սուրը մնաց կիսահանել: Կարբեցիներից, մի կտրիճ երխտասարդ հայհոյական խօսքերով յառաջ մղուեց և քրդական կեռակտուց սրով գաւաճանին խոր խոցեց մինչև թոքերը:

Նոգենաւի հատուածական փոնչոցի նման դուրս էր փչում արիւնը՝ չնչառութեան հետ միասին՝ զլորուողի լայնաբերան վերքի ճեղքից:

— Անրակի ոսկրի կէսը մնացել էր պարանոցին կպած միւս կտորը կուան հետ կախ էր ընկել:

— Աղաց Մողնին... մեր պատի՛ժը... տուե՛ց... Մահմատ-Ալի թէ՛զ... նա կը պատի՛ և մեղ զրդողի՛ն... ա՛խ... խօջա...

Խոխուոցը մեղմացաւ, կիսահնչիւն և կիսաւարտ խօսքերը ասողի բերանումը սառեցին:

Մինչ այս, մինչ այն, Կարբեցիք զբկել իջեցրել էին ձիուց Սահակին և մէջը գերեզմանաքարին դէմ տուած՝ աշխատում էին գալարեցնել վերքից գուրս թորած ապաժոյժ արիւնը: Դաւադրութիւնն, տղէք, ուշակորոյս կրկնեց մի քանի անգամ Սահակը, այս սպանուածներին ևս ճանաչեցի... սրանք երեկ գիշեր մեր գիւղի կողքից յետ դարձան... մի վատ մարդի մատը խառն է այս անբաղդութեան մէջ...:

Սահակն այլ ևս չը կարողացաւ շարունակել. նրա ուշքը գնաց. նա հաղիւ ծանր չնչում էր:

Անկարելի էր Սահակին ձիու վերայ նստացնել:

Երիտասարդներից մէ ուժեղը առաջարկեց իւր ճառագութիւնը:

Վէրքը ինսամքով պատաժ՝ ՍՀօյին դրին այս տղացի շալակը և ամուր կտպած՝ առան գնացին:

Թուրքերի մարմինը մնաց զերեզմանոցումն ընկած:

Գաւառական վարչութիւնը միւս օրն ամեն տեղ որոնել տուաւ և ը գտաւ ոչ միայն այս երկու սպանուածներին, այլ և փախչող բազմութեան միջից ընկնողներին:

Նատ շուտ լուր տարածուեց, թէ Վարչութիւնը հենց երկրորդ օրը բացել է սպանուածների հետքը:

Աղաջանի մարմինը հողին յանձնուեց առանց աղմուկ բարձրացնելու:

Նրա փեսացուն շարունակում էր կոխւս տալ կեանքի հետ:

Անկայուն զրութիւնը կարճատե եղաւ, տաճիկների հաշիւները սիսալ դուրս եկան:

Բէհրուդովը մի անօրինակ քաջագործութիւն արեց, սակաւաթիւ զօրքով մի յանդուգն յարձակում զործեց նա թշնամու առթիւ բանակի, վերայ և ցրիւ տուեց:

Օսմանցին կրկին յետ փախաւ, Կարսումը փակուեց:

Նատ չը քաշեց, նա Կարսից էլ զրկուեց:

Բէհրուդովը Կարսն առաւ, յանձնեց իրան յաջորդող նոր հրամանատարին և ինքը վերադարձաւ հանգիստ առնելու...:

Եռամեայ պատերազմից յետոց նոր հրամանատարը կասեց հաշտութեան սպազմանը և խաղաղութիւնը վերականգնեց:

Կարսը դարձեալ յետ տրուեց իւր նախկին տիրապետող Օսմանցուին:

Յիսնական թուականների արեելեան պատերազմի վաս կրակը այսպիսով առժամանակ մոխրակոյտի տակ անթեղուեց (ծածկուեց, թաղուեց):

Իմ զրախտի բաժին մայրիկս էլ նոյն հնարքն էր զործ զնում: առաջի օրը թոնրի խորքումը մոխրի մէջ թաղում էր կրակի թէժ կտորները, որպէս զի միւս օրը բաց անի, չորացած խոխներ դարսի վրէն, կրակն աւելի ուժգին բորբոքի ու մեզ համար անուշ անուշ կերակուրներ պատրաստի:

ՀՆՁԻՌ

ԱՐԴԱԼՈՅՍ ՄԻԹԻԹԱՐԵԱՆԻ

Անցեալ ամառն էր: Ծերուկ Գալօյին
Հընձի ժամանակ տեսայ ես աբում.
Կէսօրեան արևն ալրում էր գետին,
Ցողնած հընձւորին նո չէր խընայում:
Կասոյա երկնքում չը կային ամպեր,
Խեղգող աօժի մէջ չէր շարժւում քամի,
Լայնարձակ գաշտում չը կար մի ըստւեր
Եւ մեղձակալքում զովարար տուի
Չէր լըսւում քըրքիշ. բայց Գալօն արագ
Նարժում էր ուրախ ուրախ գերանդին—
Առատ էր ցորեան՝ գիւղացու միակ
Ալդ յոյսն, ապաւէնն երկրի երեսին:
Թող հեղեղ-քըրտինք նորա երեսից
Վագէր, ծովանար մալլ-երկի վերար,
Թող արիւն հօսէր նորա ճակատից՝
Անհոգ ժըպիտով աշխտտում էր նա:

Զըմեռւան թըխպոտ օրերից մէկն էր:
Անցնում էի ես Գալօյի գիւղից,
Մըտայ նորա տուն: Տըխուր տանուտէր
Անկիւնում նըստած գողում էր ցըրտից.
Կին ու գաւակներ ցընցոտիներով
Մի ալլ անկիւնում ծածկած մերկութիւն

Լաց էին լինում լուռ հեկեկանքով.
 Որպէս աւերակ գատարկ էր այդ տունն;
 Հիւրասէր Գալօն չը բերեց ինձ հաց...
 Նըստած էի ես այնտեղ շըւարած
 Ու տըխուր նախում մըրոտ պատերին.—
 Երբ յանկարծ աչքիս ընկաւ գերանդին.
 Եւ ես ակամայ յիշեցի այն օր,
 Երբ արիւն քըրտինք թափում էր հընձւոր
 Առատ, անխընայ մալր-երկրի վերայ,
 Երբ անհոգ, ուրախ աշխատում էր նա...

ԱՆԱՊԱՏ

ԱՐԴԱՎԼՈՅԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

Դեռ երեխայ շատ եմ շըրջել
Ես այն ծաղկուն գաշտերում,
Շատ եմ վազել ու խաղացել
Կանաչազարդ արտերում:
Ալնտեղ չ'ունէր ծաղիկն համար,
Զը կար սահման արտերին,
Ալնտեղ ուրախ գարուն ամառ
Երդ էր երգում գիւղացին:

Եկաւ աւեր ու կոտորած,
Թափւեց արիւն մարդկային,
Կըուի գաշտում գազանացած
Զը լիշեց մարդն Արարչին:
Լուռ է այնտեղ, այժմ անապատ,
Ոնգղ ու արծիւ միայն ազատ
Գիշատում են գիտկներ:

ԼՕՐԵՆՑ ՓՈՆ ՇՏԱՅՆ

Ներկայ դարուս քառասնական թւականները զարգացման և եռման մեծ ժամանակն էին. այդ ժամանակն էր, երբ Եւրոպայում արդին կատարւած էին սոցիալական, քաղաքական և գիտական յեղափոխութիւններ և երբ սկսեցին մոցնել Եւրոպական պետութիւնների մէջ կառավարութեան սահմանադրական ձևը, որ և այժմս գոյութիւն ունի: Այդ մեծ շարժումների գիտական նշանաւոր վետերաններից քչերն են վկաց մասցել այժմեաց զարգացման և այդ սակաւներից մէկն է Լորէնց Փօն Նոտայն, այն մարդը, որ անցեալ մաշխին տօնեց իւր դօքտորական հիմնամեակը և որը հրաւարակախոսութեան և գիտութեան մէջ՝ թէ քաղաքականապէս և թէ դօքտրինական կերպով գործել է այն մարդկանց շարքում, որոնք առաջացրել են ներկայ ժամանակի յառաջադիմութիւնը:

Նոտայնը սկզբում զինւորական աշակերտ էր Դանեմարքում, յետոյ աշակերտ միջնակարգ դպրոցի Ֆլենսբուրգում, ուստից նա յետոյ անցաւ Ենացի Համալսարանը: Այդտեղ նա դառաւ անդամ ուսանողական հին բնկերութեան (բուրշենշաֆտ), որը շատ հալածւած էր, լինելով ներկայացուցիչ գերմանական միութեան գաղափարի և հակառակորդ այսպէս կոչւած մանրիշխանականութեան (Kleinstaaterei): Յետոյ նա աւարտեց ուսումը Կիլի Համալսարանում և ստացաւ դօքտորութեան աստիճանը. հենց այդտեղ էլ նա սկսեց իւր գրական գործունէութիւնը իւր առաջին գրւածքով՝ Դանիական քաղաքացիական պրօցեսի պատմութիւնը:

Այդ այն ժամանակն էր, երբ հոգեկան և քաղաքական Եւրոպան երկու բանակների էր բաժանւած: Մէկ կողմ կանգնած էին Գերմանիացի ֆիլոսօֆացական և իրաւագիտական սիստեմները, որոնք զի-

տական թէօրիաների արգումենտներից դուրս գալով զիմում էին կառավարութիւններին, յորդորելով, որ տքա իրանք իրանք վերանորոգւմ էին Կանոնի, Ֆիլիպ է' ի և Հեղէլի ֆիլոսօֆայութիւնների հիմունքների վերայ, յետու յետ մղելով Ստահլի յետագիմական-բէակցիօնական գաղափարները, որ ամենի էր նա իւր „Restauration der Staatswissenschaften“ գրքի մէջ և միւս կողմից ազահարար մնում էին Ադամ Սմիթ'ի քաղաքատնտեսական և Թիւնէնի ու Բէր'ի գիւղատնտեսական վարդապետութիւններով ոգևորւելով այն նախագուշակած պետական — քաղաքական վարչութեան համար, որի մէջ ժողովուրդը ապագայում պէտք է իւր ձայնը ունենար:

Միւս կողմից սակայն արագ ըմբռնումով և զգացումով տաքարիւն Փրանսական ազգը, խրախուսւած իւր առաջին յաջողութիւններով թագաւորական և ազնւական իշխանութեան վերայ, չեր սպասում, մինչև որ գիտութեան թէօրիաներով նախ համոզւի ու ապա միայն գործէ, այլ հարւածներ տւեց այդ խնդրի գորդեան հանդոցին իւր ապատամբութիւններով, որպէս նաև ոչ խիստ գիտնական սօցիալիստական սիստեմներով և ուտօպիսաններով, որոնց հեղինակներն էին՝ Կարէ՝ Voyage en Icarie յայսնի բանդագուշական-ուտօպիսական գրւածքի հեղինակը, Ֆուրիէ, Սէն-Սիմոն, Լուի Բլան, Բարեֆ և այլն:

Սա մի վկայութիւն է Կօրէնց նոտայն'ի համարձակութեան և պետական մարդու հեռատեսութեան, որ նա այդ ժամանակ, մնիող որսկէս նա էր, վճռեց կառքով (երկաթուղինների մասին այն ժամանակ գեռ քիչ էր խօսուում) Կիլ'ից գնալ Պարիզ, որը այն ժամանակ այնքան հեռու էր թւում, որպէս այժմ՝ Ամերիկան: Նորան այնտեղ մղող իդէալը՝ բուն գերմանական գիտնականի իդէալն էր, — այն ոյժերը, որ այն ժամանակւայ պատմական զարգացման մէջ գործում էին և որոնք արտայալուում էին թէ բարձրագու և թէ կամաց ձայնով սօցիալիստների, կօմունիստների և ուտօպիստների կողմից՝ մի օբեկտիւ գիտնական սիստեմի վերածել:

Հին մարդկային հասարակութեան այդ ահեղ շարժումները և, այսպէս ասած, մակերևոյթի գալարւումները, հասարակութեան, որը մի նոր ձևակերպութեան էին ուզում հասցնել, նոտայնի համար

միայն մասներ էին այն մեծ պատմական պրօցեսի, որի յետևից նա տեսնում էր մի աւելի մեծ պատկեր, այն է մարդկային իրաւունքի, նորա սկզբունքների ու հիմնական գաղափարների մշտնջենական շարժւող նորակազմութիւնը և զարգացման յառաջաղիմութիւնը։ Սյդ բողորը Նոտանին թւում էին իբր իրաւունքի պատմութեան և այն էլ մի եւրոպական և նոյն իսկ համաշխարհային իրաւունքի պատմութեան մի մեծ գարագլիսի աստիճաններ։ Եւ այն առաջին հռչակաւոր գիրքը, որ իւր Պարիդում եղած ժամանակի շրջանից էր ծագած (1840—1842 թ.), էր «Այժմեայ Ֆրանսիայի սօցիալիզմը և կօմմունիզմը» (1842, երկր. տիպ 1848 թ.), որը հեղինակի ասելով, նախասպատրաստական աշխատանք է մի ապագայ եւրոպական իրաւական պատմութեան։ Սյդ գրքի երկրորդ մասում նա առաջին անգամ Ֆրանսիայի ընկերական ամբողջ շարժման և նորա ներկայացուցիչների մի նկարագիր տեսց, որից գերազանցը մինչ այժմ էլ ոչ ոք չի տեել. իսկ գրքի առաջին հատորում նա որոշում է գաղափարս՝ հասարակութիւն, որը այժմեայ գիտնական տերմինոլոգիայով կոչւում է «հասարակական գիտութիւն»։ Եւ նորա գլխաւոր աքսիօմը, թէ հասարակութիւնը և նորա իրաւունքը կախւած է շարժական թէ անշարժ կարողութեան բաշխումից, —այդ ժամանակից դէս դառել է մի հիմնական գաղափար ապագայ ամեն մի իրաւագիտութեան, պատմութեան, և այնքան անհերքելի, որքան մի նոր տարրի գիւտը քիմիայի մէջ։ Նա մեզ առաջին անգամ ցոյց է տալիս այդ գրքում, թէ ինչպէս մեր գարու առաջին կէսի արած փորձերը ասպացոյց տեին, որ անկարելի է պետական կազմակերպութեան և սահմանադրութեան խնդիրը բաժանել կարողութեան բաշխման խնդրից և կամ նոցա հիմնել կօմունիստական գաղափարների վերայ, որոնք պահանջում են կարողութեան հաւասար բաշխումը և թէ ինչպէս այն բոլոր յեղափոխութիւնները միայն այս հասարակ հետևանքներն են ունեցած, որ հասարակութեան կազմակերպութիւնը հիմնել են վաստակած կարողութեան վերայ, փոխանակ ժաւանդած կարողութեան։

Նոտանի երրորդ մեծ երկը, որ չորս տարի յետոյ լոյս տեսաւ (1846), նոյն գաղափարներով է տոգորուած և նոյնպէս մի նախաշահից է իրաւունքի մի մեծ պատմութեան։ Դա երրորդ մասն է եռահասոր «Ֆրանսիայի պետական և իրաւական պատմութեան», որ նա

միասին և Ա. Վարնկեօնիկ և Թ. Ա. Վարկեօնիդ՝ի հետ հրատարակեց: Ֆրանսիացիների համար պէտք է մի գերմանական գիտնական գրէր նոյն սեպհական իրաւական պատմութիւնը! — Երկու տարի յետոյ, (1848) նոյն ժամանակ, երբ երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ նորա «Սօցիալիզմը», հրատարակեց նա մի յաւելւած այս վերջին գրքի, ուր նա երրորդ (այն է 1848-ի մարտին) ֆրանսիական յեղափոխութիւնից գէս կատարւած սօցիալիստական և կօմունիստական շարժումներն է ուսանում: Ամառը 1848 թ. նա երկրորդ անգամ Պարիզ էր գնացած, ակադեմիական ազատ ամիսներին, քանի որ նա 1846-ից Կիլ'ում պրօֆեսոր էր: 1850-ին լոյս է տեսնում նոր մշակւած ձեռվլ նորա «Պատմութիւն սօցիալական շարժումների Ֆրանսիայում» երեք հասորով, որի մէջ աւելի ընդարձակ և սիստեմական կերպով ձևակերպւած են նորա այդ խնդրի առիթով գրւածները և բաժանած երեք շրջանների՝ սկզբից մինչ 1830 թ., յետոյ 1830—1848, մինչ այսպէս կոչւած «գործարանական հասարակութեան» ժամանակը, իւր սկզբունքներով «Ժադաւորութեան», հանրապետութեան, ֆրանսիական հասարակութեան ինքնիշխանութեան մասին 1848-ի փետրւարի յեղափոխութիւնից դէս:

Այս երկերը դեռ չը վերջացրած, նոտայնը իւր ուշը դարձրեց մի բոլորովին տարբեր գրական ասպարիզի վերաց: Գերմանիայում և մանաւանդ իւր հայրենի Նլեզւիդ-Հօլշտայնում պատրաստով քաղաքական եռումները, որոնց նա մօտիկուց մասնակցում էր, նորան դարձրին մէկը նշանաւոր հրավարակախօսներից: Իւր հայրենի երկրի պետական-իրաւական դրութիւնը լաւ ուսումնասիրելուց յետոյ, նա հրատարակեց 1847-ին իւր «Ներածութիւն Նլեզւիդ-Հօլշտայն դքսութիւնների դասակարգացն» իրաւունքի: Հաջակւեցին մանաւանդ նորա երկարամեայ թղթակցութիւնները Նլեզւեգ-Հօլշտայնի մասին կօտտայի «Ալգեմայն-Յայտունգ» լրագրում: Եւ շուտով այդ բանից յետ նա կոչւեց գործոն գեր կատարելու Նլեզւիդ-Հօլշտայնի խառնակութիւնների մէջ: Երբ 1848-ին Նլեզւիդ-Հօլշտայնցիք ինքնակամ կերպով պատրաստութիւններ տեսան պատերազմելու Դանեմարքի դէմ, որը այդ երկիրները կամենում էր նահանգների դարձնել, հակառակ այդ երկրի սահմանադրութեան (այսինքն որ Դանեմարքի թագաւորը լիներ միևնուն ժամանակ դուքս Նլեզւիդ-Հօլշտայնի),

Նուայնը պէտք է իւր ութ պրօֆեսօր ընկերների և իւր ընտանիքի հետ փախչէր՝ չը կալանաւորւելու համար:

Երեք պրուսական համալսարաններից նա հրաւէրք ստացաւ, բայց չընդունեց, որովհետև նաև Պրուսիայի պլանների մէջ չէին մտնում նորա քաղաքական ձգութմները Նլեզիդգ-Հօլշտայնի համար:

Մի առ ժամանակ նա իրան նւիրեց հրապարակախոսութեան, ապա 1853-ին եկաւ Վիեննա, ուր ուզեց հիմնել մի մեծ քաղաքական թերթ, մասամբ այն մտքով, որ, Ֆրիդրիխ Լիսոնի ծրագրով, Միջին-Եւրոպայի և Արևելքի աւուտուրը Վիեննայում կենտրոնացնելուն նպաստի:

Յետոյ, հրաժարւելով ընդունել ֆինանսական մինիստրութեան մէջ մի զեկավար խորհրդականի պաշտօն, որպէս զի իւր գիտնական աշխատութիւններից չշեղւէ, ֆինանսական մինիստր բարոն Բրուկի խորհրդով նա նշանակւեց Վիեննայի համալսարանի քաղաքատնտեսութեան պրօֆեսօր՝ խոլերայից վախճանւած նօւակի տեղը: Դորանով սկսում է նորա ծառայութիւնը Աւստրիայում:

Մի կարճ ժամանակ, իւր նոր պաշտօնը ստանձնելուց յետ, նորան զբաղեցրեց իւր հին քաղաքարը այն մասին թէ պեսական զիտութիւնը պէտք է հիմնեի հասարակութեան գիտութեան վերաբեր ահա լոյս է տեսնում 1856-ին նորա «Սիստեմ» պետական զիտութիւնների: Բայց գիտնական ասպարիզում նա սըկում է հանդիսանալ իբր ստեղծող մի այլ զիտութեան, այն է վարչական զիտութեան» (Verwaltungslehre): Այդ գիտութեան հայրը իսկապէս Նուայնն է: Բոլորը, նոյն իսկ ամենառարրական ոյժերը, որոնք սոցիալական կեանքի մէջ գործում են, թւում են նրան, կամ աւելի լաւ ասած, վարչական զիտութեան, իբր մի մի առկաներ պետութեան վարչական աշխատանքի: Նա ջոկեց պկառավարութեան գաղափարից, ցոյց տւեց այն խոր զանազանութիւնը, որ կայ «օրէնքի» և վկարգադրութեան մէջ: Նա առաջինն է, որ զիտութեան համար գտաւ նոր սահմանադրական պետութիւնների այդ սկզբունքները: Եւ նա թէ առաջինը և թէ միակն է, որ Վիեննայի համալսարանում երեսուն տարի շարունակ դասախոսում է այդ առարկան, մի առարկայ, որը ճանաչւեց իբր պարտաւորիչ՝ աւանդական առարկաների շարքում՝ (քա-

զաքասնտեսութիւն, ֆինսասպիտութիւն, իրաւունքի ֆիլոսօֆայութիւն): «Վարչութեան իրաւունքի» կամ նաև «պետական գիտութեան» անունի տակ՝ վարչական իրաւագիտութիւնը այդ ժամանակից դեռ ընդունեց նաև գերմանական միւս համալսարաններում, և մինչև անգամ պատճառ դառնաւ, որ առանձին պետական գիտութիւնների ֆակուլտետներ բացւեն, որնց հիմնադրութիւնը նույնի նախաձեռնութեան գործն էր:

Նույնի գրական աշխատութիւնները այդ առարկացի վերաբերեալ չեն կազմում մի գիրք, այլ գրքերի մի ամբողջ սիստեմ, որնցից ամեն մէկը ըմբռնում է վարչութեան մի մեծ ճիւղ և ուրերջական երկիրների վարչական կազմակերպութիւնը առաջին անգամ իրաւ հետ համեմատեց:

Վարչական գիտութեան մեծ սիստեմը Նույնը բաժանեց երկու մասի, որոնցից առաջինն է գործադիր մարմինը, նորա իրաւունքը և նորա կազմակերպութիւնը (1865 թ.) և երկրորդը՝ ներքին վարչութեան ուսումը: Այդ երկրորդի երեք բաժիններն են՝ անձնական, ոգեկան և տնտեսական վարչութիւն: Այդ բաժիններից առաջնում խօսւում է «ազգաբնակութեան», առողջապահութեան և ուսուհանական իրաւունքի մասին: Երկրորդում խօսւում է կրթութեան, այն է տարրական և արհեստագիտական կրթութեան մասին և մասուլի ու լնդհանուր կրթութեան մասին: Երրորդ բաժնում խօսւում է զօրքի մասին:

Ամեն մի մասը և բաժինը մի մի հասոր գրքեր են, որոնցից մէկը կամ միւսը ժամանակի ընթացքում նոր տպագրութեան և նոր մշակութեան է ենթարկել: Վարչութեան գործը առողջապահական ասպարիզում մի նշանաւոր գրւածք է, որը պետական գիտութիւնների գրականութեան մէջ իւր նմանը չ'ունի:

Կրթական գործը իւր նոր մշակւած ձեռվ (1883) բռնում է երեք հատոր. դա մի մեծ պատմական աշխատանք է կրթական գործի զարգացման մասին իբր պատճառ և հետեանք մասամբ պետական, մասամբ եկեղեցական և մասամբ կրօնական պատմութեան քաղաքակրթւած երկիրներում թէ հնում, թէ միջին դարերում և թէ նոր ժամանակներում:

Ամբողջ աշխատութեան հիմքը կազմում է էլի մի հիմնական

միտք։ Համաձայն մեր կրթական պրօցեսի հիմնական օրէնքի՝ թէ սովորութիւնը, աւանդութիւնը կանգ առած կրթութիւնն է, Շտայնը տալիս է այժմեայ կոխուների պատմական լուսաբանութիւնը վերաբերեալ րէակցիայի և յառաջիմութեան, կամ կանգ առած սովորութեան և միշտ առաջ գնացող նորաձեւութեան՝ մարդկային հասարակութեան մէջ։ Հասարակութեան, որը հիմնած է այս սկզբունքի վերայ թէ՝ ամեն մի անձ պէտք է ձեռք բերած կրթութիւնով վերանայ մինչ կարելիին չափ բարձր ոգեկան անկախութիւնը, որպէս զի նա ինքը ինքնաբերաբար այն անել կարողանայ, ինչ ուրիշ գէպում մարդս անում է ահից՝ հեղինակութեան առջև։

Ոչ մի ուրիշը ցայծմ չի կարողացել բուն մարդկային՝ եկեղեցական-դօգմատիկականից աղաս կրթութիւնը միջնադարեան հումանիստներից սկսած մինչ մեր դարուս սկզբի մեծ կրթիչները՝ Լաւատէր, Բաղերօվ և ուրիշներ և մինչ մեր նոր ժամանակների գեռ ևս չը գերազանցւած գերմանական գալոցական գործը այնպէս մասնակից անել եւրոպական կուլտուրայի պատմութեանը, որպէս այդ արել է Լօրենց Շտայնը իւր վերոցիշեալ երկով։

Նաև նորա երկը «Ուսումն զինուորական գործի մասին, որպէս մասն պետական գիտութիւնների» (1872) նկատած է որպէս վարչական գիտութեան վերաբերեալ աշխատութիւնների սիստեմի օղակներից մէկը։ Խնչպէս իւր գրւածքներից մէկում նա խառնւել էր բժշկական խնդիրների մէջ, այնպէս էլ այս գրքով նա, որպէս վարչական իրաւունքի ուսուցիչ, առանց զինուորական լինելու, պատերազմական ասպարիզում տեղ է տալիս պետական գիտութիւններին։ Առաջ որպէս յացոնի է, զինուորները մնում էին զինւոր ցմահ։ Նոքածնուում էին իբր զինուորներ, որքա կոչումով զինուորներ էին։ Բայց որքան կոչումով զինուորականութիւնը դառաւ ժողովրդական—ընդհանուր զինուորականութիւն, այնքան էլ նա՝ ընդհանուր զինուորագրութեան սկզբունքի ոժով՝ դառաւ մի մաս ընդհանուր պետական վարչութեան և որքան զօրքերը մեծանում են, այնքան աւելի նոցա վարչական մաօը կարեորութիւն է առանում։ այժմեայ պատերազմները և յաղթութիւնները կիսով և թերեւս աւելի չափով կախւած են զօրքի վարչութիւնից։ Շտայնը ընորւեց պատւառոր անողամ Վիեննայի զինուորագիտական ընկերութեան, որով ա-

պաշոյց տրւեց թէ որքան հայրենիքի մասնագիտական աշխարհը զնահատեց նորա այդ աշխատութիւնը:

Խոր բոլոր աշխատութիւնները վարչական իրաւունքի մասին Շտացնը ինքը ամփոփեց մի ձեռնարկի մէջ՝ «Ձեռնարկ վարչական գիտութեան» (առաջին տիպը 1870-ին, երկրորդ՝ տիպը 1876-ին), որը բազմաթիւ ուրիշ՝ նորանից յետոյ դրած հեղինակների՝ նման ձեռնարկներից նորանով է տարբերում, որ նա տալիս է ոչ թէ մի հատ պետութեան կազմակերպութեան նկարագիրը, այլ տալիս է պետական վարչութեան ուսմունքի մի սիստեմ, որով Եւրոպայի երկիրների մեծամասնութիւնը իրար հետ համեմատում է:

Նշանաւոր դրւածք է նաև նորանի «Քաղաքանական գիտութիւնը» (առաջին տիպը 1858, երկրորդ՝ 1878, երրորդը 1887): Այդ ասուպարիզի վերայ նա ունի նաև աւելի մանր դրւածքներ, որպէս՝ «Գիւղատնտեսական կրթութիւն», «Գիւղացիական կարւածք և ծխալին իրաւունքը» (1882) մի յաւելւածով հողատիրութեան մասին:

Նորա դրւածքը՝ Կինը քաղաքատնտեսական ասպարիզում մինչեւ անգամ ժողովրդական դարձեց — նորանի անունը:

Բայց այն ասպարիզը, ուր նա, որպէս սոցիալիստական խնդրում և վարչական գիտութեան մէջ, նա ամենից շատ վաստակ ունի, է ֆինանսական գիտութիւնը։ Նորա «Ֆինանսական գիտութիւնը» (առաջին տիպ 1860, հինգերորդ տիպ 1886 թ.) ժամանակով դառաւ մի հիմնական աշխատութիւն, որի հետ կարող են զնուել միայն Ուառուի դրւածքները և սոցա վերայ հիմնած Ազօլի Վագների ֆինանստիկան աշխատասիրութիւնները։ Նա առաջինն էր, որ սիստեմական կերպով մացրեց այդ գիտութեան մէջ սահմանադրութեան և վարչութեան զանազանութեան գաղափարը։ Այդուղ խօսւում է նախ՝ ֆինանսական սահմանադրութեան, ֆինանսական օրէնսդրութեան, բիւշետի որպէս ֆինանսական օրէնքի նախագծի մասին, գործադիր իշխանութեան և ֆինանսական գործի սահմանադրական վարչական իրաւունքի մասին։ Միւս կողմից ֆինանսական վարչութեան են վերաբերում պետական տնտեսութեան երեք մեծ ճիւղերը՝ պետութեան կարողութիւնը, հարկագիտութիւնը և պետական պարտքերի գործը։ Եւ որքան մեզ յայտնի է, զրքի այս վերջին բաժնում առաջին անգամ մանրամասն կերպով համեմատու-

թիւններ արւեցին Եւրոպայի պետութիւնների պարտքերի և թողթ դրամի սխառեմների համար:

Այսքանը նորա մասնագիտական աշխատութիւնների մասին: Բայց Նոտայնը ունի մի շարք նշանաւոր գրւածքներ, լիքը վերանորոգի գաղափարներով: Դոցանից նշանաւորներիցն է Շներկան և ասպագան Գիրմանիայի պետական գիտութիւնների (1876), որի մէջ նա այս նշանաւոր միտքն է արծարծում, թէ «իրաւունքի բովանդակութիւնը իրաւունքը չէ, այլ այն ոչերի գիտութիւնը, որոնք արտադրում են նորան»: Այդ գրւածքի առաջին զլիսում նա տալիս է հոռվմայական իրաւունքին իւր իսկական տեղը, իբր իրաւասպատմական նախապատրաստող միջոց մեր այժմեայ իրաւունքի (իրաւարանութեան) համար: Հետևեալ գլուխներում՝ նա ցոյց է տալիս այն ոյժերը, որոնք մեր այժմեայ միշտ առաջ ընթացող հասարակական կարգերի հիմքն են կազմում՝ և որոնք կազմել են մեր այժմեայ իրաւունքը: Այն է՝ սեռական կարգերը, գասակարգային կարգը և քաղաքացիական հասարակութեան կարգը, որոնց իրաւունքը դեռևս միշտ նորակազմ շարժողութեան մէջ է գտնւում:

1879-1880 թ-ին լոյս տեսան նորա երկու շատ հետաքրքրական գրւածքները՝ «Պետական գիտութեան զարգացումը հին յոյների մէջ» (1879 յետոց «Վաշինտութիւնը և նորա իրաւունքը»), ուր վաշխառութեան զանազան տեսակները քաղաքառնաեսական տեսսակտից ամփոփւում են մի սխառեմի մէջ, որի մէջ նոցանից իւրաքանչիւրը նկատուում է իբր ծնունդ կեանքի այլ և այլ հանդամանքների:

Յիշատակելու արժանի է նորա մի փոքրիկ բրոշիւրը՝ «Ուսուցանելու ազատութիւնը, գիտութիւնը և ուսանողական վճարը» (1875), որը այդ ժամանակ իւր յաղթութիւնը տարաւ այն վտանգաւոր նորութեան դէմ, որով ուղում էին համալսարանական պրօֆեսորներին մի հաստատ ուժիկ տալ: Նոտայնի միտքը այս էր, որ պրօֆեսորների մէջ պէտք է յարատեէ ազատ մրցութիւնը գիտնական փաստակների համար, որոնց չափը չափուում է պրօֆեսորի լսողների թւով և ուսանողական վարձատրութեան մեծութիւնով:

Այս բոլոր գրւածքներից դուրս, Լօրենց Փօն Նոտայնը իւր սկզբնական տարիներից դէս չի թողել հրապարակախոսական ասպարիզում

գործելու, զլիսաւորապէս նախկին Առւզաբուրգի, իսկ այժմ Միւնխենի Ալզեմայնէ Յայտունդ» (Հանրային լրագիր) օրաթերթում, և «Հիւսիս-Հարաւ գերմանական ամսագրում: Վերջինումս տպածներից մէկն է մի շատ սիրուն յօդւած Ենրաժշուութիւնը պետական գիտութիւնների մէջ», որի մէջ երաժշատական գործիքներին՝ պատմութեան և մարդկային հասարակութեան կարգերի տեսակետոց՝ իրանց օրգանական տեղն է տրւում: Նւին (Փլէյտա) իւր սկիզբն է առնում՝ խաշնարած ցեղերի մէջ, ջութակի և թմբուկի աղբիւրը՝ ոչխարապահութեան և կաշւեգործութեան մէջ է, փողը՝ հանքագործութեան է պարտական և ձիաւոր զինւորին, ամրող օրքեստրը կարող էր սուել միմիայն մեծ կալւածատիրութեան ազգեցութեան ներքոյ, մինչդեռ այնքան ատւած և այնքան սիրւած դաշնամուրը ներկայանում է որպէս քաղաքացիականութեան արզասիք:

Պէտք էր սպասել, որ Նոտայնի նման ուղեղը աւելի կը ձգտէր բանաստեղծութիւնը պրօզայցնել, քան բանաստեղծական իդէալներով հրապուրել: Որ այդպէս չէ, ապացոյց են նորա «Ալպեան վարդերլ», հաւաքածու ոտանաւորների, որոնք երկար ժամանակ նորագրասեղանում փակւած մնացելուց յետ վերջապէս հրապարակեան: Նոտայնի վերջին գրւածքն է, որպէս այդ իմանում ենք նորերումս, «Կինը, նորա կրթութիւնը և կեանքի կոչումը» (1890 թ.), որով նա երրորդ տպագրութեամբ մի զիրք է նորից մշակել, որի առաջին տպագրութիւնը լոյս տեսաւ 38 տարի առաջ, ծածկանունի տակ: Նոտայնը կապում է կանանց խնդիրը քաղաքանուեսութեան հետ և, որպէս այդպիսին, Նոտայնը առաջին գիտնական հեղինակն է այդ խնդրի մէջ: Գրքի հիմքում դրւած են երկու գաղափարներ: Քաղաքանուեսական գաղափարը տան տիկնոջ յատկացնում է սպաման մեծ ճիւղը, մինչդեռ բոլոր քաղաքանուեսական դպրոցները մինչ այժմ միայն արդիւնաբերութիւնն էին ճանաչում: Միւս կողմից այդ զիրքը մի յորդոր է կանանց կրթութեան գործին, որը «աղջիկներին կրթում է մարդու գնալու և ոչ ամուսնութեան համար»: որովհետև տղամարդու առանձին և սահմանափակ եկամուսների բաժանումը, ցրւելը, բաշխումը առօրեալ տնային պէտքերի համար կոչումն է և մի արհեստ, որպէս է և տղամարդու արդիւնաբերող գործը:

Այս անսովոր գրական և գիտնական բեղմնաւորութիւնը նշանաւոր դիտնականին ամենևին չի խանգարել նաև գործնական թէ գրական և թէ առևտրական ձեռնարկութիւնների մէջ գործունեաց լինելը Աւտորիալում այժմ ծաղկող ձեռնարկութիւններից մէկը կամ միւսը Շտայնին են պարտական կամ մասամբ կամ ամբողջապէս:

Նա է հիմնադիրը և երկարամեաց նախագահը «Աւտորիա» անունով կեանքի ապահովութեան և խորհրդի անդամ է մի մեծ երկաթուղու. նա է հիմնադիրը «Անշարժ կայքերի ընկերութեան» որը վարկի ընկերութեան նման մի հիմնարկութիւն է: Նա ծնունդ տւեց «Օրէնսդրութեան և վիճակագրութեան կենորոնական արխիւ» անունով պարբերական հրատարակութեան: Նա էր մէկը խմբագիրներից «Աւտորիա» ամսագրի առևտրական մինիստրութեան մէջ. նա է հիմնողը և խմբագիրը առաջին Աւտորիական երկաթուղային թերթի, որը Եւրոպայի ամենամեծերից մէն է դառել, որպէս նաև «Անտորոնական թերթի երկաթուղիների և նաւազնացութեան համար», որը օրգան էր գառել տէրութեան ամբողջ երկաթուղային գործի և որը այժմ ստացել է մի ուրիշ ձև (Verordnungsblatt): Դորանով յառաջացած պակասը նա ձեռաց լրացրեց հիմնելով «Ամսագիր երկաթուղիների և նաւազնացութեան», որը այս երեք տարում բարձրացել է մինչ երկաթուղային քաղաքականութեան և վարչութեան հեղինակաւոր ամսագրի աստիճանը:

Իւր արդիւնագործական ձեռնարկութիւնների մէջ յաջողութիւնը միշտ չի խրախուսել նորա եռանդու և բազմակողմանի նախաձեռնութիւնը:

Մի նոր գոտած ակրատօթերմ ջրերի վերայ նա հիմնեց մի հանքաջային կայարան Թրանց-Խօզէֆ-բարդ Տիւֆֆեր» Աւտորիայում, որը այժմ էլ ծաղկում է իր «Նոտայիրի Գաշտէն»: Բայց երբ նա, ասպակագործութեան բեղդիական սիստեմը ներմուծելու համար մի ընկերութիւն հիմնեց և այդ նպատակով անսահման երաշխաւորութիւններ յանձն առաւ կապիտալներ ճարելու համար՝ նա իւր բոլոր կարողութիւնը կորցրեց՝ ասպակու գնի յանկարծակի անկման պատճառով, բայց զլիաւորապէս գործավարութեան մէջ պատահած մեծ անկարգութիւնների պատճառով:

Այսողիսով նա իւր հին հայրենիքում մարտիրոս եղաւ իւր հայ-

րենասսէր ձգտումներին, նոր հայրենիքում՝ նա հնձեց թէ պատիւ և թէ դժբաղզութիւն։ Օրէնքի համաձայն, 30 տարի պրօֆեսօրութիւնից յետ, նո պէտք է թողնէր ամբիոնը։ Համալսարանը թողնելիս, նորա ընկերները ուղղեցին նրան մի ուղերձ, որը շատ սակաւներին է վիճակում, քանի որ նա համալսարանի բեկորը չէր։ Տէրութիւնից ունի ստացած զանազան շքանշաններ և աջմմ էլ մնում է անդամ Վիեննացի Գիտութիւնների ծեմարանի, պատուաւոր անդամ զինուորագիտական ընկերութեան, անդամ ստատիստիքական կենտրոնական մասնաժողովի, պետուական երկաթուղիների խորհրդի և պատուաւոր քաղաքացի ջիւֆէր աւանի նույնէրմարկում։

Նույնի համաշխարհացին զինոնական հռչակը նաև արտասահմանից մեծ պատուաւութեան առիթներ տևեց՝ Խոալիալից, Ուսուիալից, Ֆրանսիացից և Եապօնիացից։ Նա անդամ է մի քանի զիտնական ակադեմիաների արտասահմանում։

Եօթանասնամեակը անցած նույնը, որպէս հաղորդում են, զեռ ևս զւարթ առողջութեան տէր է և առողդ. այնպէս որ պէտք է յուսալ, որ նորա գործունէութեան այս նկարագիրը զեռ ևս լրացնելու կարօտ կը լինի նորա մահկանացուի գործքերի ամբողջութեան աեսակէալից։

Ա. Ա.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ. ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԵՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԱՐԵԱԿ ՏԵՐ-ՄԻՔԵԼԵԱՆԻ

(Նարունակութիւն 1)

Դպրոցական ծախքերը Պրուսական դպրոցը 1856-ի ցուցահանդէսում ժաղովրդական դպրոցները: Գիմնազիաները և պրօգիմնազիաները: Ուսուցչական դպրոցները: Ազգային ուղղութիւն: Ընդհանուր տարրական ուսում: Արքակինորեայ ուսումնարանները: Ցարավարքարանները: Ձեռագիտական-արհեստագիտական յարավարժարանները: Եկեղեցական խոստուանողական դպրոցները: Համալիրաժարանները: Պետական մասնաւոր դպրոցներ և քաղաքային դպրոցները: Օբէնքներ դպրոցի շինութեան համար: Դասարանների թիւը ժողովրդական դպրոցներում: Հասակը աշակերտների: Ուսուցման աւարկանները ժողովրդական ուսումնարաններում: Ուսուցչների ուսմէիկը: Դպրոցների կառավարութիւնը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՑՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ ՄԻՒՋԵՒ
ՊԵՍՏԱԼՈՅՑԻ

Ճշմարի՛տ Պրուսիան մեծ գործ կատարեց. երբ նկնջեցին, հակառակ իւր հիմնադրի լաւիտենական և միակ զլիապետի սկզբան, փոխանակ իւր միակ պաշտօնը կատարելու, այն է՝ ուսուցանելու և կրթելու ըստ ամսարանի Քրիստոսից իրան չանձնեած ժողովուրդը, աշխարհակալութեան յատեց ընկաւ, նա կորցրեց արդէն կաթոլիկական աշխարհում իւր հեղինակութիւնը. այնուհետև այդ գործը, պետութեան խնամածութեան ներքու, չանձնւեց ժողովրդին, ընդհմին պետութիւնը, մաքառելով պապերի և նոցանդովքների գէմ, վերջապէս իւր պտուղները տւեց. Պրուսիան միջոց չը խնաբեց կրթական գործին համար և այդ նրան լաջողւեց, որ ակներետեսնելու համար բաւական է ի նկատի ունենալ այն համեմատական ծախ-

1) Տե՛ս «Մուլք»-ի № 4. 5.

քերն, որ ունեցան, օրինակ 1874 թւականին զանազան պետություններու Պրուսիակին գալիս է 4%/₀ Բելգիակին 3,5%/₀, Ռուսաստանին 2,4%/₀. Խտավագին 1,4%/₀ Ռւշապրառ է մանաւանդ Մանիքին Եւրոպակի Ընդհանուր տպիտոթեան ցուցակն, ըստ որում ամենատպիտն են—Ռուսաստանը, Լեհաստանը, Վալլախիա, Սլավոնիա, Պօրուգալիա, Ռուսաստանում լուսաւորւածները 1000-ին չորս են գալիս, Բրիտանիականում Բէլգիայում և Ֆրանսիայում 50%/₀. ամենալուսաւորւածներն են Զվիցարիա, Հոլլանդիա, Դանիամարկ, Նորվիյա, Աւէգիա և Գերմանիա: Եւրոպակի $\frac{1}{4}$ մասը զեռխաւար է: Սակայն այժմ արևմտեան Եւրոպաի քանի մի մասերում, ինչպէս Գերմանիայում, Ֆրանսիայում հազիւ թէ անզրագետ անձն գտնվի:

Պրուսիակի գործունելութեան բնանիչը նկատելի էր պարզապէս Պարիսի 1856-ի ցուցահանդիսում Մարսեան զաշտում տրւած ցուցագործութիւններից: Ամերիկական, Նորւեգական, Փրանսիական բաղմատեսակի գեղապարուր, շքեղազարդ, հրաշագործ և ճարտարապետական շնութիւնների շարքում զրած էր կատարեալ պրուսական խղճուկ ուսումնարան՝ իրեն պրուսական ազգակին ճարտարագործութիւն: Մի՞թէ այդ տնակը չի ներկայացնում պրուսական և նոյն խոկ զերմոնեական պետութեան քաղաքական, հասարակական, ընկերական և բարուգական զաղափարներն իրանց նշանակական մարմնաւութեան մէջ: Մի տնակ—հազրարաւոր զաղափարների նշանակի բիւրաւոր գործաւնութիւնների գրգիւ և հիմնաքար...

Պրուսիան գորանով ասաց, որ հոգենոր բարիքները նշանաւորագոյն աղքիւրներն են աղքային ինքնաճանաչութեան և բարուակրօնական ուժերի, և որ պետութեան անհրաժեշտ են հոգենոր բարիքներն անպէս, որպէս հարկերն ու զինւորները:

Անդհանրապէս ուսումնարանական դրութիւնը Պրուսիակում շատ բարեբաստ է, բարձրագոյն ուսումնակալարների համար պատրաստող զպլոցները՝ գիմնազիաներն և սլուջիմնազիաները, նաև բէալական ուսումնարաններն են, որոնց ծախքերը պետութեան և համարնքների հոգալով խորին նախանձախնդրութեան մէջ են: Ծողովուգական զպլոցներն ունին իրանց հիմնադրական բարձր նշանակութիւնը. դոքա են բարեհիւսում և զարգացնում բարուակրօնական սկզբունքները. դոքա են, որոնք հիմքեր են տալիս և կրթում են, ընդունակ և ձեռնհաս դարձնելով ապագայ կոչման և ընդհանուր լուսաւորութեան: Ըստ այդմ ժաղավարական զպլոցներն են նախալարաստութիւն ամենայն զարգացման կամ լաւագոյն ասած, առաջին բազրունին, որից միան կանոնաւորապէս կարելի է բարձրանալ ամենավերին չարկերը: Ազապիսով նա ամբողջ զարգացողական գործի հիմնաւոր մասն է կազմում, նա մասակարաբում է հոգենոր բարիքներ, որոնք ազնւացնում են ամբողջ ազգը և բարձրացնում մարդկակին արժանիքը ժողովրդի ամենասասարին խաւերում: Երբ մի զպլոց խոր կանոնաւոր ըրջանաւութեան մէջ է մտնում, նա արդէն հաստատագիւ: Ճեռն-

հաս է և պատրաստ իւր աշակերտների հաջեցողութիւնները վարժել, իրաւանց և պարտեաց զգացումը, բարուղն, վակելչին, օգտակարին և կարեռի ճանաչողութիւնը զարթեցնել և թարսացնել. իսկ երբ նա այդ պարտականութիւնը լիովին կատարեց—բարին ու ճշմարիալ, գեղեցիկ և օգտաւէտը դուրս կը բղինք ինքեանք ըստ ինքեանց և ժողովրդի բարօրութեան կը ծառալին. Հենց ավգուստ ժողովրդական զգրոցները, որպէս և ամենալի ուսումնավայր, աշակերտոներին մարդ կը դարձնէ, մարդ պիտութեան, մարդ ազգի, մարդ համայնքի մէջ և խորովին արդ է՝ «նորա պատիւը, իրաւունքը և խնդիրը»: Նկատելի է որ ժողովրդական զգրոցները ձևակարգութեամբ և նիւթապէս երկսափի պէտք է լինին զգացարանական լարաբերութեամբ և կապ ունենալով բարձրագուն ուսման և կեանքի հետ՝ իրեն միջնորդ երկուքին էլ ծառակելով: Նորա ձեռակարգութիւնն է դասարանական կարգը, որի ճշմարիտ կանոնարութիւնից է կախւած խնդրի նիւթաւորապէս լուծելը: Դպրոցի ազ խնդրի ձեռնհասութիւնն ևս կախւած է ուսուցչակարգութիւնից և վարժապետների զգրոցումից. և դոքա ևն ուսուցման էութեան չափը (Շատան):

Ահա 1882 թւականին Պրուսիակում զգրոցին այդ միջոցը տալու գործունէութեան մէջ էին 100 զգրոցներ, 64-ը բողոքական, 27 հռոմէական ուսուցիչների և 6—վարժուհիների, որոցում մինչև 1872 թիւը շատ սահմանափակ ուղղութիւն էին տալիս, ըստ որում վարժապետները լոկ գոյ անել տալով, կաշկանդում էին աշակերտների մտքերը: Պատմում էն որ այդ ժամանակներում եղել են, մանաւանդ Հռենոսեան երկուում և Վեստֆալում զգրոցներ, որոնցում անեներելի սխալներ էին անում թէ գեղագրական և թէ ողղագրական:

1872 թւականից ինտոք ուսումը ստանում է աշատեղ դուստ ազգային ուղղութիւն, որի նիւթն էր նախ մայրենի լեզուն, ապա պատմութիւնն ու հայրենապիտութիւնը, որոնց ուսուցումը թէ բերանացի և թէ պատկերներով, կեանքի գոզներով և ճշմարտութեամբ աշխատ և խանդ (Էնտուզիազմ) էին լառաջնում աշակերտների մատաղ որաերում. «ինչպէս կարող է պատահնին չ'ուզենալ իրապիկ լինել այն տեղեկութիւններին, առանց վըձաւական ձգուման այնպիսի հայրերին և հայրենիքին արժանի լինելու: Արդ, եթէ մեր պատանեկութեան առջև գերմանական լեզուն և իմաստութիւնը բոհեմիական գիտեր չեն, այլ եթէ նա գերմաներէն գիտէ, սիրում է և երգում է և գերմանական պատմութիւնը զրոյցներից սկսած մինչև ալֆմեան օրաթերթը ճանաչում է և ըստ արժանեաց դատում է, այն ժամանակ զգրոցը բացած է բարեաց աղղային զարգացման առատածորանը: Այնժամանակ առաջ են գալիս սիրոց վարժութիւնն, որ կարող է ազդալին ոգով լառաջանալ»: Ահա այդ է ազգային ուսման հիմունքները ըստ Ռիլօի (Համազիտարան Շմիտի):

Պրուսիան պսակեց իւր գործը և թէի նա առաջնորդ էր և խթան

պետութեան միւս մասերին, սակայն կավին վալրեր, որտեղ գեռ աճտա-
շութիւնը կոկող ուրագի չէր ենթարկւել։ Այդ ուրագն է ընդհանուր
տարրական ուսումն, որ վերջապէս մտաւ ամենայն անկիւններ։

Որքան լառաջաղիմութիւնը լաջողութիւն է ունենում, աճնքան աւելի
նորանոր պահանջումներ են երեան ելնում։ Արդ, գերմանացիք ողնորու-
թեամբ լառաջ տանելով ուսումն և գիտութիւնը, տարածելով ազգային
կրթութեան գաղափարը, զարկ տվին նաև ոկղբնական կրթալավարին այն
է՝ ման կապարտ է զին ըստ Ֆրեօրելի թէ զոքա են ապահովագոն մի-
ջոցներ, ճշմարիտ ճանապարհ և պարզագոն ձեւ իսկական ընտանեկան
կեանքի ամենայն զրութեանց և լարաբերութեանց մէջ ընդհանրապէս
բարձրացման և աղնւացման, մեկին կատարելութեան և պատկերացման՝
իբրև ճշմարիտ աղբիւր անհատական ճշգրիտ կեանքի, ուրախալիր ժողո-
վրդի և մարդկավին կենցաղավարութեան»։

Միւս կողմից նկատած էր որ պարտապիր ուսումն ժողովրդի մէջ
սրտակցութիւն չէ գտնում, ճողոներին իրանց որդոց ուզարկում էին ուսում-
նարան, վասն զի պարտաւոր էին, ըստ որում 14 տարեկանի հասած երեխան
արդէն ապատ էր թողնում ուսումնոց և աղղափառլ կրթութիւնը խեղդում
էր իբրև վաղահաս ցանք փշերը մէջ։ Դորանից խոր տալու համար էր որ
անցեալ զարու կէսին երեխան կիրակ նորեալ աչ ուսումն արանն եր,
որոնք պէտք է շարունակէին ժողովրդականի մասակարարածը։ Դորա տա-
րածեցին Անդլիակ, աչ և Ամերիկայ որտեղ զուտ եկեղեցական կերպարան
ստացած։ Ազգաիսի ուսումնարաններ, որոնք կոչւում են նաև տօն ադպոց,
կրկնութեան դպրոց և ազն եղան Բնորդինում և ապա տարածեցին
և գոգութիւն ունին այժմ ես, Ազգտեղ պիտի դնան 16—18 տարեկան
պատանիներն, որոնք զուրա են եկած ժողովրդական դպրոցներից։ «Նորա
նպատակն է, ըստ Սաքտոնիակի դպրոցական օրէնքների, մասամբ կրկնումն,
հաստատումն և մտապնդումն առաջակ սովորածին, մասամբ ծաւալումն դըպ-
րոցական ուսուցմով ձեռք բերւած գիտելութիւնների, որոնք մանկական
դպրոցներում սակաւ կամ տակաւին կարող էին անուշադիր մնալ։ Նոյնը
հաստատում են և աչ մանկավարժներ, որոնք նկատել են որ երեխաները
դպրոցը թողնելուց չետու չանձնուում են արհեստի, ըստ որում մարմինը
զարգացնելով, հոգենոր զարդացումը աչքաթող է լինում և բոլորովին
անհետանում։ Աերեի աչդ է աճն հիմքը, ասում է Նիմաչեր, որից հիները
արհեստի զբաղմունքն անարժան էին համարում աղատ մարդուն։ Այս
հիմունքով են գոլութիւն առել չարավարժարժանն եր (Fortbildungsschulen), որոնք կան Բաղենում 1754 թւից, Պրուսիայում 1763-ից, Վիե-
տեմբերգում 1795-ից, Բաւարիայում 1803-ից։ Խակ օդինապէս մտցրւած են
Աւստրիայում, Բաւարիայում, Կորուրդ-Գոթայում, Կուրհեսսենում, Նաս-
սաուում և աչ ուրեք, որտեղ պարտադիր է և չաճախումը։ Շաբաթական
մի քանի (2—3) ժամներ նւիրել աչդ լաւ գործին մեծ բան չէ, բաց

դորանով մանկան ձեռք բերած հոգեկան հարատութիւններն անկորուսա են դառնում, կատարելագործւում են և բարագակոմ չնորհքներին վարժուում կեամքի ալեկոծ հոսամքի մեջ նետած անօղնակոմ պատմիները: «Աչ մի խելօք կառավարութիւն, ասում է Նիմանիր, չի կարող զորա դէմ հակա-ճառել. նա պէտք է ինքն խոստովանի զորա մեջ բարուականութիւնան չա-ռաջավարելու միջոց»:

Այդ ուսումնարաններում ուսուցանում են նոյն առարկանները, որ անցնում են ժողովրդական դպրոցներում, միայն թէ գործնական կեանքին չարմարեցրած: Քաղաքներում զիլսաւոր տեղն են բոնում չափել, հաշւել, կազմագիտական (մեխանիկ) հիմքեր և ազն, իսկ գիւղերում գիւղատնտե-սական գիտելիքներ:

Յարավարժարաններ երեացին նաև վաճառականների համար, որտեղ սուստրական հմտութիւններն են զիլսաւոր տեղը բանում: Շտուտգարտի ալսպիսի յարավարժարանը տալիս է առաւտօնեան և երեկոյեան դասեր (ժամ 8—9 ժամ ձմեռը, 8—9 ամառը ընդամենը 36 ժամ տարին), աւան-դիլով գերմաներէն, ֆրանսերէն և անգլիերէն, առ ետրական համակագրու-թիւն, հաշիւ և զեղագրութիւն: Աւելի ընդարձակ և մանրամասն հասակա-ւոր աշակերտներին—ըարձր դառընթացքում:

Չափազանց մեծ տարածումն ունեցան ձեռադիտական յարավարժա-րանները, որոնց թիւը Պրուսիայում՝ 1854-ին 220-ի էր հասել 18.000 աշակերտներով. դրեւ, հաշւել, երկրաչափական, պատմական, բնական ուսումնքների, օրինագիտական, հաշւապահական, ձևուագիտական (Gewerbe) դասեր էին այդ վարժարանների զբաղմունքը: Դոցա կազմակերպութիւնը զանազան գաւառներում զանազանակերպ էին: Դոցա օգտաէտութիւնը աղն-քան աչքի ընկառ, որ մի քանի տեղեր զիւղատնտեսական միութիւնները (verein) նորանոր մոքերի եկան և հիմնեցին զիւղատնտեսարաններ գեղ-ջուկ պատմոն իների համար, որոնք ուսման առանձակոյն կարօտութիւն ունեին, վասն զի զիւղական զպրոցները միայն մի դասարան ունեին, ընդհմին և բանդէտ վարժապետները միշտ դիմում էին քաղաքներ: Խոկ ձեռադիտական յարավարժարանները աշնաք, զարդացան, որ 1869-ին օրէնք հրաատրակեց Պրուսիայում, պարտադրելով վարպետների օգնական-ներին և սկսնակներին մինչև 18 տարեհասակը լաճախելու տե-ղական յարավարժարաններն, ըստ պատմ և արհեստապետները պարտաւոր էին զորա համար ժամանակ տալու, պետութիւնն ես իւր կողմից զրամանպաստ է տալիս նրանց, որոնք որոշեալ պահմաններում են դանում կազմակեր-պութեան, ուսումնապարտութեան և այլն նկատմամբ: Ի հարկէ այդ «չնոր-հարանները» միայն անքան նշանակութիւն ունին, որ, ինչպէս ասացինք, նախ վարժեցնում և շարունակում են ուսածը և երկրորդ՝ տալիս են ար-հետի տարրական ընդհանուր չնորհքներ կամ ձեռնալորժութիւններ: Մի քանի դժւարութիւններ, որոնք ներկայանում են բոլոր գաւառներում,

աշակերտների անհաւասար մոտակելրպութիւնն է, ժամանակի կամ ժամերի անհամապատասխանութիւնը, վասն զի միան ազատ ժամերին կարող են աշակերտներն իրանց գործից հեռանալ, կարգապահական միջոցների պակասութիւնը, համեմատելով միւս ուսունարաններին և ուսուցչի չնորհքը, որ ամենայն վարժապահի հարստութիւնը չէ: Սակայն դոքա, ալսինքն ազդ չարավարժարանները չեն պատրաստում կատարեալ մասնագետներ, ազ հաշելու, չափելու, փորձնական և բնական մասնագիտութիւնների ընդհանուր անհրաժեշտ հիմքերի վարժութիւններ, արհեստների կարմոր ձեռնաշղողութիւններ են տալիս, քայլ առ քայլ առաջ գնալով, բաց ոչ բանակարգորէն (սիստեմատիկապէս): Սոյց հետ և մարմնամարզական աշխատանքներն ամրացնում են պատանիների հոգեկան զօրութիւնները, ըստ որում ազդ ամենը կարող են իրաւամբ արդի մշակութեան (կուլտուրա) վարդաշման և ծաւալման հիմնակէտը համարել:

Որպէս զի մեր գրութիւնը կատարեալապէս հասկանալի լինի ընթերցողներին և մանաւանդ որ Գերմանիայի դպրոցական աշխարհը պատկերանաց նորա առաջ, մի ընդհանուր համեացք ձգենք ազդ զպրոցների վերաց: Ակզմնական դպրոցները ժողովրդական տարրական ուսումնարաններն են, որոնք տալիս են հիմնական ուսումնի: իսկ որ և է կոչումն տաճանալու ձգտողների համար նշանակւած են զանազան արհեստանոցներ և մասնագիտարաններ, որպիսիք են՝ առևտրական, ճարտարագետական, զինուորական, անտառալին, բէալական և ազն, նոյնպէս ուսուցչանոցներ, նկարչանոցներ, երաժշտանոցներ և ազ անալիսի դպրոցներ, որոնք պատրաստում են աշակերտներին զանազան կոչումների համար, ըստ որում դոքա միջին տեղը բռնելով ժողովրդական դպրոցների և բարձբաղոքն՝ համալսարանների միջև, համարւում են միջնակարգ դպրոցներ:

Համալսարաններն են կարող են կոչման դպրոցներ անուանել, վասն զի անտեղ ևս պատրաստում են իրաւաբաններ, հոգեորականներ, բժիշկներ, մանագէտ ուսուցիչներ՝ ուսուցներ, բնագէտներ և ազն, ըստ որում զինուորականներն են նոյց նախապատրաստարանները:

Ժողովրդական դպրոցների շրջանում են տեսակներ՝ ըստ ուսուի, կրօնի տարբերութեան, նա և աղաս և ոչ աղատ:

«Իւրաքանչիւր մարդու համար ամենաթանգագին և ամենաբարձր տեղն է բանում իւր սեփական կրօնը, ուսաի ամենայն համայնք, ամենայն ժաղավորութ, ամենայն ազդ սրբազան պարտականութիւն և համարում և ամենայն ջանք ու ձիգ թափում է իւր որդիներին նոյն կրօնը ուսուցանելու, նոյն հաւատքը նորա սրսի մէջ ներշնչելու, որպէս զի նոքա հոգեպէս միակից լինին իրանց, ըստ որում և իւրաքանչիւր ծնող աշխատում է անպիսի ուսումնարանի գիմնի, որի կրօնական հոգաւարութեան հաւատ ընծանել կարողանու: Խակ ժողովրդական դպրոցները մի տեսակ mixta causa լինելով՝ ծառադառ և նախապէս և զինուարութիւս և կրօնե-

ցուն, բայց միւս կողմից չեն կտրում աշակերտներին կեանքի պահանջներից, այլ աշխատում են, ըստ կարելովն նոցա ապագայ կեանքին նախապատրաստել, մանաւանդ որ եկեղեցի և կեանք անջատ չեն իրարից և առանց միմիանց անհասկանալի են, ժողովուրդն ևս կամենում է անհրաժեշտաբար իւր տարրական (ծխական) ուսումնարանները ունենալ, վասն զի միջնակարգ դպրոցներում, թէև կրօնը իշխող է, սակայն մասնագիտական առարկաները գերակշտոր են հանդիսանում:

Գերմանիայում կան քրիստոնէական դպրոցներ և ոչ քրիստոնէական, այն է միան ցուղալական: Քրիստոնէական դպրոցների մէջ զանազանուում են՝ աւետարանական և կաթոլիկականը.¹⁾ աւետարանականներն, ևս բաժանուում են լութերեան, վերանորոգաւած, միացած և ավե (reformirte, unirte) ևկեղեցիների դպրոցների, կաթոլիկականի մէջ նկատելի են՝ հռոմէական-կաթոլիկական, լունա-կաթոլիկական և գերմանա-կաթոլիկական: Մի որ և է կրօնի պատկանող դպրոցը կոչւում է նաև «փոստավանողական» (confessionelle). կան տեղեր, ինչպէս Սաքսոնիայում և այլ ուրեք, որտեղ իշխող է մի կրօն, ըստ որում օրէնքով թողատրած է միւս կրօնի քրիստոնէաներին լաճախել, միան առանց կրօնի դասաւութեան, որ պէտք է ծնողները մասնաւորապէս հոգած ըստ իրանց կրօնին: Կամ թէ երբեմն զանազան պարագաներից ստիպւած մինչև 12 տարեկանը ուսանում են և կրօնը. սակայն այս շատ հաղւադէպէ:

Կամ դպրոցներ, որոնք կոչւում են «համալրաժարաններ» (Communal կամ Simultanschule), ուր կարող են լաճախել ամենայն կրօնի պատկանողներ առանց խորութեան, ալս հաստատած է մի տեսակ աղդաճաշնելու սկզբունքի վերաց:

Պետական դպրոցները կոչւում են նաև աղաստ դպրոցներ. կան նաև ոչ աղաստ, այն է մասնաւոր դպրոցներ, որոնք պահուում են մի քանի ընտանիքների միացած ուժերով: Ըստ տեղւոյն կան քաղաքավին դպրոցներ, որոնց մէջ կան ստորին և բարձր տեսակներ: Սաքսոնիայում ժողովրդական դպրոցներն են՝ պարզ, միջին և բարձր դպրոցներ. միջին և բարձր ժողովրդական դպրոցները ունին և տեսուչ:

Չենք վիշտում այլ ևս չքաւորների, որքերի, կոլեգի, խուլերի, և ավեն դպրոցները:

Դպրոցի շինութեան համար ես կան օրէնքներ. Սաքսոնիայում՝ դըպրոցի պէտք է լուսաւոր լինի և իւրաքանչիւր աշակերտի համար 2,55 իսրանարդ տեղ դասարանում, Պրուսիայում՝ 0,6 քառակուսի մետր. օրէնքի տակ են նորնպէս պատշաճ կանկարասիները, որոնք պէտք է հոգացվին:

1) Կանոնիկական պէտք է կառկանալ նորագանդներեն՝ առկառ չըլերանորոգւան և կեղեցիները, այս բառը կերպիւում է գեռ ը-գ գործուց:

Այսուել հայոց եկեղեցիներ եւս անուանում են կայ-կաթոլիկական (armeno-katholisch), որ համակարգական չէ, ուշանակում:

Ժողովրդական դպրոցները տարբերւում են զասարանների թւով. կաճ մէկ, երկու, երեք, չորս և շատ զասարաններով դպրոց. Սաքսոնիակում գիշական դպրոցը պարտաւոր է ամենանւազը 2 զասարան ունենալ—ստորին և վերին զասարան. տարրին զասարանը պարապմունք ունի ճաշից չեռոյ, իսկ վերին զասարանը ճաշից առաջ. շաբաթը մի անգամ կամ երկու անգամ երկուքն էլ գալիս են ճաշից առաջ. Պրուսիակում կան նաև միղասեան դպրոցներ, որոնք շատ սակաւ են, միայն 3 բաժանմունքով, խառն հասակաւորներով առաջինները ունին 20 դաս շաբաթական, իսկ վերջինները 30, վասն զի մարմնամարզութիւն (և ձեռագործութիւն օրիորդաց համար) աւելանում են. 8 զասարանից աւելի դասարան ունեցող ժողովրդական դպրոց չը կայ. 1ինում են զուգընթաց զասարաններ:

6—15 տարեկանը տղալոց համար և 6—14' օրիորդաց ուսման պարտաւորիչ ժամանակն է: Գիւղերում 140 աշակերտներից աւելանալուց իետով, դպրոցը պէտք է մի ուսուցիչ ևս ունենալ (Köthen): Անհալտ-Դեսսաու-Կեօթենում ուսուցման առարկաներն են՝ սրբազան պատմութիւն, կրօն, կարդալ, գրել, մտքի և փշողութեան վարժութիւն, թւարանութիւն, ուղղագրութիւն, մալքենի լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնական ուսումնանքներ և երգեցզութիւն. մնացեալ մանրամասութիւնները վերաբողուում են տեղական հանդամանքներին: Ուսուցիչներ նշանակուում են ուսուցչանոցը աւարտածներից. ուսուցչանոց ընդունուում են գիմնազիայ աւարտողները և ստանում են դրամական օգնութիւն և բնակարան. ուսուցչանոցի ուսումը շարունակուում է 3 տարի: Գիւղական դպրոցներում և քաղաքացին ստորին ուսումնարաններում ուսուցիչը ստանում է ամենանւազը 200 տալեր (ըստ ակժմնան թուղթ գրամագնին 240 ռ. չափ), բացի եկեղեցում ծառապէլու՝ 200—500 տալեր. կառավարիչները ստանում են ուսուցչի համար նշանակւած ամենամեծ գումարը (500 տ. կամ մօտ 700 բուբլի):

Դպրոցները կառավարուում են դպրոցական խորհրդի միջոցով, իսկ հսկողութիւնը անմիջապէս գաւառական վերահասուների ձեռքումն է, որոնք ընտրուում են դպրոցական գործին տեղեակ անձերից և տարին երկու անգամ վերահասու լինելով դպրոցների դրութեան, չափագրում են վերին իշխանութեան:

Ժողովրդի կողմից ընտրուում են 3 հոգաբարձուներ. դպրոցական գործի անմիջական վերահսկութիւնը պատկանում է 2 կամ 3 չառաջավարների (նախադահ), որոնք ընտրուում կամ նշանակուում են վերին իշխանութիւնից:

Կրօնի դասատուութեան հսկողութիւնը պատկանում է իւրաքանչիւր տեղի հոգեորական վարչութեան:

Անհալտ-Դեսսաու-Կեօթենի ալս կանոնագրութիւնը շատ մուծ ուրախութեամբ քաջալերեկ է ամբողջ Գերմանիայում, որի նման կաղմեկ էն միւս այլ գքսութիւնների օրէնքները: Հարկաւ իւրաքանչիւր պէտութիւն

աչքի առաջ ունի իւր երկրի տեղակին հանդամանքներն և պահանջները:

Մենք խոսս ենք տալիս պետական կամ ուսումնական դպրոցների վերակ խօսելուց, ըստ որում մեր գրութեան նպատակն ու նիւթն են ժողովրդական դպրոցները. Այդ գպրոցների գրութեան ընդհանուր պատկերը տալուց վետոց, անցնենք այժմ նոյց ներքին վիճակին, որը զլիսաւոր ցուցանշանն է նոյց էռթիւնը հասկանալու համար. ընդ նմին և մի օրինակ է գերմանացիներին ճանաչելու համար, ըստ Ժիւլ Սիմոնին, որ առումէ՝ «ան ժողովուրդն որ ունի ամենալաւ դպրոցներ, առաջին ժողովուրդնէ».

(Կը շարունակուի)

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՆԱՐԴՈՍ. — «ԱՆՆԱ ՍԱՐՈՅԵԱՆ», էտիւդ: Հրատարակութիւն Բարսեղ Քամալեանի, Թիֆլիս, տպարան Տ. Նազարեանի. 1890 թ., արտատպած «Նոր-Դար» լրագրից, 76 էրես, տառ № 10. գինն է 30 կ.:

«ԱՆՆԱ ՍԱՐՈՅԵԱՆԸ» նամակների և աղջիկը, չը նաև լով իրանց բարի և անձնելը բնութեան, անկարող ևն ապրուստի միջոցներ գտնել իրանց ընտանիքի համար: Սարոյեանի մի որդին զրուասէր, քէփ անող մարդ է, միւսը ծով, երրորդը (Դրիդորը) թէն լաւ, խելօք, բայց թոքախոռվ հիւանդ: Դրութիւնը անելանելի է:

Նար-Դոսը խսկապէս շատ է անելանելի վիճակի մէջ գձել իւր նկարագրած ընտանիքը, բացասական գեր տալով նորա բոլոր անդամներին. բայց երեսովը նա սիալ չէ դիտել և ճիշդ է նկարել է նորա մի քանի թարւում է և չը նաև լով աղ բոլորին՝ նա սիրտ է ունենում թղթախաղում վտանգի ևնթարկել բոլոր իւր սիրածների վիճակը: Մորութիւնը չշմացնում է Սարոյեանին և նա տանուլ է տալիս իւր հարստութիւնը, իւր ընտանիքի բարեկեցութիւնը և, չը դիմանալով գործած լանցանքին, խելագարւում է:

Սարոյեանի ընտանիքը տղամառութեան մէջ բնկճւում է, կինը և տպաւորութեան), թէ աղօթքը միծ

փրկարար նշանակութիւն ունի մարդու նամանաւանդ տանջւած չարչարած մարդու կեանքում: Հեղինակը ստական, որ հետեւ է իւր հերոսների կեանքին և դրութեան, մի այնպէս վախճան է տալս իւր հերոսուհի Աննակին, որով ուզումէ առել թէ մերնիւթական աշխարհում, ուր ուտել, խմել է հարկաւոր, ուր ձեռքի աշխատանք է հարկաւոր, ուր մարդու կազմածքը ունի իւր բնական բազմատեսակ պահանջները, մարդկավին ոգին անկարող է միթարեւ և պահապանեւ միան քարոզներով: Աննան, չը նաւելով իւր որոշումին՝ ամենքել իւր վիշտը աղօթքներով և լաւ ապագալի լուսով—անկարող է համարում շարունակել իւր կեանքը և թունաւորում է:

Նամակները գրւած են մեծ զգացմունքով, թէն մէջը կայ խառն նաև սենտիմենտալիզմ: Առաջին երեք նամակները փոքր ինչ չեն համապատասխանում վէպիկի ամբողջութեան: Այդ առաջին գլուխները ուրիշ բովանդակութեան գրւածքի սկիզբ կարող էին լինել, և ընթերցողը խակապէս սպասում է ուրիշ առևտնակութեան, քան զըսնում է դրանքի մէջ, եւ հէնց այդ

սկիզբն է, որ համեմատաբար հետաքրքրական չէ այն աստիճան, որ դիրքը կարդալ սկսազը նորան ձեռքից չը դցի:

Մի քանի հոգեբանական գծեր շատ զեղեցիկ են դուրս բերւած և կրում են իրանց վերակ ինտոքով արած զիտուութեան կնիք: Լաւ են Ե, Զ, Ը, Ճ. նամակները:

Գրւածքի մէջ կան մի քանի ձգձգած տեղեր, անբնական զիրքեր: Արշակ Սարովեանցի արքեցողութիւնը շատ էլ լատուկ չէ մեր կեանքին: Գրիգոր Սարովեանը գիմնազիստ է և ունի 23—24 տարի հասակ, որ սակաւ է պատահում աշխմեան ժամանակները:

Աննա Սարովեանը կրում է իւր վերաց լաւ զրական օրինակների ուսումնասիրութեան հետքեր: Հեղինակի տւածը վիազական և գեղարւեստական երկերի համար լաւ սկիզբ կարող է համարեւ, եթէ հեղինակը խսկապէս նւիրել է իրան զրականութեան այդ ճիւղի մշակութեան: Թէ և վէպիկը չէ գործում հասուն զրւածքի տպաւորութիւն, բայց իւր մէջ պարունակում է բառաջադիմելու ընդունակութեան ապացուցներ:

Ա. Ք.

«ՍԱՐԿԱԽԱԳԻ»: Ս.-Պետերբուրգ, տպարան Սկորոխոզովի. 1890 թ.
8-ծալ. 71 երես. տառ № 12. զինն է Յ կոպէկ:

Պատոմական կենսազրական բովանդակութիւն ունեցող գրքերը | թեամբ է կարդում հասարակ ժողովանդակութիւն ունեցող գրութը. այդ պատճառով, ավքեր համապատասխան միշտ մի առանձին հետաքրքրու-

է բարտկասլես կրթել զրգերով, պէտք է մի առանձին ուշք դարձնեն աչս տեսակ բովանդակութիւն ունեցող գրքերի հրատարակութեան վերաբ:

Այս գրքովում պատմւում է Բովզարիավի նորագոյն պատմութեան ամենավայլուն հերոսներից մէկի՝ սարկաւագ Լեւսկու կեանքի և գործունէութեան մասին։ Բովզարական զօրաւոր կազմակերպութիւն տուղ-

ներից առաջիններն էին Լեւսկին և Լիւրէն Կարաւելսվը, նոյն ուսանելի գործունէութեան հետ բաւական լաւ ծանօթացնում է աչս զրւածքը։

Այս համարում բերած Պետեր-բուրզի հինգ հրատարակութիւնների մէջ ամենաճշանաւորն է «Սարկաւագը»։

Լ. Ա.

«ՀԱՅԻ-ԴԻՄԻՑԻ» ու «ՍՏԵՓԱՆ ԿԱՐԱԶԱ»։ Ս.-Պետերբուրգ. ապարան Սկօրոխովզի, 1890 թ. 8-ածալ 32 երես. տառ. № 12, գինն է 3 կուպ.։

Յալտանի քաղաքական պալմաններում մի ազգի մէջ չառաջ են գալիս առանձին տեսակ աւազակներ, սրոնք մղում են կատաղի կուր թշնամիների հետ։ Բովզարիավում Հաջի-Դիմիտրին և Ստեփան Կարաչան ազգ տեսակ աւազակների՝ գաղտակների՝ առաջին պարագաներից էին. Նոցա քաջագործութիւնները և հերոսական մահը թուրքերի դէմ վարած կուներում գարձրել են ազգ անձնաւորութիւնները բովզար ժողովրդի համար պաշտելի։

Գրքովում գործ է ածուում պահապատմութիւնի, ազգատութիւնի, օդ-նութիւնի ձեր, Լեզուն ժողովրդականացնելու համար պէտք է, կար-

ծում ենք, ուշք դարձնել նախաղաւութիւնների պարզ կազմութեան և խօսքերի ընարսութեան վրաէ և ոչ գրական լեզուի ծռմռել։ Ուրիշ խնդիր է եթէ ամբողջ գրութիւնը մի որ և է ժողովրդական բարբառով լինի պատմւած։ Նուն իսկ նախակամարմար կը լինէր օրինակ մշեցիների բարբառով այս երկու զրքովինների հրատարակութիւնը, բայց երր մի բան ժողովրդի համար պատմեում է գրական լեզուով, ցանկալի է այդ լեզուի մաքրութիւնը և կանոնաւորութիւնը ըստ կարելովն պահպանած տեսնել։

Լ. Ա.

«ԱԶԲԱՅԻ», Ս.-Պետերբուրգ, տպ. Ակօրօխօվօվի 1890 թ. 8-ածալ.
57 երես, տառ. № 12, գինն է 5 կոպէկ:

Ողեարիչ Ազբայիլը լաւտնի Միսի-
թար աւազակապետն է, որ վատու-
դարձաւ Դաւիթ բէկի համհարդներից
ամենանշանաւորը, հայոց զօրքերի
սպարապեալը. Դարաբազում անցնեալ
դարտմ հայոց թուրքերի հետ ա-
րիւնահեղ կոիւները ծնեցրին մի
շարք ուժեղ, հզօր անձնաւորու-
թիւններ, որոնց հետ աւելի լաւ
ծանօթացնում է Դափիի «Դաւիթ—
բէգը», Նոյն անձնաւորութիւնները
միայն անհամեմատ թուլ կերպով

դաւրս են բերած և աչս գրքովիում,
որի մէջ բնութեան նրկան նկարա-
դարձաւ Դաւիթ բէկի հերոսները և հերոսների տեղ
տեղ միամիտ խօսակցութիւնները
թուլացնում են պատմածի հետա-
քրքրութիւնը: Եթէ ժողովրդական
ընթերցանութեան համար մի շատ
էժանագին հրատարակութիւն չինւէր
Բաֆֆի «Դաւիթ-բէգից» աւելի նորա-
տակաչարմար կը լինէր:

Լ. Ա.

«ՇԱՄԻԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ», Ս.-Պետերբուրգ տպ. Ակօրօխօվօվի 1880 թ.
8-ածալ, 18 երես, տառ. № 12. գինը 2 կոպէկ:

Գրքովիս բովանդակութիւնը ալս է:
Ռուսները շրջապատել են լեռ-
նական չեչեններին ամեն կողմից:
Գոռող Շամիլը հեռու է նոցանից և
Չեչնան կամ պէտք է հնազանդւի
ուուսներին կամ զրկի իւր որդիկե-
րանցից կատաղի կուռում: Չեչնացի
զիխաւորները մտածում են պատպա-
մաւորներ ուղարկել Դարչօ առլը,
խմամ Շամիլի մօս, որ նա կ ամ
ո գն է զօրքով կամ թուլ տակ
հնազանդւելու դեառոր. ուուսներին:
Բայց ալ կը խիզախի հնազանդութեան
մասին խմամի, մօտ խօսել: Շամիլը
միայն լսում է իւր ջերմ սիրած
մօր խորհուրդները. ալդ իմանում
են պատպամաւորները և միջնորդ

գցում նորան: Շամիլի մակրը լաւտ-
նում է իւր որդուն չեչենների միամիը
հնազանդւելու ուուսներին: Տիսրում
է անվեհեր խմամը և երեք օր վակ-
ւում մզկիթում ազօթելու Ալլահին և
Մարգարեից խորհուրդ հարցնելու,
իսկ ժողովուրդը լաց և վակոցով
մոմ ու ազօթքով սպասում է խմամի
երեալուն: Ահա և նա սիրթնած,
աչքերն արնկալած բարձրացաւ մզկի-
թի կտուրը, կանչեց մօրը և զիմնից
ժողովրդին, զալրացած լաւտնելով որ
չեչենները մօուացել են իրանց Ալ-
լահին և Մուհամէդին տւած խօս-
տումը, որովհետեւ իրանց լանցաւոր
սրուերում լվացել են մի լանդուզն
միաք՝ հնազանդւել զեաւորներին:

Նրանք չեն ամաչել մինչև անգամ իւր՝ Շամիլ՝ մօտ մարդիկ ուկարկել, ստանալ համաձայնութիւն, և Ձեչնալի պատգամաւորները հասկանալով իրանց մտաղրութեան ստորութիւնը չեն չանդզնել իրանք երեալու իւր առաջ և միջնորդ են գցել մի թուլ կնօշ՝ իւր մօրը. Մարդարէն հրամացեց հարիւր հարւած տալ նորան, ոլ առաջին անգամ չալտնեց չեչենների ալղ մտաղրութիւնը իմամին և ալղ առաջինը, աւաղ, իւր մալրն էր, սական արդարութիւնը պահանջում է, որ նա ինքը պէտք է լինի դահիճը իւր սիրելի մօր, Հինգ հարւածից լիտու ուշաթափւում է մալրը, զարհուրած Շամիլը ընկնում է մօր ոտքերը. Ժողովուրդը հուզւած է և լալիս:

Բայց իմամը կրկին ոտքի է կանդնում և լալտնում իւր կամքը՝ ընդունել իւր մէջքի վերաց մնացած հարւածները. Մերկացնում է իւր մէջքը և հրամակում միւրիդներին

հաստ ճիպոտներով տալ իրան 25 հարւած, սպառնալով որ եթէ մէկը համարձակվի ինաւիլ և թուլ խփել, խենջարը կը կոփի նորա փորը. Բոլորը ապշած մնացել են. Ամօթ ահար չեչենները տարածւած գետնին սպատում են իրանց մահու պատժին... բայց Շամիլը բարձրացնում է նրանց և ասում.

—Գնացէք ձեր ժողովուրդի մօտ ու պատասխանի տեղ պատմեցէք նրան աղն ինչ որ ալտեղ լսեցիք ու տեսաք:

Մութ է մնում և անհասկանալի մի բան. ալղ ինչպէս եղաւ որ «օգնական զօրք ուղարկելու մասին» Շամիլին պատգամաւորները ոչինչ չը բախնեցին, այն ժամանակ Շամիլը հաւանական է որ կ'ուղարկէր օգնութիւն և հարկ չէրլինի գուցէ հնազանգութեան մասին խօսել և հարւածները ոչ մալրը և ոչ ինքը կը ստանար:

Լ. Ա.

ԴՕԴԻ ԱԼՖՈՆՍ. —«ԲԵՐԼԻՆԻ ՊԱՇԱՐՈՒՄԻ»: Թարգմանութիւն Ս. Պետերբուրգ տալ. Սկօրօնօրօվի. 1880 թ. Տ.-Ճալ, 15 երես. № 12. դինը 2 կոպ.:

Շատ կենդանի գրած մի փոքրիկ հողերանական զրոյց է ֆրանկո—պրուսական պատերազմից. Պարիդում մի հալրենասէլ ծեր գնդապետ կաթւածահարով հիւանդ պառկած իւր մահճակալում ուշք ու մտքով կարութութիւններ. Պրուսացիք արագրում է ֆրանսիական զօրքի պատերազմական շարժումներով. Նորան

շրջապատողները իմանալով որքան վաս հետեանք կ'ունենալ հիւանդի առողջութեան վերակ Փրանսիական զօրքի մասին վաս լուրերը, ստիպած են հնարել և պատմել չեղած լաղթութիւններ. Պրուսացիք պէն Պարիզի պարիսպների աակ են, իսկ հալրենասէր գնդապետին մըա-

պատողները, հետեւելով նորա երևակաւ-
չական մարշրուտին, արդէն համա-
ձայնում են նորա հետ և պատմում
որ ֆրանսիական զօրքը շուտով չաղ-
թական մուտք կը գործէ Բերլին:

Պարիզը պաշարւած է և թնդանօթ-
ների որոտները գուժում են նորա
լանձնելը, իսկ զնդապետը կարծում
է թէ այդ ուրախութեան արտապաշ-
տութիւն է Բազէնի տարած չաղ-
թութեան համար Բերլինի մօտ:

Եւ ծեր զնդապետը արդէն երեա-
կալում է որ Մակ—Մահօնը իւր
չաղթական զօրքով ծաղիկների մէջ
կորած անցնում է Պարիզի զարդար-
ւած փողոցներով, և նորա կողքին

իւր սպալ որդին, իսկ ինքը պատշ-
կամբի վերաէ, իւր համազգեստը հա-
գին, չնորհաւորում է գդակներով ծա-
կոտած և վառօղից սևացած հալրենի
դրօշակները... նա ովտ է ստանում,

պատազինած դուրս գալիս պատշ-
կամբը, բայց ինչ... մեռելապին լոռ-
թիւն փողոցներում, ամեն տեղ ե-
րեւում են պրուսական դրօշակներ.
ահա հեռուից վազլեցին պրուսական
սաղաւարանները, լսեց Շուբերտի

լաղթական մարշը.

—Ի զէն, ՚ի զէն... պրուսացինե-
րը... գոչեց ծեր հալրենասէրը, ոյ-
ժերը թուլացան և վակը ընկաւ մեռած:

Լ. Ա.

„Объяснительный Словарь“ татарскихъ, грузинскихъ и армянскихъ словъ,
воведшихъ въ „Материалы для изученія экономич. быта Госуд. крестьянъ
Закавк. края.. Составилъ С. П. Зелинскій. Тифлісъ М. Д. Ротинянца, 1889 г.

Ինչպէս չափտնի է ընթերցողին մըւած է հմաւտ ձեռքով և ընդար-
կալւածների նախարարութիւնը վեր-
ջին ժամանակներս ուղարկեց հետա-
զուղողների մի խումբ նիւթեր ժո-
ղովելու արքունական գիւղացիների գրութիւնը բարւոքելու նպատակով:
Այդ նիւթերի մէջ, որոնք ուռւսերէն
լիւլով տպագրւեցին վերջին հինգ
տարւակ ընթացքում, հետազուղող-
ները դործ են ածել տեղական բա-
ռեր, անուններ, ասածւացքներ, ո-
րոնք օտար են ուռւսաց լիւլովն: Պր.
Ս. Զելինսկին ժողովին է այդ օտար
բառերը և կազմել մի առանձին բա-
ռաւարան, որ մեզ համար չատ և չատ
հետաքրքրական է, բառարանը կաղ-

ձակ բացարութիւններով. իսկ մի
քանի բառերի վերաբերմամբ նա
տալիս է հեղինակի սեպհական ու-
սումնասիրութեան հետեանք, աշդպէս
են համիա, մուշա, ոչխար (զօտն)
և ուրիշ բառերի բացարութիւն-
ները:

Տաստ ափուսալի է, որ բառա-
րանը կազմւած է մի սահմանափակ
շրջանի բառերի համար, միաւն ան
բառերի, որոնք մուտք են գործել
վերև վշած նիւթերի մէջ, բառերն
երեք տեսակ են, թուրքերէն, վրա-
ցերէն և հալերէն. ամենամեծ տեղը
բռնում են թուրքերէն բառերը, որ

աւելի մեծ թւով են մտել հետազօտութիւնների մէջ։ Հայերէն բառերի թիւը աւելի մեծ կարող էր լինել, եթէ իրանք հայերը հազորդած լինէն հետազօտողներին ալդ բառերը։ Նկատւած է, որ հայերը միայն հայերին են հայերէն բառ ասում, խակ օտարազգիներին՝ թուրքերին, ուստի սերին, վրացիներին ասում են թուրքերէն բառեր թարգմանելով հայերէնից։

Զելենսկու բառարանի մէջ գըտնում ենք երեք հարիւրից աւելի հայկական տեղական բառեր, որոնցից մի մասը նորութիւն է մեր զրականութեան համար։ Նա մանաւանդ հարուստ են գիւղատնտեսութեան վերաբերեալ բառերը։ Մեր թարգմանիչները, կամ մասնագէտ գրողները մեծ նեղութիւն են քաշում՝ երբ ցանկանում են մասնագիտական բառեր գործածել։ Զելինսկու բառարանը, իբրև փորձ, ապացուց է, որ հայ ժողովուրդը ամբարել է բազմաթիւ բառեր, որոնցից պէտք է օգուտ քաղել, հարստացնելով մեր զրական լեզուն։ Մի հասարակ բառ, զորօրինակ հունձից լեսու մի կամ մի քանի տարւայ համար անմշակ թողած հողը կրում է ըստ Զելինսկու բառարանի հետեւալ անունները՝ իմարաթ, վաստակ, կորամխո, փոչ, կեալ, լօնրան, ցետ, խամճար, խողնատել, չօփատեղ, ի հարկէ այս բառերից մի քանիսը բոլորպին համանիշ չէն, այլ արտակաբում են հողի անմշակ դրութեան մի լաւանի աստիճանը. բաց և աճնպէս համանալի է, թէ, մասնագէտի համար, որչափ մեծ նիւթ կամ մեր ժողովրդի բերանում։ Հողի

զանազան լատկութիւնները որոշում են ալսուեսակ բառերով. մսահող, լուսնահող, գութանը ունի խր բոլոր մասերի համար անուններ և երկու տեսակ ակնեգութան և կուեգութան։ Հետաքրքրական են այս տեսակ բառեր՝ խեղակ (սառ), ցարիւր (ուժասպառ, թուլացած ցորեն), համփալօր (կուլաք), գարնանի (գարնանցան) և այլն։

Մի քանի բառեր, որոնք վշատակւած են իբրև հայկական, վիճելի են, զորօրինակ գիւղեանա (ցորենի տեսակ), գիւլուլ (горошечкъ) զևագակ (զոմչահորթ), մակեա (մակարդ), սինի (սկուտղ), քիլա (չափի տեսակ), արխալուղ։

Մի քանի բառերի նշանակութիւնը կարելի է աւելի լրացնել, քան արել է Զելինսկին, զորօրինակ գիւղ բառը գործ է ածում նունպէս մի վնասակար խոտի համար, որ լաճախ գտնում է լեռներում և լատնի է լատինական caref անունով։ Մարդկան բառը լայանի է Գողթանում գափ անունով, սնուկ (головня) բառը երեանեան նահանգի մի քանի գիւղերում լայանի է մրիկ անոնցի, կեազ (граванъ) բառը երեանի զաւառում լաճախ արտասանում է կազ կամ գազ, խակ Գողթանում կրում է հուս կամ հոս անունը, ջեջը արտասանում է նոնպէս ջեճ և ճիճի, ջրայինի տեղ մի քանի տեղերում ասում են ջրարբի, գարմանոցի և զարնալարի տեղ զարմանանոց և զարնանավարի, աքեչը Գողթանում ասում է ակիչ։ Եխալ են գործածած շամբալափի համար օռօցչիօ և թանի համար сыնօրոտկա բառերը.

թանը — пахта կամ пахтаны-ն է, իսկ զելինսկու բառարանը այն տեսակ սարգածակութիւն է:

Զելինսկու բառարանը այն տեսակ պրքերից մէկն է, որ արժանի է օրինակ լինելու և իբրև աշխատանք չերմ կերպով իրախուսելու: Ցան-

կալի է, որ նորատեսակ աւելի ընսկածակ բառարան կազմէր ժողովրդական հարուստ լեզուի բառերը ժողովրդական համար:

Ա. Ք.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

1) ՊԱԼԱՍԱՆՆԵԱՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ.—«Պատմութիւն Հայոց ոկրքից մինչեւ օրերը»: Հրատարակութիւն «Թիֆլ. Ընկեր. հակերէն գրքերի հրատարակութեան»: Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1890, գինն է 1 ր. 50 կ.:

2) ՍՈՒՐԳԱՆԱՑ ԼԵՒԻՏ. —«Այց Թիւրքաց Հայաստանին» (Հայ առարիստ լրագութիւններից), արտադպած «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, տպ. Ռոմինեանցի, 1890, գինն է 60 կոպ.:

3) TER-MIKELIAN.—Ein Hirtenbrief des armenischen Katholikos und Patriarchen Makar I. Sonder-Abdruck aus den Jahrbüchern für protestantische Theologie Verlag von C. A. Schwetschke und Sohn in Braunschweig.

4) ՀՅՈՒՒԿԸ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ. Երրորդ գիրք, հրատարակիչ Մկրտիչ Բարխուդարեանց, տպարան: Մկրտ. Բարխուդարեանցի, 1890 թ., գինն է 2 ր.:

5) Труды Имп. Кавк. Общества Сельск. хоз. Мартъ—Апрѣль Май. № 3—5., тип. 1890, тип. Михеялсона.

6) ԿՈՒՍԻԿԵԱՆ Յ. Ս.—«Միք ձանանչնիրը» (Թիֆլիսի բարբառով ոտանակորով գրած) կօմեղիա երեք արարւածով և երկու պատկերով: Հրատարակութիւն Ն. Ս. Կուսիկեանի: Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 1890, գինն է 1 ր.:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՕՆԻԿ

ՌՕՍՍԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ: ՌԻՍՈՒՑՉԱԿԱՆ ՌՈՃԽԿՆԵՐ:

